Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՏԱՐՈՆ ՎԼԱԴԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (1991-1994ԹԹ.)

Երևան
ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Հրատարակչություն
2011

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.5(2Հ)
Հ 177

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը նվիրվում է ծնողներիս՝ Վլադիկ Աշոտի Հակոբյանի եւ Արմենուհի Գրիգորիի Շահինյանի պայծառ հիշատակին

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Վ.Ռ.Բալայան**

Գրախոս՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Է.Գ.Մինասյան**

Հակոբյան Տարոն Վլադիկի

Հ 17 ԼՂՀ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (1991-1994ԹԹ.) Տարոն Հակոբյան, Խմբ.՝ Վ.Ռ Բալայան. -Եր.: Էդիթ Պրինտ, 2011.- 208էջ

Աշխատության մեջ պատմագիտական հետազոտությունների, արխիվային հարուստ նյութերի, մամուլի եւ այլ փաստական տվյալների հիման վրա լուսաբանվում է հայոց նորագույն պատմության ամենաարդիական ու կարեւոր իրադարձություններից մեկի՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաեւ հայկական երկրորդ պետականության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման եւ պետական շինարարության պատմությունը:

Աշխատանքում զետեղված նյութը եւ դրա հիման վրա արված եզրակացությունները կարող են օգտագործվել Արցախի պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում, ուսումնական ձեռնարկներում եւ հայ ժողովրդի պատմությամբ զբաղվող մասնագետների կողմից:

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.5(2Հ)

© Հակոբյան Տ.Վ., 2011

ISBN 978-9939-52-374-3

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Գլուխ Ա.
ԼՂՀ-Ի ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ (1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1992 Թ. ՕԳՈՍՏՈՍ)

1. ԼՂՀ-ի հռչակման իրավաքաղաքական նախադրյալները: ԼՂՀ- ի հռչակումը 18
2. Ռազմաքաղաքական գործընթացները, իշխանական կառույցների եւ կանոնավոր բանակի կազմավորման սկիզբը (1991թ. սեպտեմբեր - 1992 թ. մայիս) 26
3. Պայքար ԼՂ-ի պետականության պահպանման եւ ամրապնդման համար (1992 թ. հունիս-օգոստոս) 92

Գլուխ Բ.
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԸ ԼՂՀ-ում (1992 թ. օգոստոս -1994 թ. մայիս)

1. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը եւ նրա գործունեությունը 123
2. ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջպետական հարաբերությունները եւ դրանց ազդեցությունը Արցախում պետական շինարարության գործընթացի վրա 135
3. Խաղաղարար միջնորդական առաքելությունները: Արմատական փոփոխությունները ԼՂՀ իշխանական համակարգում 156

ՎԵՐՋԱԲԱՆ 198
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 203

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Լեռնային Ղարաբաղը (ԼՂ), (պատմական Արցախ նահանգի մի հատվածը), լինելով պատմական Հայաստանի անբաժանելի մասը, խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1921 թ. ՌԿ(բ)Կ, Կովբյուրոյի հուլիսի 5-ի ապօրինի որոշումով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին (Ադրբեջանական ԽՍՀ)[1]: Այնուհետեւ, 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին»[2]: Սակայն նորաստեղծ մարզի սահմանների մեջ չընդգրկվեցին հարթավայրային Ղարաբաղի մեծ մասն ու արեւմտյան լեռնային շրջանները (ներկայումս ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից ազատագրված տարածքները):

Ադրբեջանի կողմից տասնամյակներ ի վեր կիրառված հակահայկական քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային եւ ազգային արժանապատվության ոտնահարումը ստեղծեցին ծայրահեղ լարված իրավիճակ: 1985 թ. հետո գորբաչովյան, այսպես կոչված, «վերակառուցման» քաղաքականությունը ԼՂ-ի հայությանը հնարավորություն ընձեռեց հանդես գալ իր ոտնահարված իրավունքների պաշտպանությամբ եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը (Հայկական ԽՍՀ) վերամիավորելու պահանջով:

1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց

[1] Տես՝ Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 650.
[2] Նույն տեղում, էջ 669-670:

ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցով Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների (ԳԽ) առջեւ միջնորդելու մասին[1]: Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1988 թ. փետրվարի 21-ին ընդունեց ժողովուրդների ինքնորոշման միջազգային սկզբունքներին հակասող որոշում[2], որով Ղարաբաղյան շարժումը որակվեց որպես «ծայրահեղական» եւ «նացիոնալիստական», ինչպես նաեւ՝ փորձ արվեց հիմնահարցի քաղաքական լուծումը փոխարինել տարբեր միջոցառումներով, ինչն էլ հարուցեց մարզի բնակչության խիստ դժգոհությունը:

Անտեսելով հայ բնակչության ինքնորոշման իրավունքը եւ նրա պահանջի իրավաքաղաքական հիմնավորվածությունը՝ Ադրբեջանը Մոսկվայի հովանավորությամբ նորից նախընտրեց հարցի կարգավորման, ավելի ճիշտ՝ մեռցման ոչ քաղաքակիրթ մեթոդները՝ կազմակերպելով էթնիկական զտումների գործընթաց: Սա արդեն քաղաքական ահաբեկչություն էր արցախահայության եւ ամբողջ հայ ժողովրդի հանդեպ: Խորհրդային զորքերի օգնությամբ հրկիզվեցին ու ավերվեցին մի շարք հայկական բնակավայրեր: Ողջ Ադրբեջանի տարածքում սկսվեց զանգվածային մարդաորս հայ բնակչության հանդեպ, կարծես կրկնվում էին 1915 թ. իրադարձությունները՝ ամենուրեք տեղահանված հայ բնակչություն եւ ·.ն-մեղ զոհեր: Այդ իրավիճակը պահպանվեց մինչեւ 1991 թվականը, երբ նշմարվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) լուծարման հեռանկարը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) ձեւավորվեց ԽՍՀՄ-ի լուծարման գործընթացում, ԽՍՀՄ պետական կառույցում ներառնված ազգային-պետական կազմավորման՝ ԼՂԻՄ-ի եւ

[1] «Սովետական Ղարաբաղ», 21.02.1988 թ:
[2] "Правда", 24.02.1988 г.

հայաբնակ Շահումյանի շրջանի հիմքի վրա: Հաշվի առնելով Հայաստանի հետ վերամիավորման պահանջի բավարարման անհնարինությունը ԽՍՀՄ-ում ու միջազգային որոշ կազմակերպություններում, ինչպես նաեւ դրանց կողմից խնդիրը որպես Հայաստանի՝ Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություն դիտելը, ինչը կարող էր անկասելի դարձնել ադրբեջանա-հայկական պատերազմը, ԼՂ իշխանությունները ընտրեցին մարտավարության միակ ճիշտ՝ փոխզիջումային տարբերակը՝ սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ հայտարարելու մասին Հռչակագիր[1]: Դրանով ԼՂ-ն, մի կողմից՝ իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից՝ հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորումից: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, եւ այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղորդում: Այսպիսով՝ ԽՍՀՄ-ի լուծարման հանգամանքներում նախկին Ադր. ԽՍՀ-ի տարածքում կազմավորվեցին երկու անկախ պետություններ. մեկը՝ ԼՂՀ-ն, մյուսը՝ Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ):

Ինչ խոսք, դյուրին չէ պատմությունը թարմ հետքերով շարադրելը: Գործընթացը շարունակական է, իսկ փաստերն ու իրադարձությունները ոչ բոլորն են առանց հույզերի միջամտության համակարգված ու իմաստավորված: Ուսումնասիրելով ԼՂՀ պետական շինարարության գործընթացը՝ անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ մեր նորագույն պատմության մի շարք կարեւոր, հատկապես՝ ԼՂՀ պետական շինարարության, երկու հայկական հանրապետությունների հարաբերությունների սերտաճման եւ առկա այլ քաղաքական խնդիրների մասին:

Ուսումնասիրության առարկան ԼՂՀ պետական շինարարության պատմությունն է, նրա գլխավոր դերակատարների՝ իշխանական մարմինների ստեղծման փուլերն ու իրավաքաղաքական

[1] «Հայաստանի Հանրապետություն», 03.09.1991թ.:

գործընթացները: Հետեւաբար, առանց խորամուխ լինելու մշակութային, սոցիալ-տնտեսական կացությանը վերաբերող հարցերի մեջ, անդրադարձ է կատարվել այնքանով, որքանով դրանք առնչվում են թեմային կամ վճռական ազդեցություն են ունեցել իրադարձությունների վրա: Միաժամանակ, նպատակ ունենալով խորքային քննության ենթարկել ԼՂՀ պետական շինարարության առանձնահատուկ կողմերը, հիմնականում ներկայացվել է ԳԽ-ի եւ կառավարության գործունեությունը՝ պահպանվելով գաղտնիության սկզբունքը:

Ձեռնարկելով աշխատանքը՝ նպատակ է դրվել բացահայտել նաեւ տվյալ ժամանակահատվածի քաղաքական եւ ռազմական որոշ գործիչների ներդրումը պետականության կերտման գործընթացում, որոնց մի մասը քաղաքական ուժերի բախումների արդյունքում առ այսօր դուրս է մնացել պատմության էջերից:

Աշխատության մեջ փորձ է արվել լուծել հետեւյալ խնդիրները.

1. ներկայացնել 1991-1994 թթ. ԼՂ-ի պետականության ստեղծման պատմությունը.

2. պետական շինարարության գործընթացը վերլուծել ըստ փուլերի.

3. բացահայտել ԼՂՀ ներքին ու արտաքին քաղաքական գործընթացների պատմական նշանակությունը եւ ազդեցությունը պետական շինարարության գործում.

4. վեր հանել պետականակերտման գործընթացում տեղ գտած որոշ ձախողումների պատճառները:

Ուսումնասիրությունը կատարվել է պատմականության ու պատմահամեմատական մեթոդով, պատճառների վերլուծությամբ, օրինաչափությունների հաշվառմամբ: Այն գրված է անաչառության սկզբունքով՝ պատմական ճշմարտության հիման վրա:

Ներկայացվող ուսումնասիրության աղբյուրագիտության հիմք են հանդիսացել ԼՂՀ պետական արխիվի, ԼՂՀ Ազգային ժողովի, Կառավարության, Պաշտպանության բանակի ընթացիկ արխիվների նյութերը:

Սակայն աշխատանքի ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ. ցավոք, ԼՂՀ պետական եւ ԱԺ ընթացիկ արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրությունները եւ պետական շինարարությանը վերաբերող որոշ արխիվային նյութեր չեն պահպանվել:

Ուստի, առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել նաեւ անձնական արխիվներ:

Այսպես, աղբյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախկին քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվը, որը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում թեմային վերաբերող այն նյութերը, որոնք պահվում են ԼՂՀ առաջին գումարման ԳԽ մամլո նախկին քարտուղար Գ. Բաղդասարյանի անձնական արխիվում:

Հիմնական սկզբնաղբյուրներից է ժամանակի մամուլը: Լայն տեղեկատվություն են պահպանում ԼՂՀ ԳԽ պաշտոնաթերթ «Արցախ», Պաշտպանության բանակի պաշտոնաթերթ «Մարտիկ» պարբերականները: Հետաքրքիր են ՀՀ մամուլի, հատկապես՝ «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր», «Ազգ», "Голос Армении", «Այժմ», «Հայ զինվոր» եւ այլ թերթերի նյութերը: Սակայն, մամուլի նյութերին վերաբերվել ենք քննադատաբար, քանի որ այդ խառը քաղաքական ու պատերազմական իրավիճակում միշտ չէ, որ իրադարձությունները օբյեկտիվ են ներկայացվել:

Կարեւոր սկզբնաղբյուրներ են իրադարձությունների մասնակիցների եւ ականատեսների հուշագրությունները, օրագրությունները ու փաստագրությունները: Այս ժանրի ստեղծագործությունների արժեքը կայանում է նրանում, որ, պարունակելով մանրամասնություններ, լրացնում ու հարստացնում են մեր պատկերացումները իրադարձությունների մասին, օգնում ամբողջականորեն հասկանալ դեպքերի զարգացման տրամաբանությունը, դրանց պատճառահետեւանքային կապը, պատասխանել բազմաթիվ հարցադրումների... Դրանք եւս, այլ սկզբնաղբյուրների հետ համեմատելու միջոցով, հարկ է ճշգրտել:

Ուսումնասիրության մեջ տեղ են գտել քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող քաղաքական գործիչների վկայություններ:

Իրենց ամբողջությամբ՝ օգտագործված սկզբնաղբյուրները հնարավորություն են տվել վերստեղծել ուսումնասիրվող շրջանի, ԼՂՀ պետական շինարարության գործընթացի ամբողջական պատկերը: Նշենք, որ արխիվային նյութերի, առանձին հուշագրությունների ուսումնասիրության ընթացքում ստացված տեղեկությունների մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

ԼՂՀ-ի հռչակումը եւ պետական շինարարության գործընթացը գիտական շրջանակներին քիչ հայտնի թեմաներից են: Նախ, գրեթե չկան պատմագիտական բնույթի աշխատանքներ: Հրատարակված գրականությունը հիմնականում ստեղծված է թարմ տպավորությունների ազդեցության տակ, ունի հրապարակախոսական ուղղվածություն եւ առավելապես նպատակ է հետապնդում միջազգային հանրությանը ներկայացնել ավելի շատ առանձին իրադարձություններ: Այլ կերպ ասած, եղած նյութերը հաճախ կրում են միակողմանի բնույթ եւ համակարգված չեն: Ավելացնենք, որ

ԼՂՀ-ի պետական շինարարության գործընթացի վերաբերյալ ուսումնասիրությունների սակավության փաստը պայմանավորված է նաեւ հիմնահարցի գիտական ուսումնասիրվածության ոչ բարձր աստիճանով, ինչի պատճառը քաղաքական նկատառումներն են:

Թեմային վերաբերող առանձին դրվագներ լուսաբանվել են ԼՂՀ-ում, ՀՀ-ում, ինչպես նաեւ սփյուռքում հրատարակված տասնյակ բազմաբնույթ գրքերում ու ժողովածուներում: Կանգ առնենք դրանցից այնպիսիների վրա, որոնք առավել նշանակալից են ուսումնասիրվող թեմայի տեսանկյունից:

ԼՂՀ-ի մասին անդրանիկ գրքույկներից մեկը[1], որը հրատարակվել է սփյուռքում, դրվատելի նախաձեռնության արդյունք է: Այնտեղ հակիրճ ներկայացված են Արցախի պատմաաշխարհագրական տվյալները, ինչպես նաեւ, որոշ ժամանակագրական թերություններով հանդերձ, անդրադարձ է կատարվել Արցախյան շարժման նախապատմությանը, ԼՂ պետականության կայացման գործընթացին ու արցախյան ազատամարտին:

ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախկին նախագահ Մ. Օհանջանյանի գրքույկում[2] վիճակագրական հավաստի տվյալների հիման վրա ներկայացված են ԼՂՀ-ում բոլոր կարգի ընտրությունները: Աշխատանքի համար հետաքրքրություն են ներկայացնում նշված գրքույկի՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեին եւ ԼՂՀ ԳԽ ժողովրդական պատգամավորների 1991 թ. ընտրություններին վերաբերող էջերը: Միաժամանակ հարկ է նշել, որ Մ. Օհանջանյանի տեսադաշտից դուրս են մնացել պետականակերտման հիմնահարցերի վերլուծությունները:

[1] Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն (Պատմական, աշխարհագրական, ազգաբաշխական, պատմաճարտարապետական տուեալներ), Անթիլաս (Լիբանան), 1992:
[2] Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն եւ ընտրությունները (1991-1998), Ստեփանակերտ, 1998:

Նույն թեմայի վերաբերյալ փաստագրական հարուստ նյութ է ժողովել Վ. Հարությունյանը[1]: Ուսումնասիրության համար հետաքրքիր են 4-րդ եւ 5-րդ հատորները, որոնցում, թեեւ ոչ համակարգված, բայց լայն տեղեկություններ ու տվյալներ կան ԼՂՀ պետական շինարարության գործընթացի, քաղաքական ու դիվանագիտական ձեռնարկումների, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական բախումների մասին: Սակայն պետական շինարարության գործընթացին վերաբերող որոշ քաղաքական դրվագներ հեղինակը շրջանցել է: Դրան հակառակ՝ Վ. Հարությունյանը շատ լավ է ներկայացրել Արցախյան շարժման նախապատմությունը[2]:

Ուշագրավ է նաեւ ՀՀ-ում ՌԴ-ի նախկին դեսպան Վ. Ստուպիշինի աշխատությունը[3]: Նա փորձել է վերլուծել իրադարձությունները, քննադատաբար է մոտեցել հակամարտության նկատմամբ Ռուսաստանի քաղաքական որոշ ուժերի սխալ դիրքորոշմանը: Աշխատությունում բացահայտվել է նաեւ մի շարք ռազմագործողությունների քաղաքական-դիվանագիտական աստառը:

Փաստագրական որոշ թերություններով հանդերձ՝ ԼՂՀ պետական շինարարության գործընթացին է անդրադարձել Հ. Աբրահամյանը[4]: Նա իր գրքում ներկայացրել է արցախահայության ազատագրական պայքարի ակնառու գործիչներից Հ. Գրիգորյանի գործունեությունը: Նույն հեղինակի մեկ այլ ծավալուն մենագրութ-

[1] Арутюнян В., События в Нагорном Карабахе. Хроника. Часть I: Февраль 1988г. – январь 1989г., Ереван, 1990, Часть II: Январь-декабрь 1989г., Ереван, 1993, Часть III: Январь-декабрь 1990г., Ереван, 1993, Часть IV: Январь 1991 г. – январь 1993г., Ереван, 1994, Часть V: Январь 1993г. – июль 1995г., Ереван, 1997, Часть VI: Июль 1995г.- май 1997г., Ереван, 1997.
[2] Հարությունյան Վ., Արցախյան հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, նույնի՝ Предыстория национально-освободительного движения Карабахских армян, Эчмиадзин, 2000.
[3] Ступишин В., Моя миссия в Армению, Москва, 2001.
[4] Աբրահամյան Հ., ճակատագրին ընդառաջ, Երեւան, 2001:

յան[1] մեջ պատմագիտական հետազոտությունների եւ փաստական տվյալների հիման վրա տրված է Ադրբեջանի բռնատիրության դեմ արցախահայության մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: Գրքում մեծ տեղ է հատկացված ԼՂՀ-ում պետական շինարարության ընթացքին: Իսկ վերջերս Հ. Աբրահամյանի կողմից տպագրվել է ԼՂՀ-ի ստեղծման գործընթացին վերաբերող փաստաթղթերի ժողովածու[2]: Երեք աշխատություններում էլ օգտագործված արխիվային փաստաթղթերի ու նյութերի մի մասը գիտական շրջանառության մեջ է դրվել առաջին անգամ:

Մի խումբ ուսումնասիրողներ արցախյան հիմնախնդիրը դիտարկել են միջազգային ու մարդու իրավունքների տեսանկյունից[3]: Այդ ուսումնասիրությունները հիմնականում տեսական բնույթի աշխատություններ են:

Մ. Հարությունյանն իր՝ Արցախյան պատերազմի եւ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմությունը լուսաբանող թեկնածուական ատենախոսության մեջ[4] ժամանակագրական

[1] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, 2007:
[2] Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար). Փաստաթղթեր, Երեւան, 2011:
[3] Барсегов Ю., Право на самоопределение – основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, его же, Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, том 1, Москва, 2008, Бальян Г., Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека. Серия книг N 1. Ереван, 1991, Золян С., Мирзоян Г., Нагорный Карабах и вокруг него...Глазами независимых наблюдателей (сборник материалов), Ереван, 1991, Оганесян Н., Карабахский конфликт. Этапы, подходы, варианты решения, Ереван, 1997, Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1997, его же, Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Ереван, 2005, Карабахский конфликт: на фронтах информационной или последний "Аккорд" 2005 года, Степанакерт, 2006, Золян С., Нагорный Карабах: Проблемы и конфликт, Ереван, 2001, Крылов А., Нагорный Карабах в геополитическом контексте XXI века, Москва, 2006.
[4] Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը եւ պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ.: Պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Երեւան, 2001:

առումով այլ պարբերացման է ենթարկել ԼՂՀ պետականության կայացումն ու պետական շինարարության գործընթացը: Սակայն հարկ է նշել, որ հեղինակը ամեն ինչ դիտել եւ ներկայացրել է վարդագույն ակնոցներով՝ ձեռնպահ մնալով տեղ գտած բացասական երեւույթների նկատմամբ քննադատական վերաբերմունքից:

Օրագրային գրառումների, վավերագրական ակնարկների ու գծանկարների մի յուրօրինակ հավաքածու է գրող-հրապարակախոս Զ. Բալայանի գիրքը[1], որտեղ նա անդրադարձել է ԼՂՀ պետականության կայացման եւ ներքին քաղաքական որոշ գործընթացների: Այդ գիրքը հիմնականում ունի քաղաքական-հրապարակախոսական բնույթ:

ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ա. Պետրոսյանը[2]: Հեղինակը ձգտել է փաստագրական նյութերի եւ հարցազրույցների միջոցով առավել ամբողջականորեն ներկայացնել ազգային-ազատագրական պայքարի նվիրյալի, պետական եւ քաղաքական գործչի կյանքի ու գործունեության բոլոր շրջանները՝ արժեւորելով նրա դերը ԼՂՀ պետականության կայացման գործում:

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ միջազգային միջնորդական նախաձեռնություններին է անդրադարձել Տ. Բալայանը[3]: Կատարված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել եւ գնահատել արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում առկա ձեռքբերումներն ու խոչընդոտները: Հետեւելով բանակցային գործընթացի դինամիկային՝ հեղինակն ուրվագծել է միջնորդների եւ հակամարտ կողմե-

[1] Բալայան Զ., Դժոխք եւ դրախտ, Երեւան, 1995:
[2] Պետրոսյան Ա., Արթուր Մկրտչյան, Երեւան, 2004:
[3] Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը եւ միջազգային դիվանագիտությունը. 1991-1994թթ., Երեւան, 2004:

րի դիրքորոշումների տարբերության պատճառները՝ կապելով դրանք միջազգային հարաբերություններում ծավալվող գործընթացների հետ:

Վ. Բալայանի՝ գիտական արժեք ներկայացնող մենագրությունում[1] համառոտ ներկայացվել են ԼՂ գոյապայքարի նորագույն ժամանակաշրջանը եւ թեմային առնչվող որոշ մանրամասներ:

«Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ.» (մեկ հատորով) հանրագիտարանը, բազմաբնույթ թերություններով հանդերձ (իրադարձությունների՝ քաղաքական նկատառումներով միտումնավոր եւ աղավաղված ներկայացում, պատմական դեմքերի գործունեության նկատմամբ աչառու վերաբերմունք եւ այլն), նոր երեւույթ է ազատագրական պայքարի պատմության լուսաբանման առումով: Այստեղ հատկապես քննադատական վերաբերմունքի են արժանի պետական շինարարության գործընթացը ներկայացնելու ասպարեզում եղած լուրջ անճշտությունները[2]:

ԼՂՀ խաղաղ բնակչության հանդեպ Ադրբեջանի ռազմական հանցագործություններին է անդրադարձել Լ. Մելիք-Շահնազարյանը՝ դրանք ներկայացնելով իր հուշագրություններում[3] եւ փաստագրական նյութերի վրա հիմնված աշխատության մեջ[4]:

Բ. Ուլուբաբյանի գրքում[5] պատմական իրադարձությունների մասին տեղեկությունները, մասնավորապես՝ խնդրո առարկա թեմային վերաբերող, բերված են ընդհանրացված ձեւով, առանց խոր վերլուծությունների:

[1] Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2002:
[2] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994թթ.: (Հանրագիտարան 1 հատորով), (Հ. Մ. Այվազյան գլխ. խմբ. տնօրեն եւ ուրիշներ), Երեւան, 2004:
[3] Мелик-Шахназарян Л., Гандзак, Неутраченный мир, Степанакерт, 1996.
[4] Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения НКР. Факты и комментарии, Ереван 1997.
[5] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցի վերաբերյալ հետաքրքիր վերլուծական նյութեր է պարունակում Քաղաքացիական հասարակության եւ տարածաշրջանի զարգացման ինստիտուտի հրատարակած ժողովածուն[1], որում տեղ են գտել քաղաքագետների, հակամարտությունների հարցերով գիտնական փորձագետների, քաղաքական գործիչների, Հարավային Կովկասի տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշումները, կարծիքները եւ մոտեցումները խնդրո առարկայի վերաբերյալ:

Ք. Քոքսը եւ Վ. Այբները արցախյան հիմնախնդիրը եւ նրա պատերազմական փուլերը դիտարկել են Թուրքիայի, Իրանի եւ Ռուսաստանի հակասական շահերի համատեքստում[2]:

Ծավալուն ժամանակագրություն է պարունակում ՀՅԴ Լիբանանի կենտրոնական կոմիտեի կողմից (Վ. Էթիմեզյանի խմբագրությամբ) հրատարակված ժողովածուն[3], որը հետաքրքիր է Արցախյան շարժմանը սփյուռքահայության արձագանքների, քաղաքական զարգացումների տեսանկյունից:

Ա. Աբասովը եւ Հ. Խաչատրյանը[4] ներկայացրել են ղարաբաղյան հակամարտության երկու կողմերի տեսակետները խաղաղ կարգավորման վերաբերյալ:

Ա. Արշակյանի գիրքը[5] ընդգրկում է արցախյան գոյապայքարի պատմությունը 1985-1992 թթ.: Նա բազմակողմանիորեն եւ հանգամանորեն է լուսաբանել խնդրո առարկայի հետ կապված

[1] Institute for Civil Society and Regional Development, "The Resolution of Karabakh Conflict: Principles, Aspects and Assessments"(The Analytical Survey), Yerevan, 2002.
[2] К. Кокс, Д. Айбнер, Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.
[3] Արցախի հետ, Ղարաբաղի համար, Պերյուր, 1990:
[4] Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, Москва, 2004.
[5] Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար. 1985-1992թթ., Երեւան, 2004:

հիմնահարցերը, սակայն հպանցիկ է ներկայացրել պետական շինարարությունը:

Տարածաշրջանի քաղաքական իրադրության մասին հետաքրքիր ժողովածու[1] է հրատարակվել Ռուսաստանի Դաշնությունում: Գրքում դիտարկվում են Կովկասյան տարածաշրջանում առկա տարածքային վեճերի ու էթնիկական հակամարտությունների պատմական արմատներն ու ակունքները:

Հայաստանի ազատագրված տարածքների եւ Արցախի հիմնախնդրի ուսումնասիրությունների մեկ այլ ժողովածուի հեղինակները (անվտանգության գծով փորձագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, իրավաբաններ, հոգեբաններ ու մշակութաբաններ) փորձել են վերլուծական ու փաստագրական հարուստ նյութերով վեր հանել ազատագրված տարածքների դերն ու նշանակությունը ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի անվտանգության հայեցակարգում[2]:

Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկներին նվիրված ակնարկաշարերի ու կենսագրական նյութերի ժողովածուների[3] հարուստ ժառանգություն է թողնվել ապագա ուսումնասիրողներին: Հրատարակվել են նաեւ Արցախյան ազատամարտի մասին պատմող մի շարք գրքեր[4], որոնք լուսաբանում են ազգային ազատագրական պայքարի ընթացքը:

[1] Спорные границы на Кавказе. Под ред. Бруно Коппитерса, Москва, 1996.
[2] Հայաստանի ազատագրված տարածքը եւ Արցախի հիմնախնդիրը. վերլուծական եւ փաստագրական նյութերի ընտրանի, ժողովածու, Երեւան, 2006:
[3] Նանագուլյան Ս., Արծիվները բարձունքներ են ստեղծում, Երեւան 1992, Բաղրյան Վ., Ավո. հուշապատում, Ստեփանակերտ, 1993, Մ. Սարենց, Բեկոր, Երեւան, 1994, Դավթյան Բ., Բաղդասարյան Ն., Դաս հայրենյաց, Երեւան, 1997, Եսայան Է., Բույլ նահատակաց, Երեւան, 1996, Դանիելյան Ա., Բեկորը ինչպիսին որ կար, Ստեփանակերտ, 2000, Առստամյան Գ., Ստեփանակերտ. փառքի հուշամատյան 1988-2004, Երեւան, 2005:
[4] Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր. Մարտակերտ 92, Վավերագրություն, Գիրք 1, Երեւան, 2000, Դանիելյան Կ., Արցախը չսանձած նժույգ, Երեւան, 2001, Պետրոսյան Ռ., Արցախ. պատերազմ, զինադադար, Երեւան, 2001, 274 էջ, Բաղրյան Վ.,

Մ. Սարգսյանը իր գրքում ներկայացրել է 1992-1993 թթ. ժամանակահատվածում ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում տեղ գտած որոշ քաղաքական գործընթացներ, ինչպես նաեւ փորձ է կատարել վերլուծել երկու հայկական պետությունների իշխանությունների միջեւ եղած տարաձայնությունների պատճառները: Սակայն հեղինակը խուսափել է որոշ կարեւոր քաղաքական գործընթացներ վերլուծելուց[1]:

Այս ամբողջ գրականության ուսումնասիրությունը հարստացրել է պատկերացումները հիմնախնդրի վերաբերյալ՝ թույլ տալով ավելի լայն համայնապատկերի վրա դիտարկել այն ու կատարել հիմնավորված եզրահանգումներ:

Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998, Բաղդասարյան Դ., Դիմակայություն, Երեւան, 1998, Դահրամանյան Կ., Օջախի գիրք. հողը կանչում է, գիրք Գ, Երեւան, 2005:
[1] Саркисян М., Нагорный Карабах: война и политика (1990-1993гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе, Ереван, 2010.

ԳԼՈՒԽ Ա

ԼՂՀ-Ի ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ (1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1992 Թ. ՕԳՈՍՏՈՍ)

1.ԼՂՀ-ի հռչակման իրավաքաղաքական նախադրյալները: ԼՂՀ-ի հռչակումը

1918-1923 թթ. արցախահայության ինքնորոշման համար պայքարը, տեւական ժամանակահատվածում մնալով անթեղված եւ գորբաչովյան «վերակառուցման ու հրապարակայնության» ուղղությամբ ապավինելով՝ 1988 թ. փետրվարի հայտնի դեպքերով վճռականորեն մտավ նոր փուլ: Ի սկզբանե հանդիսանալով ԽՍՀՄ-ի ներքին հիմնահարց՝ այն վերածվեց ռազմաքաղաքական անլուծելի թնջուկի, իսկ կայսրապետության փլուզման եւ Ադրբեջանի զավթողական քաղաքականության հետեւանքով այն միջազգայնացվեց:

Նկատենք, որ ԽՍՀՄ փլուզման նախաշեմին ԽՍՀՄ պետական բարձրագույն օրենսդիր ատյանը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունեց «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը[1]: Այս օրենքը հստակեցնում էր ոչ միայն բոլոր պետական կազմավորումների՝ միութենական հանրապետություններից մինչեւ ինքնավար շրջաններ, այլեւ հոծ ապրող ազգային խմբերի՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավական պայմանները: Օրենքի 3-րդ հոդվածում ասվում է. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անց է կացվում յուրաքանչյուր ինքնավարության հաշվով առանձին: Ինքնավար հանրապետությունների եւ կազմավորումների ժողովուրդներին է մնում ԽՍՀՄ-ում կամ դուրս

[1] «Արցախ», 26.08.1993թ.:

եկող միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաեւ իր պետական կարգավիճակի հարցը դնելու իրավունքը: Այն միութենական հանրապետությունում, որտեղ կան տվյալ վայրի բնակչության մեծամասնություն կազմող եւ հոծ թվով բնակվող ազգային խմբերի տարածքներ, հանրաքվեն հանրագումարելիս քվեարկության արդյունքները հաշվի են առնվում առանձին»[1]:

Այդ օրենքի ընդունման օրից հոծ ապրող ազգային խմբերը փաստորեն դարձան ԽՍՀՄ-ի լուծարման պարագայում ԽՍՀՄ պետական իրավունքի կրողներ:

Այսպիսով՝ հիմք ընդունելով 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը՝ Ադրբեջանի ԳԽ-ն 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունում է «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիր, որով Բաքուն հրաժարվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից եւ վերականգնում 1918-1920 թթ. գոյություն ունեցած ԱՀ-ի պետականությունը[2]: Իսկ հոկտեմբերի 18-ին ընդունեց պետական անկախության մասին սահմանադրական ակտ, որով Բաքուն ամրագրեց Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից հրաժարումը[3]:

Պետք է ընդգծել, որ Բաքուն, վերադառնալով 1918-1920 թթ. իրողություններին, վերականգնեց Ազգերի լիգայի կողմից դեյուրե չճանաչված մուսավաթական ԱՀ-ի պետականությունը, որը չուներ ճանաչված, լեգիտիմ սահմաններ եւ չէր վերահսկում ոչ

[1] «Արցախ», 26.08.1993թ.:
[2] ԼՂՀ արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) մամուլի կենտրոնի տրամադրության տակ եղած նյութերից:
[3] Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս., Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի, ագրեսիայի իրավաքաղաքական հետեւանքները եւ դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Երեւան, 2007, էջ 228-229:

Լեռնային Ղարաբաղը եւ ոչ էլ Նախիջեւանը[1]: Նկատենք նաեւ, որ Ադրբեջանի անկախությունը ընդունվեց ոչ թե հանրաքվեի արդյունքում, այլ հայտարարվեց հանրապետության գերագույն օրենսդիր մարմնի կողմից, որի կազմի մեջ չկար ներկայացուցիչ ոչ ԼՂԻՄ-ից եւ ոչ էլ ուրիշ հայաբնակ տարածքներից:

Նշված հռչակագրի ընդունումից երկու օր անց՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին, ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդները գումարեցին համատեղ նիստ: Օգտվելով նույնպես վերը նշված օրենքից՝ ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին հռչակագիր»,[2] որը ժողովրդի կամքին թողեց այս հռչակագրի վերաբերյալ իր համաձայնությունն արտահայտելու իրավունքը: Նիստը ընդունեց որոշում, ըստ որի՝ ԼՂՀ տարածքում գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը եւ օրենսդրությունը:

Ինչպես ԱՀ-ի պետական անկախության վերականգնման, այնպես էլ ԼՂՀ-ի հռչակումը անհրաժեշտ իրավական նորմերը պահպանելու պարագայում պետք է իրականացվեին միեւնույն պետական իրավական բազայի՝ ԽՍՀՄ օրենքների հիման վրա, սակայն կողմերի դիրքորոշումները տարբերվում էին եւ դրանում:

Այսպես, «ԼՂՀ հռչակման մասին» հռչակագիրն ընդունվել է՝ հիմնվելով ԽՍՀՄ գործող Սահմանադրության եւ օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին եւ հոծ ապրող ազգային խմբերին ԽՍՀՄ-ից կամ միութենական հանրապետություններից դուրս գալու դեպքում տալիս են իրենց պետահրավական կարգավիճակի մասին հարցի ինքնուրույն լուծման իրավունք: Իսկ ԱՀ-ի պետական անկախության վերականգնման մասին հռչակագիրն ընդունվեց ԽՍՀՄ քաղաքական-իրավական դրույթների չճանաչման դիրքերից:

[1] Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Երեւան, 2003, էջ 166:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 03.09.1991թ.:

Այսպիսով՝ ԼՂՀ-ն հռչակվեց արցախահայության համար դժվարին ժամանակահատվածում, ռազմաքաղաքական բարդ պայմաններում: Այնուհանդերձ, անկախ պետականության հռչակումը նոր խթան հանդիսացավ Ադրբեջանի ագրեսիային դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ու խաղաղ աշխատանքն ապահովելու համար: Պետական շինարարության ու զինված ուժերի կազմավորման գործընթացներին զուգահեռ տեղի էին ունենում զինված ընդհարումներ ու տեղային նշանակության մարտեր, ինչպես նաեւ չդադարող հարձակումների եւ գնդակոծությունների էին ենթարկվում ԼՂՀ բնակավայրերը:

Առճակատման խորացմանը զուգընթաց՝ արմատական քաղաքական փոփոխություններ կատարվեցին նաեւ ԽՍՀՄ-ում: 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական խոշոր պետությունները՝ Ռուսաստանը, Ուկրաինան եւ Բելառուսը, ստորագրեցին համաձայնագիր, որով հայտարարեցին ԽՍՀՄ-ի՝ որպես միջազգային սուբյեկտի եւ աշխարհագրական իրողության գոյության դադարեցման մասին[1]: Այլեւս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ. Գորբաչովը ստիպված էր հրաժարական տալ: Ի դեմս նրա՝ Ադրբեջանը կորցրեց իր ամենահզոր հովանավորին: Ադրբեջանը երես առ երես մնաց ազատության ուղին բռնած ու հետդարձի կամուրջները վառած Ղարաբաղի հայության հետ: Իր ազատությունն ու իրավունքները ընդհուպ մինչեւ զենքի ուժով պաշտպանելու ընդունակ արցախահայությանը հաջողվեց խուսափել սահմանադրական առճակատումից Ադրբեջանի հետ՝ նրա կազմից դուրս գալու եւ իր անկախության հաստատման ժա-

[1] «Հայաստանի Հանրապետություն», 10.12.1991թ.:

մանակ, ու հետեւել ԽՍՀՄ օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի բոլոր նորմերին:

ԼՂՀ-ի կայացման հետագա իրավական ձեւակերպումը 1991 թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեն էր, որը պետք է հստակեցներ վերոհիշյալ՝ սեպտեմբերի 2-ի ԼՂՀ-ի անկախության մասին Հռչակագրի նկատմամբ բնակչության վերաբերմունքը: Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը եւ արդյունքների ամփոփումն իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմվել է 81 ընտրատարածք: Ընտրատարածքների ցուցակը եւ տարածքների ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Ընտրողների ցուցակներում ընդգրկված էր ձայնի իրավունք ունեցող 132.328 մարդ[1]:

Հանրաքվեի հարցը ձեւակերպվել է այսպես. «Համաձա՞յն եք Դուք, որպեսզի հռչակված ԼՂՀ-ն լինի անկախ պետություն՝ ինքնուրույն որոշելով համագործակցության ձեւը պետությունների եւ ընկերակցությունների հետ»:

Նշված հարցով (երեք լեզուներով՝ հայերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն) քվեաթերթիկները պարունակում էին «այո» եւ «ոչ» բառերը, որոնցից անցանկալին պետք էր ջնջել: Նշված լեզուներից մեկով (ըստ ընտրողի ցանկության) գրված քվեաթերթիկը տրվում էր անձնագրի ներկայացմամբ եւ ստորագրությամբ:

Հանրաքվեին մասնակցել է 108.736 մարդ, ինչը կազմում է գրանցված ընտրողների թվի 82,2 տոկոսը: Պետք է փաստել, որ քվեարկության չմասնակցածների գերակշիռ մեծամասնությունը ադրբեջանական բնակավայրերի բնակիչներն էին, որոնք օգտագործեցին իրենց իրավունքները՝ չմասնակցելով հանրաքվեին, եւ այդ քայլը կատարվեց ադրբեջանական ղեկավարության սադրանքով, որի նպատակն էր իրավական հակամարտությունը վերափոխել էթնիկականի:

Հարցման ենթարկվածների 99,8 տոկոսն արտահայտվեց անկախ ԼՂՀ-ի հռչակման օգտին: Հարկ է նկատել, որ հանրաքվեն անցել է միջազգային ընդունված նորմերին համապատասխան, նախկին ԽՍՀՄ ԳԽ, ՌԴ ԳԽ, Մոսխորհրդի ժողպատգամավորների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, անկախ դիտորդների՝ թվով 23 մարդ, ներկայությամբ: Հանրաքվեին հետեւում էին նաեւ ԱՄՆ-ի, Բուլղարիայի եւ Ռուսաստանի հեռուստատեսությունների, «Ֆրանս-պրես», «Կոտիդիեն դե Պարի» (Ֆրանսիա), Իսպանիայի տեղեկատվական գործակալությունների, Մեծ Բրիտանիայի ֆոտոգործակալության, «Մեգապոլիս էքսպրես», «Իզվեստիա», «Մոսկովսկիե նովոստի», «Լիտերատուրնայա գազետա», «Ստոլիցա», «Պանորամա» պարբերականների, «Ռադիո Ռոսիի», «Էխո Մոսկվի» ռադիոկայանների լրագրողներ: Աշխարհի բոլոր խորհրդարաններին, հասարակական, իրավապահպան, կրոնական կազմակերպություններին հղված դիմումի մեջ նրանք փաստեցին կատարված իրավական ակտի վավերականությունն ու օրինականությունը, կոչ անելով պաշտպան կանգնել ԼՂՀ բնակչության արդար պահանջին: Դիտորդները գտան նաեւ, որ Ռուսաստանը պետք է հավաստի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու իր պատրաստակամությունը եւ լինի Ղարաբաղի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը: Առաջարկվում էր; մինչեւ նախկին ԽՍՀՄ բանակի ստորաբաժանումների հեռանալը Ղարա-

[1] Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն եւ ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփանակերտ, 1998, էջ 5:

բաղից, հայերին վերադարձնել նրանց աջակցությամբ Ադրբեջանի զավթած ղարաբաղյան 24 գյուղերը[1]:

Արցախահայության ինքնորոշումը չէր խախտում միջազգային ոչ մի հիմնարար, այդ թվում եւ պետության տարածքային ամբողջականության սկզբունք: Որոշ իրավաբան-միջազգայնագետներ փորձում են ապացուցել, թե ինքնորոշման իրավունքի իրագործումը տարածվում է բացառապես այն ժողովուրդների վրա, որոնք գտնվում են գաղութատիրական կայսրության կազմում կամ շահագործման տակ: Սակայն այս փաստարկը բավարար իրավաբանական հիմք չունի: Ազգերի ինքնորոշման իրավունքը, առանց գաղութային կամ այլ ժողովուրդների տարբերակման, արտացոլված է միջազգային բոլոր հիմնարար փաստաթղթերում: Իսկ ՄԱԿ-ի կանոնադրության 55-րդ հոդվածի համաձայն, ազգերի իրավահավասարության եւ ինքնորոշման սկզբունքի հարգումը ժողովուրդների միջեւ խաղաղ եւ բարեկամական հարաբերությունների հիմքն է: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970 թ. թիվ 2625 (XXV) բանաձեւի համաձայն, «ընդհանուր նույնականությամբ եւ որոշակի տարածք ունեցող բոլոր ինքնանույնականացած խմբերը իրավունք ունեն ժողովրդավարական ձեւով կոլեկտիվ որոշել իրենց քաղաքական ապագան եւ ազատ լինել պարբերական հետապնդումից: Տվյալ խմբերի համար ինքնորոշման սկզբունքը կարող է իրագործվել տարբեր միջոցներով՝ ներառելով դաշնային սուբյեկտի սահմաններում ինքնավարությունը, պետությունների համադաշնությունը, ազատ միությունը (ասոցիացիան), իսկ որոշակի պայմաններում՝ նաեւ լիակատար անկախությունը»[2]: Բացի այդ, միջազգային դատարանը արձանագրել է, որ ինքնորոշման սկզբունքը վերափոխվել է սովորական միջազգային իրավունքի,

[1] «Հայաստանի Հանրապետություն», 14.12.1991թ.:
[2] http://www.nkrusa.org/nk_conflict/legal_folder.htm

որը բոլոր պետությունների համար կիրառելի է եւ պարտադիր՝ իրագործման համար[1]:

Այն, որ ազգերի ինքնորոշման իրավունքը տարածվում է ոչ միայն գաղութային ժողովուրդների վրա, այլեւ ունի համապարփակ նշանակություն, վկայում են եւ վերջին ժամանակներս ընդունված միջազգային մի շարք փաստաթղթեր: Դրանց մեջ հատուկ տեղ է գրավում ԵԱՀԿ-ի Եվրոպական անվտանգության խարտիան, որը 1999 թ. նոյեմբերին ընդունվել է Ստամբուլում, եւ որի տակ, ի դեպ, իր ստորագրությունն է դրել նաեւ Ադրբեջանը: Խարտիայում նշված է, որ ազգային փոքրամասնություններին վերաբերող հակամարտությունները կարող են դրականորեն լուծվել միայն ժողովրդավարական կազմավորումներում, իսկ ոչ ժողովրդավարական երկրներում, ինչպիսին Ադրբեջանն է, ինքնորոշման սկզբունքը գերակայություն ունի տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ[2]:

Այսպիսով՝ ԼՂ պետականության կայացման ճանապարհին կարեւոր քայլ հանդիսացավ 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն: Այս հանրաքվեով ԼՂ ժողովուրդը հաստատեց անկախ պետություն ունենալու իր հավաքական կամքը: Ի դեպ, ԼՂԻՄ-ը միակն էր նախկին խորհրդային ինքնավարությունների շարքում, որին անկախացման ընթացքում հաջողվեց շրջանցել իրավական բնույթի բոլոր ծուղակներն ու սահմանադրական փակուղիները:

[1] Նույն տեղում:
[2] ԼՂՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի տրամադրության տակ եղած նյութերից:

2. Ռազմաքաղաքական գործընթացները, իշխանական կառույցների եւ կանոնավոր բանակի կազմավորման սկիզբը (1991 թ. սեպտեմբեր - 1992 թ. մայիս):

Մինչեւ ԼՂՀ-ի հռչակումը եւ ԳԽ ընտրությունները, ԼՂ-ում որոշ չափով պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության մարմինները: Սակայն նրանց գործունեությունը թեեւ հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր Ադրբեջանի կազմից դուրս գալու եւ ինքնուրույն պետականություն ստեղծելու նպատակները հետապնդող համաժողովրդական շարժման խնդիրներին: Դրանք, հատկապես Շարժման առջեւ կանգնած քաղաքական ու դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում ժողպատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը, ոչ միայն ցուցաբերում էին մեծ ակտիվություն, այլեւ դարձել էին բոլոր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն: Սակայն մարզում ստեղծված իրադրությամբ եւ նրա զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում մարզգործկոմի ղեկավարության կողմից ցուցաբերվող նկատելի երկչոտությունը պահանջում էր ամրապնդել մարզի ղեկավարությունը: Հենց այդ նպատակն էր հետապնդում մարզային խորհրդի գործկոմի 1991 թ. հունիսի 11-ի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ղեկավարները, ԼՂԻՄ շրջգործկոմների նախագահները: Քննարկելով մարզում ստեղծված աղետալի վիճակը՝ ակտիվը որոշեց ձեռնարկել կազմակերպչական անհետաձգելի միջոցներ՝ ընդունելով մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի հրաժարականը: Նախագահի պարտակա-

նությունների կատարումը դրվեց նրա առաջին տեղակալ Լ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ-ի հռչակման մասին 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունված Հռչակագրում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը ճանաչվեցին որպես ԼՂՀ պետական իշխանության եւ կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչեւ համաժողովրդական ընտրությունների անցկացումը, իշխանության ու կառավարման հանրապետական մարմինների ձեւավորումը[2]:

Սակայն Արցախի պետականության հիմքերը դնելու համար հույժ կարեւոր այս գործընթացներն արագացնելուն խոչընդոտում էին ԽՍՀՄ-ի լուծարման նախաշեմին երկրում ստեղծված խառնաշփոթ, կատարելապես անորոշ իրավիճակը եւ օրեցօր սաստկացող ադրբեջանական ագրեսիան: Միջազգային հարաբերությունների այս նոր պայմաններում, ժամանակի քաղաքական պահանջներին համապատասխան՝ Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահները ստանձնեցին միջնորդի դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում[3]: Դա էլ հենց կարելի է համարել առաջին տեւական միջնորդությունը:

1991 թ. սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտ ժամանեցին Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) եւ Ղազախստանի Հանրապետության նախագահներ Բ. Ելցինը եւ Ն. Նազարբաեւը: Նրանց ուղեկցում էր Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը: Ստեփանակերտ կատարած այցից հետո՝ սեպտեմբերի 23-ին, Ժելեզնովոդսկում նրանց հովանու ներքո կայացան բանակցություններ Ադրբե-

---

[1] Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1993г.-июль, Ереван, 1997, с. 26 (այսուհետեւ՝ Հարությունյան Վ.):
[2] Նույն տեղում, էջ 73:
[3] Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը եւ միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երեւան, 2004, էջ 24:

ջանի եւ Հայաստանի ղեկավարների միջեւ, որոնց արդյունքում ընդունվեց համատեղ կոմյունիկե[1]: Ցանկանում ենք նշել, որ փաստաթղթի ստորագրմանը մասնակցում էին ԼՂՀ ներկայացուցիչները՝ միայն դիտորդի կարգավիճակով:

Սակայն այն չհանգեցրեց ԼՂ-ի իրավիճակի բարելավմանը: Ընդհակառակը, ադրբեջանական կողմը կտրուկ սաստկացրեց հրետակոծումները եւ հայկական բնակավայրերի վրա կատարվող հարձակումները, որոնք բազմաթիվ զոհերի եւ ավերածությունների պատճառ դարձան:

Հոկտեմբերի 15-ին, Ժելեզնովոդսկում ընդունված փաստաթղթի կատարման ընթացքին ծանոթանալու համար, Բաքու ժամանեցին Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահների ներկայացուցիչները: Նրանց ընդունելով՝ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը հայտարարեց, թե ԼՂ-ի հարցը իրավազոր է լուծելու միայն Ադրբեջանը, եւ ոչ ոք չպետք է միջամտի նրա ներքին գործերին: Միաժամանակ Բաքվում ամեն օր տեղի էին ունենում Ադրբեջանի ժողովրդական ճակատի հակահայկական հանրահավաքներ, որտեղ Ղարաբաղը նվաճելու նպատակով կանոնավոր բանակ ստեղծելու կոչեր էին հնչում[2]:

Ինչ վերաբերում է բուն միջնորդությանը, կարծում ենք, որ այն պայմանավորված էր մի շարք քաղաքական շահենկատ գործոններով: Ելցինին եւ Նազարբաեւին անհրաժեշտ էր ցույց տալ, որ ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններն ի վիճակի չէին լուծել ղարաբաղյան հիմնախնդիրը, իսկ ավելի թարմ ուժերը, նոր մտածողությամբ գործիչները կարող էին: Անշուշտ, Ելցինը, կանխատեսելով ԽՍՀՄ-ի լուծարումը, պետք է փորձեր պահպանել Ռուսաստանի առաջատար դերը տարածաշրջանում: Բացի այս նպատակից, Ելցինը նաեւ ցանկանում էր ցույց տալ, որ իրական իշխանությունն իրեն է պատկանում եւ փորձում էր իր հեղինակությունը բարձրացնել միջազգային ասպարեզում: Իր առաքելությանն ավելի մեծ կշիռ եւ հեղինակություն տալու համար Ելցինը նախաձեռնության մեջ ներգրավեց Ղազախստանի՝ ԽՍՀՄ-ի հեղինակավոր հանրապետություններից մեկի նախագահ Ն. Նազարբաեւին: Անշուշտ, իրենց դերն էին խաղացել նաեւ Ղազախստանի էթնոմշակութային կապերը թուրքալեզու եւ մուսուլմանական պետությունների հետ[1]: Բացի դրանից, այդ ժամանակ նկատվում էր Անկարա-Ալմաթա-Բաքու մերձեցումը. հետեւապես՝ Ղազախստանն այդ ժամանակաշրջանում անուղղակիորեն վայելում էր նաեւ Թուրքիայի համակրանքը:

Այսպիսով՝ Ադրբեջանի կողմից Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելության ձախողումը մեկ անգամ եւս ապացուցում է, որ Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով ԽՍՀՄ-ում ստեղծված ներքաղաքական ճգնաժամից, գերադասում էր հակամարտությունը լուծել միայն ռազմական ճանապարհով:

Ինչպես տեսանք, Ժելեզնովոդսկում ձեռք բերված համաձայնությունները եւ հրապարակված կոմյունիկեն չնպաստեցին տարածաշրջանում իրադրության կայունացմանը, եւ նշմարելի էր դառնում վերահաս լայնամասշտաբ պատերազմի ուրվականը:

Ազատագրական շարժման ղեկավարների առջեւ հրատապ խնդիր դրվեց՝ ստեղծել պատերազմական իրավիճակին համապատասխան իշխանական մարմիններ եւ առաջին հերթին՝ կանոնավոր բանակ:

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ 1991 թ. հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում հրավիրվեց արտադրական ձեռնարկութ-

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., 81-83:
[2] http://www.nkr.am/arm/history/voina.htm.

[1] Բալայան Տ., նշվ. աշխ., էջ 24:

յունների տնօրենների խորհուրդ՝ Ա. Մանուչարովի գլխավորությամբ: Նիստին մասնակցում էին հանրապետության ղեկավար կազմը եւ շրջանների ներկայացուցիչները: Տնօրենների խորհուրդը հանրապետության ղեկավարների առաջ հարց դրեց՝ ստեղծել ԼՂՀ պաշտպանության խորհուրդ եւ բոլոր զինված ջոկատները միավորել հայրենիքը պաշտպանելու համար[1]:

Հոկտեմբերի երկրորդ կեսից հանրապետությունում զինված ընդհարումները առավել հաճախակի էին դարձել: Թշնամու հարձակումներին դիմակայելու նպատակով, դեռեւս նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը (ԻՊՈՒ), չունենալով բավարար միջոցներ, այս ու այնտեղ պատասխան գործողությունների էին դիմում՝ վնասազերծելով ադրբեջանական ռազմական հենակետերը:

Այսպես, հոկտեմբերի 31-ին հայ ազատամարտիկները ՀՀ պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Ա. Տեր-Թադեւոսյանի՝ «Կոմանդոսի» գլխավորությամբ հանկարծակի եւ շեշտակի գրոհով ազատագրեցին Տող գյուղի ադրբեջանական մասը, ինչը մեծ ոգեւորություն առաջացրեց հայկական ուժերի մեջ: Գործողությունների նմանօրինակ արագաթափ զարգացումը հուշեց, որ մոտալուտ արհավիրքներին դիմակայելու համար նորընծա հանրապետությանն անհրաժեշտ է առանձին-առանձին գործող ֆիդայական ջոկատներից ստեղծել մարտունակ բանակ[2]: Ու սկսեց գրվել մարտական փայլուն կենսագրություն, որի առաջին էջը դարձան հիմնականում Հադրութի եւ Մարտունու շրջաններում ծավալված մարտական գործողությունները, որոնց ընթացքում ճնշվեցին Հալիֆշա (6.11), Հախուլլու (7.11) եւ Խոջավենդ (19.11) բնակավայրերի կրակակետերը, ազատագրվեցին Սարիշեն, Ծամծոր (15.11) ու Քարագլուխ (20.11) գյուղերը[1]:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 88:
[2] Բալայան Վ., Արցախի պատմություն, հնադարից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2002, էջ 366:

Նոյեմբերից Ադրբեջանի կողմից լայնածավալ զինված ագրեսիա սկսվեց ԼՂՀ-ի դեմ: Առաջին անգամ խաղաղ բնակավայրերի վրա կիրառվեց միջազգային համաձայնագրերով արգելված զանգվածային ոչնչացման զենք[2]: Նոյեմբերի 29-ին ռմբակոծվեցին Ստեփանակերտ եւ Ասկերան քաղաքները, Խնածախ, Հարավ, Շոշ, Ավդուռ եւ Մյուրիշեն գյուղերը՝ հանգեցնելով բազմաթիվ զոհերի եւ ավերածությունների:

Մինչ այդ՝ նոյեմբերի 20-ին, Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի տարածքում չպարզված հանգամանքներում աղետի ենթարկվեց ադրբեջանական «ՄԻ-8» ռազմական ուղղաթիռը, որի հետեւանքով զոհվեց 20 մարդ, այդ թվում՝ ԼՂ-ի ռազմական պարետը, Ադրբեջանի ՆԳՎ պետը, դատախազը, ՊԱԿ-ի պետը, Ռուսաստանի եւ Ղազախստանի ներկայացուցիչները Ադրբեջանում, ինչպես նաեւ Ադրբեջանի մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

1991 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանի ԳԽ-ն որոշում ընդունեց ԼՂԻՄ-ի լուծարման մասին[3]: ԼՂԻՄ-ը վերացվում էր որպես ազգային-տարածքային կազմավորում, իսկ նրա շրջաններն ու բնակավայրերը անվանափոխվում եւ վերաենթարկեցվում էին նորաստեղծ վարչական կենտրոններին: Երկու օր անց ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն ընդունեց որոշում Ադրբեջանի եւ Հայաստանի ԳԽ ակտերի վերաբերյալ: Սահմանադրա-

[1] Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը եւ պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Երեւան, 2001, էջ 33, (տես՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):
[2] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 365:
[3] "Бакинский рабочий", 07.01.1992 г.

կան վերահսկողության կոմիտեն դատապարտեց ԼՂԻՄ-ը լուծարելու մասին Ադրբեջանի օրենսդիր մարմնի ակտը, որը խախտում էր ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված ԼՂԻՄ-ի կարգավիճակը: ԽՍՀՄ Սահմանադրության խախտում համարվեց նաեւ Հայաստանի ԳԽ-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ ԼՂ-ի վերամիավորման մասին» որոշումը: Բայց ԼՂՀ-ի հռչակումը հակասահմանադրական չհամարվեց, ինչը փաստորեն նշանակում էր ԼՂՀ-ի իրավականության եւ Ադրբեջանի կազմից նրա դուրս գալու իրավասության ճանաչում[1]:

Այնուամենայնիվ, տվյալ պարագայում Արցախի վիճակն ավելի ու ավելի էր ծանրանում: Բացի ռազմական ագրեսիայից, տնտեսական կացությունը ԼՂՀ-ում մնում էր անմխիթար: Հանրապետությունը գտնվում էր լրիվ շրջափակման մեջ: Նշենք, որ օգոստոսի 24-ից դադարեցվել էին ինքնաթիռների թռիչքները Ստեփանակերտի օդանավակայանից, սեպտեմբերից Ստեփանակերտի երկաթուղային կայարան մուտք չէր գործել ոչ մի շարժակազմ, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէին աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկության ավտոմեքենաները, Ստեփանակերտում դադարեցվել էր էլեկտրաէներգիայի մատակարարումը, խիստ վտանգի տակ էր նաեւ գազի մատակարարումը, արդեն զգացվում էր առաջին անհրաժեշտության ապրանքների պակասը[2]: Դրան զուգընթաց՝ նոյեմբերի վերջերից ամեն օր ռմբակոծվում էին ԼՂՀ բնակավայրերը, հատկապես՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Ավերվեցին տասնյակ բնակելի շենքեր, պետական եւ արտադրական օբյեկտներ, այդ թվում՝ մարզկոմի եւ մարզխորհրդի շենքերը, կենտրոնական հեռագրատունը: Մարզխորհրդի

[1] Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1997, с. 107-111.
[2] Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երեւան, 2001, էջ144:

եւ ԻՊՈՒ ղեկավարության հրահանգով կարգի էին բերվում քաղաքի բնակելի, հասարակական շենքերի ներքնահարկերը՝ որպես ապաստարաններ[1]:

Տարածաշրջանում ռազմաքաղաքական մթնոլորտը ավելի շիկացնելու եւ մարտական գործողություններին նոր թափ հաղորդելու համար Ադրբեջանը որպես առիթ օգտագործեց ԼՂՀ-ում հանրաքվեի անցկացումը: Այսպես, դեկտեմբերի 10-ին՝ հանրաքվեի օրը, տարբեր զինատեսակների կիրառմամբ ուժգին հրետակոծվեցին Ստեփանակերտ քաղաքն ու հարակից բնակավայրերը: Զոհվեց 10 եւ վիրավորվեց 11 հայ խաղաղ բնակիչ[2]:

ԻՊՈՒ-ի առաջ դրվեց առաջնահերթ խնդիր՝ վնասազերծել ռազմական խոշոր հենակետերի վերածված ադրբեջանական այն գյուղերը, որտեղից գնդակոծության եւ հրետակոծության տակ էին պահում Ստեփանակերտն ու հարակից բնակավայրերը:

Դեկտեմբերի 25-ին եւ 26-ին Արցախից դուրս բերվեցին նախկին ԽՍՀՄ-ի ներքին զորքերի ստորաբաժանումները, ինչի հետեւանքով անպաշտպան մնացին ԼՂՀ-ի բազմաթիվ բնակավայրեր եւ ժողովրդատնտեսական կարեւոր օբյեկտներ, իսկ սահմանագծի ողջ երկայնքով սկսվեցին ադրբեջանական զինված ուժերի հարձակումները: Ադրբեջանցիների ակտիվությունը թերեւս պայմանավորված էր նրանով, որ հասցրել էին Արցախ տեղափոխել մեծ քանակությամբ զինված ստորաբաժանումներ: Ստեղծված իրադրությունում ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր ունեին ուժեղացնել ժողտնտեսական օբյեկտների պաշտպանությունը՝ ներգրավելով խաղաղ բնակչությանը, ինչպես նաեւ ստեղծել առանձին ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տագնապալից իրավիճակի թելադրան-

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 93:
[2] Օհանջանյան Մ., նշվ. աշխ., էջ 8:

քով Ա. Տեր-Թադեւոսյանին հանձնարարվեց անհապաղ ավարտել զինված խմբավորումների կազմավորումը: Հայ ազատամարտիկները ստիպված էին ներքին պայմանավորվածության հասնել ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումների հրամանատարության հետ եւ նրանց դուրս բերման պահին առգրավել որոշակի քանակությամբ զենք եւ զինամթերք[1]:

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձեւավորման գործընթացը: Պետական եւ ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[2]: Կազմավորվեց 81 ընտրատարածք[3], այդ թվում նաեւ բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար եւ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի եւ ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը եւ չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել

[1] Т. де Ваал, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2005, с. 228.
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 147:
[3] Օհանջանյան Մ., նշվ.աշխ., էջ 12:

հանրաքվեին: Դրա փոխարեն, սակայն, ընտրությունները չանցան առանց ադրբեջանական բանակի «մասնակցության». նրա ուժգին հրետակոծությունների հետեւանքով հանրապետությունում, մասնավորապես՝ Ստեփանակերտում, զոհվեց 17 խաղաղ հայ բնակիչ, ավերվեցին մեծ թվով բնակելի տներ, հանրապետական եւ մանկական հիվանդանոցները: Իսկ երեկոյան հակառակորդի զինված խմբավորումները հարձակում ձեռնարկեցին Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի ուղղությամբ: Գյուղի պաշտպանները, թեեւ մեծ դժվարությամբ, բայց կասեցրին թշնամու առաջխաղացումը[1]: Ի պատասխան, օգտվելով թշնամու թուլացումից, Կրկժանի մատույցներում (Ստեփանակերտ քաղաքի հարավարեւմտյան թաղամաս, որտեղ բնակչության մի մասը ադրբեջանցիներ էին) գրոհ ձեռնարկելով, ԻՊ ջոկատները մտան Կրկժան: Հակառակորդը ստիպված Քարինտակի ուղղությունից ուժերը հանեց եւ կենտրոնացրեց Կրկժանում՝ պաշտպանություն բռնելով գյուղական դպրոցի շրջակայքում:

Այդ օրերին, երբ ստեղծված իրավիճակը կարող էր հանգեցնել լայնածավալ պատերազմի եւ ապակայունացնել տարածաշրջանը, ձեռնարկվեց հերթական խաղաղարարական քայլը. նորաստեղծ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների ղեկավարները փորձեցին միջնորդի դեր կատարել հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ: Դեկտեմբերի 30-ին Մինսկում հավաքված ԱՊՀ երկրների ղեկավարները, դիմելով Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարներին, կոչ արեցին Ղարաբաղի հիմնահարցը լուծելու համար արագացնել բանակցությունները, սակայն Ա. Մութալիբովը չընդառաջեց կոչին եւ պահանջեց

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 34:

չմիջամտել Ադրբեջանի անկախ հանրապետության «ներքին» գործերին[1]:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3 պատգամավորներ չէին կարողացել հասնել Ստեփանակերտ) եւ 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, «Հայր մեր» տերունական աղոթքով աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրը ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը», ըստ որի՝ ԼՂՀ-ն հայտարարվեց անկախ պետություն, որի տարածքում պիտի գործեին ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները: Հռչակագրում այնուհետեւ ասված է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակիչները հանդիսանում են հանրապետության քաղաքացիներ, հանրապետության տարածքում թույլատրվում է երկքաղաքացիությունը, բոլոր քաղաքացիները գտնվում են ԼՂՀ-ի պաշտպանության տակ, երաշխավորվում են նրանց իրավունքներն ու ազատությունը՝ անկախ ազգային պատկանելությունից: Հանրապետության ամբողջ տարածքի նյութական եւ հոգեւոր հարստությունները պատկանում են հանրապետությանը եւ նրա ժողովրդին: Հայրենիքը պաշտպանելու համար ստեղծվում են սեփական զինված ուժեր, եւ հանրապետության քաղաքացիները զինծառայություն են անցնում ԼՂՀ տարածքում: ԼՂՀ պետական լեզուն հայերենն է[2]:

Հանրապետության սահմանները պաշտպանելու եւ բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության

[1] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 150:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 109:

բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ եւ բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարով եւ Շ. Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, եւ մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը[1]: Ստեղծվեց նաեւ Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օ. Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը[2]: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, եւ, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով, ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարեւոր ղեկավար պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր: Մինչեւ ԳԽ քարտուղարի ընտրությունները, վերջինիս պարտականությունները դրվեցին Հ. Գրիգորյանի վրա:

[1] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 151-152:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 107:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն, նրան օգնություն ցույց տալ եւ կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Նստաշրջանի աշխատանքում հայտարարվեց ընդմիջում, եւ աշխատանքները շարունակվեցին հունվարի 17-20-ը:

Մինչդեռ 1992 թ. հունվարի 1-ին իրադրությունը լարվեց Ասկերանի շրջանում: Հակառակորդը գրոհեց ու զավթեց Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղը: Սակայն Ասկերանի շրջանի ԻՊ ջոկատները, հակահարձակման անցնելով, ազատագրեցին Խրամորթը[1]: Պաշտպանական մարտեր տեղի ունեցան նաեւ Շահումյանի եւ Մարտակերտի շրջանների մի շարք հատվածներում:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը[2]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները: Մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հ.Խաչատրյանը, ագրարային հարցերի եւ գյուղական կյանքի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ալեքսանյանը, գիտության, կրթության, լեզվի, մշակույթի եւ լրատվական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գրիգորյանը, առողջապահության, սպորտի, սոցիալական հարցերի, բնապահպանության հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աղաբալյանը, ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ղազարյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մելիք-Շահնազարյանը, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բալայանը, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբուրյանը: ԳԽ մշտական հանձնաժողովները մինչեւ ՆԽ-ի լրիվ կազմավորումը իրենց վրա վերցրին նաեւ ՆԽ-ի մի շարք լիազորություններ:

Հունվարի 15-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի եւ ՆԽ նախագահ Օ. Եսայանի մամլո ասուլիսը: Պատասխանելով լրագրողների բազմաթիվ հարցերին՝ նրանք հանդես եկան հայտարարությամբ, որում նշվեց, որ օրենսդիր եւ գործադիր մարմինների առջեւ դրված առաջին ու հիմնական խնդիրն է՝ ամուր հիմքերի վրա պահել նորաստեղծ պետությունը, ապահովել նրա պաշտպանունակությունը, լուծել պետությանը վերաբերող սոցիալ-տնտեսական հարցերը եւ այս դժվարին պարագայում բնակչությանը ապահովել անհրաժեշտ սննդամթերքով, ստեղծել ու ամրապնդել հանրապետական իշխանությունը[1]:

Այսպիսով՝ արցախահայության ազատագրական պայքարը թեւակոխեց նոր շրջան՝ անկախ հանրապետության գոյության շրջանը: Իշխանության եկան Արցախյան շարժման ընթացքում կոփված երիտասարդ ուժեր, որոնք քաղաքական ասպարեզ մտան, թվում էր, շատ սրընթաց եւ անակնկալ կերպով: Այդպես էր թվում այն ժամանակ, այդպես է թվում նաեւ այժմ, երբ նրանց գործունեության պատմությունը դեռեւս կարծես պարուրված է որոշակի խորհրդավորության շղարշով: Այնինչ, նրանց իշխանության գալու երեւույթը միանգամայն բացատրելի ու օրինաչափ է այն

[1] Նույն տեղում, էջ 105:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 152:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 111:

ժամանակվա՝ Ղարաբաղում եւ Հայաստանում առկա իրողությունների տեսադաշտում: Հասարակական կարծիքը, չգիտես ինչու, չարձանագրեց այս համատեքստում մի շարք էական փաստեր. ԼՂՀ-ում, ինչպես նաեւ ՀՀ-ում, հաղթանակեց եւ իշխանության անցավ «Ղարաբաղյան շարժումը»:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Արցախյան շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Հետագայում Շարժման մեջ ձեւավորվեց երկու հակառակ ուղղություն: Մի ուղղությունը Ադրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացվեց, իսկ դրան զուգահեռաբար գնում էր այլ գործընթաց՝ ինքնապաշտպանության ջոկատների կազմավորումը, պարտիզանական շարժումը բռնազավթած գյուղերում: Եվ այդ խնդրում վճռական դեր խաղաց Արցախում ՀՅԴ-ն: ՀՅԴ-ի ակտիվությունը, ըստ երեւույթին, գործի մղեց նաեւ ՀՀՇ-ին, որի խողովակով նույնպես սկսվեց զենք մատակարարվել: Սա չէր կարող Ղարաբաղյան շարժման առաջնորդների խմբավորում չառաջացնել. հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց հիմնական մասը ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ:

Այս քաղաքական կուսակցության հաղթանակը ակնհայտորեն դուր չեկավ պաշտոնական Երեւանին, որի գլուխ էր կանգնած ՀՀՇ-ն: Եվ դա քաղաքական ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Որոշ առումով նուրբ իրավիճակ ստեղծվեց: Այսպես, ԼՂՀ ԳԽ նստաշրջանն սկսելուց մի քանի օր առաջ՝ հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել ՀՀ ԳԽ-ի դիմումը: Այդ փաստաթղթում նշված էր, որ արցախահայության ազգային ազատագրական պայքարը թեւակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԽ-ն համոզված էր, որ այն կընթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան՝ դրանով օրինական հիմքի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետեւ ասված է, թե ՀՀ ԳԽ-ն ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ ԳԽ-ին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ վերոհիշյալ դիմումը պարզապես քաղաքական դեմարշ էր. ՀՀ-ի ՀՀՇ-ական իշխանությունները չէին սպասում դեպքերի նման ընթացքի, եւ հունվարի 12-ին, երբ ՀՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել ԼՂՀ նորընտիր իշխանություններին, նախագահության 12 անդամներից է. Եգորյանը եւ Ա. Ոսկանյանը դեմ քվեարկեցին՝ շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է 11 ձայն: Այսպիսով, ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին[1]: Պատճառը պարզ է. Արցախում իշխանության էին եկել ՀՀ-ի ՀՀՇ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երեւանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը, որոնց վրա կանգ կառնենք ժամանակագրական կարգով հետագա իրադարձությունների վերլուծության ընթացքում:

Հունվարի 20-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ, որտեղ լսվեցին մի շարք հարցեր. ԼՂՀ ֆինանսատնտեսական իրավիճակի մասին, ԼՂՀ-ի պաշտպանության մասին, քրեական տարրերի ակտիվացման եւ հասարակական կարգի պահպանման մասին: Որոշում ընդունվեց ԼՂՀ ԳԽ առաջին գումարման

[1] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., 153-154:

նստաշրջանի հերթական նիստը հրավիրել նույն թվականի հունվարի 28-ին[1]:

ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանը 1992 թ. հունվարի 21-ին պաշտոնական այց կատարեց Երեւան՝ ՀՀ իշխանություններից ֆինանսատնտեսական օգնություն խնդրելու նպատակով: Պաշտոնական տեղեկագրերում ոչ մի տեղեկություն չի պահպանվել այցի վերաբերյալ, ուստի՝ այցի ընթացքը չլուսաբանվեց եւ մնաց անհայտ: Դժվար չէ կռահել, որ դա կատարվել է նպատակային ձեւով, ինչի հիմքում, ենթադրում ենք, ընկած էին ե՛ւ ռազմական, ե՛ւ քաղաքական նկատառումներ:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երեւան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասնություններ չեն պահպանվել նաեւ այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը եւ պահանջել հրաժարական տալ[2]:

Այսպիսով՝ իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախում իշխանության գլուխ հաստատված նոր ուժերը, փաստորեն, գտնվելով կրկնակի ճնշման տակ, կարողացան իրենց ուժերով, միջազգային իրավունքի բոլոր նորմերին համաձայն, ստեղծել իրավական եւ ժողովրդավարական մի պետության հիմքերը, որին վիճակված էր դիմակայելու Ադրբեջանի ագրեսիային եւ պահպանելու իր անկախությունը:

Հունվարի 27-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության հերթական նիստը, որը նախագահում էր ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ Գ. Պետրոսյանը: Լսվեցին ՆԳՎ պետ Ա. Իսագուլովի հաղորդումը ԼՂՀ օպերատիվ իրադրության մասին, ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հաղորդումը հունվարի 21-25-ը Երեւան կատարած աշխատանքային այցի մասին: Այնուհետեւ, նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի՝ աշխատանքային այցով Երեւանում գտնվելու կապակցությամբ հունվարի 28-ին հրավիրվելիք նիստը հետաձգել անորոշ ժամանակով[1]:

ԼՂՀ օրենսդիր մարմնի աշխատանքն ընթանում էր անընդմեջ տեղի ունեցող մարտական գործողությունների պայմաններում: ԻՊՈՒ-ն, չնայած միջոցների ծայրահեղ պակասությանը, հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը ոչնչացրեց Կրկժանի բարձունքներում ամրակառուցված թշնամական կրակակետերը եւ տիրեց ադրբեջանական թաղամասին[2]: 1992 թ. հունվարյան այդ օրերին կատաղի մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը հակառակորդը հարձակման անցավ Քարինտակի ուղղությամբ: Հարեւան գյուղերի ԻՊ ջոկատների օգնությամբ հարձակումը կասեցվեց: Մարտադաշտում թողնելով 8 տասնյակ դիակ, մի այդքանն էլ քարշ տալով՝ թշնամին մառախուղի քողի տակ նահանջեց: Հայկական կողմը ունեցավ 20 զոհ եւ 20 վիրավոր: Զոհվածների թվում էր գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար, ԼՂՀ ԳԽ պատգամավոր Վ. Առուշանյանը[3]: Հունվարի վերջին թշնամին գրոհեց նաեւ Ասկերանի եւ Մարտակերտի պաշտպանական դիրքերը, սակայն այստեղ էլ հակահարված ստանալով ԻՊՈՒ-ից՝ նահանջեց:

ԼՂՀ-ում ադրբեջանական բանակի պարտությունների առնչությամբ քաղաքական հիստերիա բարձրացնելով՝ ադրբեջանական ռազմական ղեկավարությունը փորձեց ԻՊՈՒ-ի հաջողությունը

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 1, կապ 1, թերթ 5-6:
[2] «Այժմ», 22-28.05.2006:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 1, կ. 1, թ. 7-8:
[2] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 36:
[3] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ158:

ները վերագրել Ստեփանակերտում տեղակայված ԱՊՀ (նախկին ԽՍՀՄ) զինված ուժերի 366-րդ գնդին՝ պահանջելով այն դուրս բերել Արցախից: Այդ նպատակին հասնելու համար Ադրբեջանը օգտագործում էր ոչ միայն դիվանագիտական եղանակները, այլեւ ԱՊՀ ղեկավարներին եւ Միացյալ զինված ուժերի հրամանատարությանը շանտաժի ենթարկելու մեթոդները՝ նրանց մեղադրելով հայկական կողմին, իբր, ռազմական աջակցություն ցուցաբերելու մեջ[1]:

Հունվարի 31-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության հերթական նիստ: Քննարկվեցին հանրապետության պաշտպանությանը վերաբերող մի շարք հարցեր, որոշվեց ԼՂՀ ԳԽ պատգամավորների թափուր տեղերի համար կրկնական ընտրություններն անցկացնել 1992 թ. մարտի 1-ին: ԼՂՀ ԳԽ նախագահությունը ԱՊՀ զինված ուժերի՝ Ստեփանակերտում տեղակայված 366-րդ գունդը ԼՂՀ-ի սահմաններից դուրս բերելու հնարավոր հետեւանքների առնչությամբ հանդես եկավ հայտարարությամբ այն մասին, որ ԼՂՀ-ում տիրող կացությունը վերածել է խոշորածավալ ռազմական հակամարտության, ադրբեջանական կողմը խաղաղ բնակչության դեմ կիրառում է տանկեր, այլ զրահատեխնիկա, հրետանի եւ հրթիռային կայանքներ: Այդ իրադրությունում վերոհիշյալ զորագունդը, որը հաստատուն չեզոք դիրք է բռնում, լուրջ գործոն է հանդիսանում ԼՂՀ-ում հակամարտությունը Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ պատերազմի վերածելը կասեցնելու գործում: «Այդ զինված ուժերի դուրս բերումը, ինչի վրա համառում է Ադրբեջանի ղեկավարությունը,- այնուհետեւ ասվում է հայտարարության մեջ,-կլիներ հայ ժողովրդի դեմ ԱՀ ռազմական ագրեսիայի ուղղակի խրախուսանք»:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 116:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը հայտարարության մեջ կոչ է արել ԱՊՀ անդամ պետություններին.

-հավատարիմ մնալ Միացյալ զինված ուժերի ստորաբաժանումը ԼՂՀ-ում պահպանելու գաղափարին,

-համաձայնել ԼՂՀ տարածքում տեղաբաշխված զորային ստորաբաժանումների վրա հակամարտության մեջ չներքաշված մի երրորդ կողմի, մասնավորապես, Ռուսաստանի իրավասությունը տարածելուն:

Այլ որոշում ընդունվելու դեպքում, առաջնորդվելով բնակչության անվտանգության ապահովման եւ նրան ֆիզիկական բնաջնջումից փրկելու բարձրագույն շահերով, ԼՂՀ ԳԽ-ն իրեն էր վերապահում ԼՂՀ տարածքում եղած զինված ուժերի զորամասերի կարգավիճակի նկատմամբ իր վերաբերմունքը ինքնուրույն որոշելու իրավունքը: Բացի այդ, ԼՂՀ ԳԽ-ն այդ զորամասերը ԼՂՀ տարածքից դուրս բերելու հետ կապված հնարավոր ծանր հետեւանքների համար ողջ պատասխանատվությունը դրել է նրանց վրա, ովքեր կընդունեն այդ որոշումը:

«ԼՂՀ ԳԽ-ն,- ասվում է հայտարարության վերջում,- հույս է հայտնում, որ ԱՊՀ անդամ պետությունների բարձրագույն ղեկավարները ըմբռնումով կվերաբերվեն ԼՂ-ում ստեղծված ծանր կացությանը եւ թույլ չեն տա հակամարտության հետագա ծավալում, որն արդեն քիչ մարդկային կյանքեր չի խլել»[1]:

Տարածաշրջանում օրեցօր ահագնացող լարվածությունից նորովի անհանգստացած միջազգային հանրությունը, ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից, մեկ անգամ եւս փորձեց միջնորդական դեր ստանձնել: Հունվարի 30-ին ՌԴ արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) հանդես եկավ հայտարարությամբ, ուր նշված էր, որ ՌԴ-ն անհանգստացած է ԼՂ-ում տիրող իրավիճակից

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ.1, կ.1, թ. 13:

եւ դիմում է միջազգային կազմակերպություններին՝ միջամտել հակամարտության խաղաղ կարգավորմանը: Նույն օրը՝ հունվարի 30-ին, Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհուրդը (ԵԱՀԽ) իր շարքերն ընդունեց Հայաստանին ու Ադրբեջանին: Վերջիններս էլ ԵԱՀԽ գործող նախագահին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան՝ ԼՂ հիմնախնդրի լուծման ուղիներն ուսումնասիրելու նպատակով[1]: Անգլիայի առաջարկով ԵԱՀԽ-ն որոշեց իրավիճակը տեղում ուսումնասիրելու նպատակով 3 շաբաթվա ընթացքում դիտորդներ ուղարկել ԼՂ[2]: Իսկ հունվարի 31-ին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) նիստում որոշվեց փետրվարի 1-ից կրակը դադարեցնել բոլոր հակամարտող տարածքներում, այդ թվում նաեւ ԼՂ-ում, եւ տարածաշրջաններ ուղարկել դիտորդական խմբեր՝ վերահսկելու նպատակով: Սակայն ադրբեջանական կողմը դրան պատասխանեց Ստեփանակերտի եւ հարակից շրջանների ուժգին հրետակոծումներով: Նշենք նաեւ, որ մայրաքաղաքի շուրջ գտնվող ադրբեջանական բնակավայրերից գրեթե ամեն օր հրետակոծվում ու գնդակոծվում էին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը, բնակչությունը հիմնականում պատսպարված էր նկուղներում, մանկական ծննդատունը տեղափոխվեց նախկին մարզխորհրդի շենքի նկուղը, ստեղծվեց զինվորական հոսպիտալ, որը տեղակայվեց նախկին կուսմարզկոմի շենքի նկուղում: Մեծ էր խմելու ջրի խնդիրը, մայրաքաղաքում իրեն զգացնել էր տալիս նաեւ սննդամթերքի պակասը: Այդ խնդիրը որոշ չափով լուծվում էր հանրապետության գյուղերի օգնությամբ:

Նման պայմաններում մայրաքաղաքի շուրջ գտնվող ադրբեջանական բոլոր բնակավայրերում տեղակայված կրակակետերի ոչնչացումը արցախահայության համար դարձել էր հրատապ խնդիր: Փետրվարի 10-11-ը ԻՊ ուժերը վնասազերծեցին Ստեփանակերտի մերձակայքում գտնվող Մալիբեկլու, Ներքին եւ Վերին Ղուշչիլար ադրբեջանաբնակ գյուղերը: Այդ գյուղերի ազատագրումը կարեւոր քայլ էր ռազմավարական տեսանկյունից. մայրաքաղաքն ազատվեց շրջափակման շղթայի եւս մի օղակից: Վերաբացվեց Ստեփանակերտի եւ Մարտունու շրջանի որոշ բնակավայրերի միջեւ ավտոմոբիլային հաղորդակցության ամենակարճ ճանապարհը[1]:

Փետրվարի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում լսվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի հաղորդումը հունվարի 26-ից փետրվարի 2-ը Երեւան կատարած աշխատանքային այցի մասին: Այնուհետեւ քննարկվեց ԼՂՀ-ին ՀՀ-ից եւ այլ երկրներից ստացված ֆինանսական օգնության տնօրինման հարցը: Երկար վիճաբանություններից հետո որոշվեց այն դնել ԼՂՀ ԳԽ նախագահության վրա[2]:

Հարկ է ընդգծել, որ այդ հարցը Երեւանից վերադառնալուց հետո բարձրացրել էր ԼՂՀ ԳԽ նախագահը, ով հիասթափված էր պաշտոնական Երեւանի վերաբերմունքից եւ որեւէ օգնություն չէր ակնկալում ՀՀ իշխանություններից: ԼՂՀ օրենսդիրների նպատակն էր՝ նորաստեղծ իշխանության ձեռքում կենտրոնացնել ամբողջ ֆինանսական օգնությունը ու այն օգտագործել նպատակաուղղված ձեւով:

Իսկ փետրվարի 10-ին ԼՂՀ ԳԽ նախագահության հերթական նիստում որոշում կայացվեց ստեղծել ԼՂՀ ԳԽ լրատվական կենտրոն, կենտրոնի ղեկավար նշանակել Գ. Բաղդասարյանին[3]:

[1] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 53:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 113:

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 38:
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 1, կ. 1, թ. 15-16:
[3] Նույն տեղում, թ. 19-21:

Հանձնարարվեց մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների մշտական հանձնաժողովին՝ կենտրոնի ղեկավար Գ. Բաղդասարյանի հետ կազմել նորաստեղծ կենտրոնի հաստիքները: Այնուհետեւ կայացվեցին հետեւյալ որոշումները. հանրապետության ողջ տարածքում ռազմական իրավիճակի խիստ սրման կապակցությամբ ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նստաշրջանի հերթական նիստը անորոշ ժամանակով հետաձգելու մասին, փետրվարի 12-ը Վերածննդի օր հայտարարելու մասին, ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներին անձնական զենքով ապահովելու մասին, ԼՂՀ ԳԽ պաշտոնաթերթ ունենալու մասին: ԳԽ նախագահությունը հանձնարարեց կրթության, գիտության, լեզվի, մշակույթի եւ լրատվության հարցերի հանձնաժողովին՝ պաշտոնաթերթի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել ԼՂՀ ԳԽ նախագահությանը, Ստեփանակերտում տեղակայված նախկին ԽՍՀՄ զինված ուժերի 366-րդ գունդը հանելու հավանականության առնչությամբ Անդրկովկասյան զինվորական օկրուգի ղեկավարության հետ հանդիպում ունենալու համար Թբիլիսի գործուղել հանրապետության պատվիրակություն՝ ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի ղեկավարությամբ*: Նաեւ լսվեց ԼՂՀ ԳԽ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանի հաղորդումը Երեւան եւ Մոսկվա կատարած ուղեւորությունների արդյունքների մասին:

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Մալիբեկլուի եւ Ղուշչիլարի ռազմակայանների կորստից անմիջապես հետո ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Հայկական ուժերին հաջողվեց կասեցնել թշնամու գրոհները: Փետրվարի 14-ին ադրբեջանական զինված ուժերը Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը հրթիռակոծեցին ՄՄ-21 «Գրադ» հրթիռահրետանային կայանքով, որը միջազգային կոնվենցիաներով արգելված զենք է: Խաղաղ բնակչության մեջ եղան բազմաթիվ զոհեր:

Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ եւս մեկ հայտարարությամբ, որտեղ ընգծվում էր, որ Ադրբեջանը փաստորեն վարում է խաղաղ բնակչության ոչնչացման նպատակաուղղված քաղաքականություն, ինչը թելադրված չէ ռազմական անհրաժեշտությամբ, եւ դա որակվում էր որպես բռնության նոր ծավալում: «Բարբարոսական գործողությունները չդադարեցին անգամ ԵԱՀԽ պատվիրակության՝ տարածաշրջան ժամանելու նախօրերին, - ասված էր հայտարարության մեջ: - Այս ամենը հակասում է Հելսինկյան համաձայնությանը հավատարիմ մնալու, ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ լուծմանը կողմնակից լինելու եւ մարդու իրավունքների ու ազատությունների միջազգային նորմերը պահպանելու պատրաստակամության մասին Ադրբեջանի ղեկավարության հավաստիացումներին»[1]:

Փետրվարի 17-ին ԼՂՀ ժամանեց ԵԱՀԽ անդամ երկրների դիտորդական խումբը: Դիտորդները հանդիպումներ ունեցան ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի հետ, այցելեցին Մալիբեկլու եւ Քարինտակ գյուղերը եւ մի քանի ժամ հետո մեկնեցին հանրապետությունից: Իսկ երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ, որտեղ կայացվեցին հետեւյալ որոշումները. նախկինում Ադր. ԿԿ ԼՂ մարզկոմի զբաղեցրած վարչական շենքը հատկացնել ԼՂՀ ԳԽ-ին, նախկին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման տեղական խորհուրդների լիազորությունների

* Այդ այցը դրական արդյունք չտվեց, մարտի սկզբին գունդը դուրս բերվեց Արցախից:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ. 1, կ.1, թ. 28-29:

ժամկետը երկարաձգել մինչեւ «Տեղական կառավարման մարմինների մասին» օրենքի ընդունումը[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության առաջադրանքով՝ ԻՊ ուժերը մշակեցին ներքին ռազմավարական ճանապարհներին խոչընդոտ դարձած ադրբեջանական գյուղերը (որոնք վերածվել էին ռազմական հենակետերի) վնասազերծելու ծրագիր: Այդ ծրագրին համապատասխան, նրանք փետրվարի 17-ին երկօրյա մարտերից հետո ազատագրեցին Մարտունու շրջանի Ղարադաղլու գյուղը, որը խափանում էր ավտոմոբիլային երթեւեկությունը Ստեփանակերտ-Մարտունի ռազմավարական ճանապարհով: Այդ ռազմագործողության ժամանակ, Ամիրանլար ադրբեջանաբնակ գյուղից գրոհելով Մարտունու ուղղությամբ, հակառակորդը փորձեց շեղել ԻՊՈՒ հրամանատարության ուշադրությունը եւ խափանել Ղարադաղլուի ազատագրումը: Սակայն այդ փորձը ապարդյուն եղավ: Ղարադաղլուի անկումը մի նոր հիստերիա բարձրացրեց Ադրբեջանում, որտեղ հայկական կողմին մեղադրում էին «ոճրագործության» մեջ՝ մոռանալով իրենց բարբարոսությունները:

Միաժամանակ, ադրբեջանական ռազմական ղեկավարությունը ավելի սաստկացրեց «Գրադ» համակարգի հրթիռներով, ծանր հրետանիով եւ ՄԻ-24 ռազմական ուղղաթիռներով ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի, ինչպես նաեւ հայկական գյուղերի հրետակոծությունները: Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը փետրվարի 19-ին նոր դիմում հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ՄԱԿ-ի ԱԽ-ին, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ղեկավարներին՝ ընդգծելով, որ Ադրբեջանը, ըստ էության, պետական մակարդակով իրականացնում է

[1] ԼՂՀ Ազգային ժողովի (ԱԺ) ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. փետրվարի 17-ի նիստի արձանագրություն N 7:

ցեղասպանության քաղաքականություն, որի ընթացքում անխնա կերպով ոչնչացնում է խաղաղ բնակչությանը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը իր դիմումի մեջ համաշխարհային հանրությունից պահանջում էր դատապարտել միջազգային իրավական նորմերով մարդկության նկատմամբ հանցագործություն որակվող գործողությունները: «Մենք Ձեզ խնդրում ենք, - ասվում է դիմումի մեջ, - Ձեր անձնական մեծ հեղինակությունն ու հնարավորությունները օգտագործել հետեւյալ հարցերի լուծման համար.

ՄԱԿ-ի ԱԽ առաջիկա նիստում քննարկել ԼՂ-ում տիրող իրավիճակը, անհապաղ տարածաշրջան մտցնել ՄԱԿ-ի խաղաղարար ուժեր, ԼՂ-ն հայտարարել աղետի գոտի, ՄԱԿ-ում Ադրբեջանի անդամության հարցը քննարկելիս հաշվի առնել նաեւ ԼՂՀ-ի շահերը:

Ձեր շուտափույթ միջամտությունն ենք հայցում տարածաշրջանում նոր ողբերգությունները կանխելու համար»[1]:

Ելնելով հանրապետության ողջ տարածքում ստեղծված լարված իրավիճակից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը փետրվարի 22-ին որոշում կայացրեց ԼՂՀ ԳԽ պատգամավորների թափուր տեղերի համար 1992 թ. մարտի 1-ին նախատեսված կրկնակի ընտրությունները հետաձգել անորոշ ժամանակով:

Փետրվարի 23-ին ադրբեջանցիները Շուշիից եւ Ստեփանակերտի մերձակայքում գտնվող Ջանհասան ադրբեջանաբնակ գյուղի հենակայանից հրետակոծեցին Ստեփանակերտում տեղակայված ԱՊՀ զինված ուժերի 366-րդ գնդի տարածքը, ինչի հետեւանքով զոհվեց 2, վիրավորվեց 8 զինծառայող: Այդ առնչությամբ Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատարությունը հրաման տվեց ճնշել գնդի տարածքը հրթիռակոծող կրակակետերը:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, g.1, պ. մ. 1, կ.1, թ. 39:

Այսպիսի լարված ռազմական իրադրություն էր տիրում ԼՂՀ-ում իշխանական կառույցների կազմավորման գործընթացից՝ որպես ԼՂ-ի պետականության ձեւավորման հերթական փուլից առաջ: Նրա զարգացումը հանգեցրեց այն բանին, որ ԼՂՀ-ում իշխանության գլուխ հաստատված նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, կարողացան միջազգային իրավունքի բոլոր նորմերի պահպանումով ստեղծել իրավական եւ ժողովրդավարական մի պետություն, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի զավթողական նկրտումներին եւ պաշտպանել իր անկախությունը: Դրանում հույժ կարեւոր դեր խաղաց ԼՂՀ ԳԽ նախագահության՝ 1992թ. փետրվարի 24-ի նիստի հատուկ որոշումը ԼՂՀ ԻՊՈՒ-ի մասին: Այդ որոշման մեջ, մասնավորապես, արձանագրված էր. «Ելնելով նրանից, որ ԼՂ-ի հայ ազգաբնակչության նկատմամբ տարվող ցեղասպանությունը, թալանի եւ բռնության քաղաքականությունը եւ հայկական գյուղերի զանգվածային բռնատեղահանումը հանգեցրել են ԼՂ-ի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատների ստեղծմանը, և նկատի ունենալով ԼՂՀ-ի նկատմամբ ԱՀ-ի կողմից հարաճուն զավթողական գործողությունները, զորահավաքի միջոցների հաշվառման եւ հանրապետության պաշտպանության ապահովման նպատակով կազմավորված զինյալ ջոկատները ճանաչել որպես ԼՂՀ ԻՊՈՒ եւ դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Շրջանային (քաղաքային) գործկոմներին եւ զինկոմիսարիատներին հանձնարարել մեկամսյա ժամկետում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում եւ զինակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: ԼՂՀ ԻՊՈՒ-ում ներգրավված զինապարտներին համարել զորակոչված: Զինկոմիսարիատներին հանձնարարել ԼՂՀ ԻՊՈՒ-ի շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ համատեղ կազմակերպել ԼՂՀ շահերի համար պայքարում զոհվածների, անհայտ կորած եւ հաշմանդամ անձանց վերահաշվառում»[1]:

ԻՊՈՒ-ի հաջորդ հրատապ խնդիրն էր Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհի բացումը: Այն անցնում էր ադրբեջանական Խոջալու բնակավայրով, որը ռազմական խոշոր հենակետի էր վերածվել տակավին մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը: 1992թ. փետրվարի 26-ին, հայ ազատամարտիկների գրոհին չդիմանալով, ադրբեջանական զինված կազմավորումները ճողոպրեցին՝ ավանում թողնելով մեծ քանակությամբ զինամթերք, իսկ խաղաղ բնակչությունը, օգտվելով հայերի թողած միջանցքից, ավտոմայրուղով հեռացավ Աղդամի ուղղությամբ[2]: Այնինչ, ադրբեջանական զինվորականները բոլորովին այլ կերպ վարվեցին իրենց ցեղակիցների հետ. նրանք Խոջալուի խաղաղ բնակիչներին, որոնց մինչ այդ օգտագործում էին իբրեւ կենդանի վահան եւ հրետակոծում ԼՂՀ-ի բնակավայրերը, երբ ստիպված եղան թողնել գյուղը, հենց իրենք էլ գնդակահարեցին Աղդամի շրջանի սահմանային մատույցներում:

Խոջալուի ազատագրումը ռազմավարական մեծ նշանակություն ունեցավ. նախ՝ բացվեց հաղորդակցությունը Ասկերանի հետ, երկրորդ՝ ազատագրվեց օդանավակայանը՝ օդային կապ ստեղծելով արտաքին աշխարհի հետ: Այն նաեւ ունեցավ քաղաքական հետեւանքներ. Ադրբեջանում սրվեցին Բաքվի իշխանությունների եւ ընդդիմության ներհակությունները: Ադրբեջանական արտաքին քաղաքական մեքենան մեծ աղմուկ բարձրացրեց միջազգային ասպարեզում՝ հայկական կողմին մեղադրելով ցեղասպանութ ան մեջ: Իսկ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովն ինքը այդ աննախադեպ հանցավոր ակտը կապել է այն բանի հետ, որ ընդդիմադիր ժողովրդական ճակատը ձգտում էր իրեն հեռաց-

[1] Նույն տեղում, թ. 45-46:
[2] «Երկիր», 28.02.1992թ.:

նել իշխանությունից՝ պատահածի համար ողջ պատասխանատվությունը գցելով իր վրա[1]:

Խոջալուի դեպքերի առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը մարտի 4-ին հանդես եկավ հայտարարությամբ, որում տրված է Խոջալուի ազատագրման ռազմաքաղաքական նշանակությունը: Հայտարարության մեջ նաեւ ասված է. «Չնայած մարտական գործողությունների գոտուց Խոջալուի բնակիչների դուրս գալու համար ԼՂՀ ԻՊՈՒ-ի կողմից թողնված միջանցքին, գյուղի խաղաղ բնակչության մի հատվածը չի օգտվել այդ հնարավորությունից: Նրանք բոլորն էլ, շուրջ 200 մարդ, ըստ իրենց ցանկության, առանց որեւէ նախնական պայմանի, ուղեկցվել են սահմանից այն կողմ:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը վերստին հայտարարում է ԼՂ-ի եւ ԱՀ-ի միջեւ եղած բոլոր հիմնահարցերը բացառապես խաղաղ ճանապարհով, բանակցությունների սեղանի շուրջը վճռելու իր պատրաստակամության մասին»[2]:

Հետագայում Ա. Մութալիբովը խոստովանել է. «Այնուամենայնիվ, հայերի կողմից միջանցք էր թողնվել, որով մարդիկ կարող էին հեռանալ»[3]:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը փետրվարի 29-ի նիստում քննարկեց ԼՂՀ լիազոր ներկայացուցիչների մասին որոշման նախագիծը եւ որոշեց. «Մինչեւ ԼՂՀ-ի միջազգային ճանաչումը եւ համապատասխան դիվանագիտական մարմինների ստեղծումը, առանձին երկրներում եւ միջազգային կազմակերպություններում ԼՂՀ-ի շահերը պաշտպանելու համար նպատակահարմար գտնել՝ նշանակել ԼՂՀ լիազոր ներկայացուցիչներ եւ, հաշվի առնելով

[1] "Независимая газета", 02.04.1992г.
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, g. 1, պ. մ. 2, կ. 1, թ. 4-5:
[3] "Независимая газета", 02.04.1992г.

հանրապետության ծանր վիճակը, շրջափակումը, արտաքին աշխարհի հետ կապի բացակայությունը, իրավունք վերապահել ԼՂՀ ԳԽ նախագահին՝ բացառիկ դեպքերում լիազորելու առանձին անձանց՝ հանդես գալու ԼՂ-ի շահերի պաշտպանությամբ»[1]:

Իսկ ԼՂ հիմնախնդրով զբաղվող միջազգային ատյաններն ու միջնորդ պետություններն այդպես էլ շարունակում էին անտեսել հիմնահարցի օբյեկտ հանդիսացող ԼՂ-ի ներկայացուցիչների մասնակցությունը հակամարտության կարգավորմանն առնչվող քննարկումներին: Դրա օրինակն էր փետրվարի 27-28-ը Պրահայում տեղի ունեցած ԵԱՀԽ-ի նիստը, որտեղ առաջարկվեց կրակը դադարեցնելու նպատակով ճնշում գործադրել Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների վրա եւ հարցը լուծել խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ:

Մարտի 4-ին Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահները հանդես եկան հիմնախնդրի խաղաղ կարգավորման նոր միջնորդական նախաձեռնությամբ[2]: Սակայն միջազգային ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին, քանի որ Ադրբեջանի իշխանությունները մերժում էին ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ: Դրա հետեւանքով իրադրությունը տարածաշրջանում ավելի բարդացավ: Դրան նպաստեց նաեւ ԱՊՀ զինված ուժերի 366-րդ գնդի դուրս բերումը Ստեփանակերտից: Հայկական ուժերին հաջողվեց առգրավել գնդին պատկանող զինտեխնիկայի, զենքի ու զինամթերքի որոշ մասը[3]:

Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ԻՊՈՒ-ի կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաեւ կառավար-

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, g.1, պ. մ.1, կ.1, թ. 47-48:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 122:
[3] Հակոբյան Տ., Ռազմաքաղաքական կացությունը ԼՂՀ-ում (1992 թ. մարտ), ԱրՊՀ, «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2005, թիվ 2(2005), էջ 66:

ման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈԻ-ի հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Տեր-Թադեւոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992 թ. հունվարի 9-ի որոշմանը համապատասխան՝ հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը, որը ներկայացրել էր ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը: ՊԽ-ում ընդգրկվեցին Ա. Մկրտչյանը (նախագահ), Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Ս. Սարգսյանը, Ա. Տեր-Թադեւոսյանը, Ռ. Քոչարյանը եւ Ա. Կարապետյանը: Այնուհետեւ նախագահությունը հանձնարարեց ՊԽ-ին՝ ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովների հետ համատեղ նախապատրաստել եւ ԼՂՀ ԳԽ նախագահության քննարկմանը ներկայացնել «Պաշտպանության խորհրդի մասին», «Ինքնապաշտպանության ուժերի մասին» կանոնադրությունների նախագծերը[1]:

ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաեւ կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելու մասին, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը[2]: «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, հաստատվեց ԼՂՀ կառավարությունը՝ հետեւյալ կազմով. Օ. Եսայան՝ ԼՂՀ ՆԽ նախագահ, Բ. Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ, Ա. Ծատրյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի տեղակալի եւ ԼՂՀ գյուղատնտեսության եւ պարենամթերքի նախարարի պաշտոնակատար, Ա.Իսագուլով՝ ՆԳ նախարարի պաշտոնակատար, Ս. Թեւոսյան՝ ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար, Յու. Դավթյան՝ ԼՂՀ վիճակագրության պետական վարչության պետի

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ. 2, կ.1, թ. 5-6:
[2] Նույն տեղում, թ. 11-14:

պաշտոնակատար, Է. Շահրամանյան՝ շինարարության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Յու. Ներսիսյան՝ տպագրության, պոլիգրաֆիայի, հրատարակչության եւ գրքի առեւտրի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Վ. Թովմասյան՝ ԼՂՀ ՆԽ գործերի կառավարիչ: Հանձնարարվեց հանրապետության կառավարությանը՝ առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձեւավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական եւ մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ, կազմավորելով ԼՂՀ կառավարությունը, ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարեւորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչեւ 1992 թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռեւս անչափ լարված էր եւ հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը՝ ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

ԻՊ ուժերը շարունակում էին պաշտպանական ծանր մարտեր մղել ռազմաճակատի բազմաթիվ հատվածներում, որոնց թվում՝ ռազմավարական տեսակետից կարեւոր նշանակություն ունեցող Ասկերան քաղաքի եւ Մարտակերտի շրջանի Կիչան գյուղի ուղղություններում: Այստեղից հակառակորդի համար ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի հանրապետության մայրաքաղաք: Մարտի 11-ին ԻՊՈԻ ստորաբաժանումները հակահարձակում ձեռնարկեցին նույն ուղղություններում եւ հասան զգալի հաջողությունների. նրանք ոչ միայն հետ վերադարձրին հանձնված դիրքերը, այլեւ

ճնշեցին Սրխավենդ գյուղի հատվածում տեղակայված ադրբեջանական կրակակետերը[1]:

Մարտի 12-ին Ա. Մկրտչյանը ընդունեց Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Ք. Քոքսին, որն իր հետ Արցախ էր բերել մեծ քանակությամբ դեղորայք եւ մանկական սնունդ: Նույն օրը կայացավ հեռախոսազրույց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի եւ Ադրբեջանի ԳԽ նախագահ Յ. Մամեդովի միջեւ՝ վերջինիս նախաձեռնությամբ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ժամանակավոր հրադադարի մասին, սակայն ադրբեջանական կողմը խախտեց այն՝ հրետակոծելով Ասկերան շրջկենտրոնը: Մարտի 14-ի առավոտյան ժամը 9-ին Ադրբեջանի արտգործնախարար Հ. Հասանովը, զանգահարելով ԼՂՀ ԳԽ նախագահին, ղարաբաղյան կողմին մեղադրեց պայմանավորվածությունը խախտելու մեջ: Սա արդեն տիպիկ ադրբեջանական նենգամտության օրինակներից մեկն էր, որը որպես առանձնահատկություն՝ մշտապես դրսեւորվել եւ շարունակում է դրսեւորվել Ադրբեջանի կիրառած մարտավարության մեջ:

Մարտի 17-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց Ստեփանակերտի օդանավակայանի գործունեության մասին որոշման նախագիծը: Ելնելով ստեղծված ծանր իրադրությունում հանրապետության ժողովրդական տնտեսության եւ պաշտպանության համար օդանավակայանի կարեւոր նշանակությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց Ստեփան կերտի օդանավակայանում սահմանել աշխատանքային հատուկ ռեժիմ եւ այն օգտագործել առաջին հերթին ժողովրդատնտեսական եւ պաշտպանական նշանակության բեռների փոխադրման նպատակով: ԼՂՀ ՆԽ-ին հանձնարարվեց կարճ ժամկետում լուծել օդանավակայանի ղեկավարության, տեխնիկական եւ սպասարկող ծառայությունների կազմավորման հարցերը եւ ապահովել նրանց կանոնավոր գործունեությունը[1]:

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ, էջ 43:

Հանրապետությունից քաղաքացիների մեկնելու կանոնակարգ մշակելու եւ մեկնելը կարգավորելու նպատակով ստեղծվեց ժամանակավոր հանձնաժողով՝ Հ. Խաչատրյանի գլխավորությամբ: Հանձնարարվեց օդանավակայանի վարչությանը՝ խստիվ առաջնորդվել հանձնաժողովի մշակած կանոնակարգով, իսկ ՊԽ-ին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել օդանավակայանի անվտանգությունն ու կարգուկանոնն ապահովելու համար:

Դա ճիշտ ռազմավարական քայլ էր եւ արվեց այն նպատակով, որպեսզի չթույլատրվի պատերազմի հետեւանքով ԼՂՀ քաղաքացիների, հատկապես՝ արական սեռի ներկայացուցիչների արտահոսքը երկրից:

Վերջում ԳԽ նախագահությունը հանդես եկավ ԼՂ-ի հիմնահարցի շուրջ միջազգային նախաձեռնությունների վերաբերյալ հայտարարությամբ: Նրանում մասնավորապես ասվում էր. «Ողջունելով բազմաթիվ երկրների եւ միջազգային կազմակերպությունների շահագրգռվածությունը մարտական գործողությունների դադարեցման գործում՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հայտարարում է, որ ստեղծված կացությունից ելք որոնելը առանց ԼՂՀ-ի լիազոր ներկայացուցիչների մասնակցության՝ չի կարող դրական փոփոխություններ առաջ բերել տարածաշրջանում:

ԼՂՀ-ն ռազմական ագրեսիայի օբյեկտ է, եւ պարտադիր է նրա ներկայությունը ԼՂՀ-ի շահերը շոշափող ամեն մի խաղաղարար գործընթացի»[2]:

Ինչպես նշեցինք, տարածաշրջանի անկայունությունից անհանգստացած՝ միջազգային հանրությունը կրկին ճիգեր գործադ-

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ. 1, թ. 25-26:
[2] Նույն տեղում, թ. 26:

ռեց ռազմաքաղաքական հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու նպատակով: Մարտի 16-ին ԵԱՀԽ-ն որոշեց տարածաշրջան ուղարկել իր ներկայացուցիչներին՝ իրադրությունը տեղում ուսումնասիրելու համար: Մարտի 20-ին Ստեփանակերտ ժամանեցին ԱՄՆ պետքարտուղար Ս. Վենսը եւ ԵԱՀԽ ներկայացուցիչ Յ. Կուբիչը, որոնք մինչ այդ այցելել էին Բաքու եւ Երեւան: Նրանք հանդիպեցին նաեւ ԼՂՀ իշխանությունների հետ եւ խոստացան տարածաշրջանում իրադրության վերաբերյալ զեկուցել ՄԱԿ-ի ԱԽ-ին եւ անհապաղ միջոցներ ձեռնարկել հիմնահարցը խաղաղ կարգավորելու ուղղությամբ [1]:

Մարտի 20-ին հակամարտության տարածաշրջան այցելեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ԱԳ նախարարի տեղակալ Մ. Վայեզին, որի նպատակն էր յոթօրյա տեւողությամբ մարտական գործողությունների դադարեցման պայմանավորվածություն ձեռք բերելը: Նա հանդիպեց Ա. Մկրտչյանի հետ, որն իր պատրաստակամությունը հայտնեց տվյալ խնդրի վերաբերյալ: Նույն օրը պայմանավորվածությունը ձեռք բերվեց, սակայն ադրբեջանական կողմը դարձյալ խախտեց այն, հարձակում ձեռնարկեց եւ փորձեց զավթել Մարտունի շրջկենտրոնի մերձակա՝ ռազմավարական տեսակետից կարեւոր բարձունքը, սակայն հետ շպրտվեց: Այդ հարձակման առթիվ մարտի 21-ին ԻԻՀ ԱԳՆ-ն բողոք ներկայացրեց Ադրբեջանին [2]:

Պետք է նշել, որ ԼՂ հակամարտությունը դեռեւս իր սկզբնական փուլում մի շարք խնդիրներ առաջացրեց Իրանի արտաքին եւ ներքին քաղաքականության մեջ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Իրանն իր աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից ձգտում էր տարածաշրջանում վարել իր համար բավականին

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ, էջ 125-126:
[2] Նույն տեղում, էջ 126:

ճկուն եւ կշռադատված քաղաքականություն: Անկասկած է, որ այդ միջնորդական նախաձեռնությամբ Իրանն առաջնորդվում էր առաջին հերթին սեփական անվտանգությունն ապահովելու ձգտումով, սակայն հետապնդում էր նաեւ այլ նպատակ, այն է՝ իր ազդեցության տարածումը Հարավային Կովկասում, իսկ հետագայում՝ ԱՊՀ այլ երկրներում: Իրանի դիվանագիտական աշխուժացումը տարածաշրջանում պայմանավորված էր նաեւ Ադրբեջանում թուրքական ազդեցության սահմանափակման եւ դուրսմղման նրա ձգտումով: Այս ենթատեքստում հարկ ենք համարում ընդգծել, որ Իրանը շատ բացասական է գնահատում Թուրքիայի դերը տարածաշրջանում եւ, հետեւապես, ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը որակելով որպես բացասական, կողմնապահ եւ տարածաշրջանային մյուս երկրների շահերն անտեսող[1]:

Նկատենք, որ Իրանի ակտիվացումը տարածաշրջանում առաջ մղեց նաեւ Արեւմուտքին, որը, չնայած առկա հակասություններին, սկսեց նրա հետ միասնական ճակատով հանդես գալ: Այսպիսով՝ միջազգային առաքելությունները մրցակցության մեջ մտան: ԵԱՀԽ առաջին լրացուցիչ հանդիպմանը (մարտի 24-ին) որոշվեց ԵԱՀԽ-ի հովանու ներքո Մինսկում (Բելառուս) ԼՂ-ի խնդրով խորհրդաժողով հրավիրել, որը «ճգնաժամի խաղաղ կարգավորման նպատակով բանակցությունների համար կապահովի մշտապես գործող հանձնաժողով»[2]: Խորհրդի որոշմամբ՝ Ադրբեջանից, Հայաստանից, Բելառուսից, Գերմանիայից, Իտալիայից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Չեխիայի եւ Սլովակիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից ու Շվեդիայից բացի, խորհրդաժողովին պետք է հրավիրվեին ԼՂ-ի օրինական իշ-

[1] Բալայան Տ., նշվ. աշխ., էջ 35:
[2] http://www.nkr.am/arm/mid/process.htm.

խանությունները, բայց միայն որպես շահագրգիռ կողմ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ խորհրդաժողովի մասնակիցների մասին որոշումն ընդունվել է այն օրերին, երբ ԼՂՀ-ն գտնվում էր շրջափակման մեջ եւ հումանիտար աղետի եզրին: Մինսկի խորհրդաժողովի առաջին նախագահ Մ. Ռաֆայելիի խոստովանությամբ՝ վերացման սպառնալիքի տակ էր հայտնվել բանակցությունների բուն առարկան[1]:

ԼՂ-ի բանակցային կարգավիճակի հստակորեն կանոնակարգված չլինելը ղարաբաղյան կողմի իրավունքների եւ պարտականությունների երկակի մեկնաբանության պատճառ դարձավ: Այսօր էլ այդ հանգամանքը խաղաղարար գործընթացի արդյունավետ առաջընթացի հիմնական խոչընդոտներից մեկն է:

Պետք է փաստել, որ մարտի 24-ի որոշման մեջ հստակ երեւաց Իրանի տարածաշրջանային դերը նվազեցնելու եւ նրա միջնորդական նախաձեռնությունը չեզոքացնելու Արեւմուտքի մտադրությունը[2]:

Հատկանշական է, որ Մինսկի խումբ ստեղծելու մասին որոշման ընդունումից անմիջապես հետո ՄԱԿ-ի ԱԽ-ն 1992 թ. մարտի 26-ին որոշեց ձեռնպահ մնալ ԼՂ-ում որեւէ խաղաղարար գործողության մասնակցելուց՝ ի շահ ԵԱՀԽ-ի ջանքերին աջակցելու մասին որոշման*:

[1] Մ.Ռաֆայելիի նամակը ԵԱՀԽ գործող նախագահին, 23 սեպտեմբերի 1992թ: ԼՂՀ ԱԳՆ լրատվական կենտրոն:
[2] Բալայան Տ., նշվ. աշխ., էջ 61:
* Իսկ ԼՂՀ-ի ներկայացվածության հարցում ԵԱՀԽ-ի ոչ կառուցողական դիրքորոշումը աղավաղեց հիմնահարցի էությունը, եւ ԼՂ իշխանությունները, բնականաբար, պահանջում էին որոշակիություն: Այդ պատճառով էլ Մինսկի խորհրդաժողովի գումարման առաջին նախապատրաստական նիստերին ԼՂ-ի պատվիրակությունը բացակայում էր: Ղարաբաղի ներկայացուցիչները մասնակցեցին լոկ Հռոմի խորհրդակցության երրորդ նիստին, ըստ որում միայն մեկ՝ իր մասնակցության կարգավիճակի հարցով:

Մարտի 21-ին Ստեփանակերտ ժամանեցին Ֆրանսիայի սոցիալական եւ հումանիտար օգնության պետնախարար Բ. Կուշնեռը եւ ԵԱՀԽ-ի ներկայացուցիչ, Չեխիայի ԱԳՆ աշխատակից Ժ. Բրաունը, որոնց նպատակն էր ԼՂՀ-ին հումանիտար օգնություն ցուցաբերելը, բնակչությանն առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովելը[1]: Նրանց ընդունեցին ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը, ՆԽ նախագահ Օ. Եսայանը, ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, պաշտոնատար այլ անձինք:

Մարտի 24-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ: Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջխորհուրդների գործկոմների նախագահներ Ն. Օհանջանյանը, Ս. Սեյրանյանը, Գ. Հայրապետյանը ներկայացրին շրջաններում տիրող իրավիճակը: Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահի պաշտոնակատար Վ. Գեւորգյանն իր հերթին ներկայացրեց Ստեփանակերտ քաղաքում տիրող իրավիճակը եւ ժողովրդական պատգամավորների քաղխորհրդի գործկոմի գործունեությունը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանձնարարեց ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմին՝ քննարկել եւ միջոցներ ձեռնարկել նախագահության նիստում բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ եւ 15-օրյա ժամկետում տեղեկացնել կատարված աշխատանքների մասին[2]:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից եւ ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նա-

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 126-127:
[2] ԼՂՀ Աժ ընթացիկ արխիվ,ԳԽ նախագահության 1992թ. մարտի 24 նիստի արձանագրություն, N 15:

խարարության կազմավորումը, 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե[1] (ՊԿ):

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Ս. Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության եւ անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ եւս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երեւան մեկնեց մարտի 30-ին եւ հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկացրեց, որ նա իր տեղը պետք է զիջի ՀՀՇ-ական որեւէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին[2]:

Ուշագրավ է այն փաստը, որ մինչ այդ էլ պետական եւ ռազմական մի շարք պաշտոններում ԳԽ նախագահության որոշմամբ նշանակված էին ՀՀՇ անդամներ: Փաստորեն, Արցախում, պատերազմական դժվարին իրավիճակում, երբ դրված էր ազգի լինել-չլինելու հարցը, նորաստեղծ հանրապետության ղեկավարման հիմքը ժողովրդավարական ձեւն էր: Ի՞նչն էր ստիպում ՀՀ նախագահին գնալ այդպիսի քայլի: Հնարավոր է՝ երկյուղ էր կրում, թե ԼՂՀ-ում դաշնակցության հզորացումը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ ՀՀ ներքաղաքական կյանքի վրա: Հետագայում պարզ դարձավ, որ ՀՀ իշխանությունները ցանկանում էին ԼՂՀ-ն ներքաշել ՀՀ-ի ներքաղաքական գործընթացների մեջ. այն ժամանակվա երկու հիմնական քաղաքական ուժերից յուրաքանչյուրը ձգտում էր Ղարաբաղի գործոնն օգտագործել որպես զորեղ խաղաքարտ: Բայց նման փորձերն ապարդյուն անցան: Ղարաբաղը որդեգրել էր չմիջամտելու քաղաքականությունը՝ կախված չլինելով ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններից: Դա ստիպեց ՀՀ ղեկավարությանը՝ գոնե հաշվի նստել Ղարաբաղի իշխանությունների հետ, եթե ոչ հաշտվել:

ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ, առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության, հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահը կանգնած էր երկընտրանքի առաջ: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը: Հակված ենք կարծելու, որ Ա. Մկրտչյանի եւ ԼՂՀ-ում ՀՅԴ-ի գործունեության սխալը պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղությ ընտրելն էր, ինչի արդյունքում հարկ եղավ իշխանության մի շարք կարեւոր պաշտոններ հանձնել ընդդիմադիր կուսակցական գործիչներին: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերեւս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց ներքաղաքական քաոսային իրավիճակ:

Ապրիլի 1-ին մի խումբ դիտորդների հետ ԼՂՀ այցելեց ԵԱՀԽ-ի նախագահ, Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարար Ի. Դինսբիրը: Նրանք հանդիպում ունեցան ԼՂՀ ԳԽ նախագա-

[1] ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 160:

հի հետ եւ նույն օրը մեկնեցին Բաքու[1]: Իսկ ապրիլի 4-ին Ստեփանակերտ այցելեց ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Մ. Վայեզին, որի նպատակն էր՝ միջնորդական շրջանակներում իրականացնել տարածաշրջանում կրակի դադարեցմանն ուղղված միջոցառումներ, սակայն ադրբեջանական կողմը պատասխանեց ԼՂՀ մայրաքաղաքի հրետակոծումով, ինչի հետեւանքով միջնորդ կողմը նորից բողոք հղեց Ադրբեջանին:

Ապրիլի 3-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստը որոշեց Շուշիի շրջանի ազատագրված Մալիբեկլու գյուղի գյուղխորհրդի տարածքի չօգտագործվող հողատարածությունները հանձնել Ասկերանի շրջանի գործկոմի ու Ստեփանակերտի քաղաքային խորհրդի տնօրինությանը: Այնուհետեւ քննարկվեց ԼՂՀ իշխանության եւ կառավարման տեղական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ որոշման նախագիծը[2]: Հաշվի առնելով ռազմական գործողությունների պատճառով տեղական խորհուրդների ընտրությունների անցկացման անհնարինությունը, ինչպես նաեւ նպատակ ունենալով բարձրացնել ԼՂՀ իշխանության եւ կառավարման տեղական մարմինների աշխատանքի արդյունավետությունը՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց մինչեւ տեղական ինքնակառավարման մասին օրենքի ընդունումը եւ ԼՂՀ իշխանության տեղական մարմինների նոր ընտրությունների անցկացումը շրջանային, քաղաքային, գյուղական եւ ավանային խորհուրդներին, նրանց գործկոմներին թույլատրել բացառության կարգով գործկոմի նախագահի պաշտոնում ընտրել նաեւ տվյալ խորհրդի պատգամավոր չհանդիսացող անձանց: Անհրաժեշտության դեպքում,

[1] Нагорно-Карабахская Республика, Путь к вершинам, Степанакерт, 2001, с. 193.
[2] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ ԳԽ նախագահության 1992թ. ապրիլի 3-ի նիստի արձանագրություն N16:

հաշվի առնելով տվյալ շրջանում (քաղաքում) ստեղծված կացությունը, ժողովրդական պատգամավորների շրջանային (քաղաքային) խորհուրդների գործկոմների ղեկավարների նշանակումը պետք է իրականացվեր ԼՂՀ ԳԽ նախագահության կողմից՝ ԼՂՀ ՆԽ-ի ներկայացմամբ: Ընդ որում, շրջգործկոմներին համանման իրավունքներ վերապահվեցին իրենց ենթագերատեսչական խորհուրդների գործկոմների ղեկավարների նկատմամբ: Նստաշրջան հրավիրելու եւ գործկոմի նիստերի քվորումն ապահովելու անհնարինության պայմաններում, գործող օրենսդրությանը համապատասխան՝ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների գործկոմներին վերապահվեց սեղմ կազմերով որոշումներ ընդունելու իրավունք: Մարտակերտի եւ Հադրութի շրջանային խորհուրդների նստաշրջանների որոշումներով՝ նշված շրջանների գործկոմների նախագահների պարտականությունները մինչեւ նոր ընտրություններ անցկացնելը դրվեցին ԼՂՀ ԳԽ պատգամավորներ Ն. Օհանջանյանի (Մարտակերտի շրջգործկոմ), Գ. Հայրապետյանի (Հադրութի շրջգործկոմ) վրա: ԳԽ պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովին հանձնարարվեց արագացնել ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մասին օրենքի եւ իշխանության տեղական մարմինների ընտրությունների մասին օրենքի նախագծերի մշակումն ու ԳԽ նստաշրջանին ներկայացնելը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը հաստատեց ԼՂՀ բնակչությանն ուղղված՝ ԼՂՀ ԳԽ նախագահության, ԼՂՀ ՆԽ նախագահության դիմումի տեքստը, ուր մասնավորապես ասվում էր. «...Հայրենակիցներ, մենք ձեզ կոչ ենք անում սթափ եւ սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավա-

սար կռվում հայրենիքի անձնվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ եւս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի եւ մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով եւ կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության ապրիլի 7-ի նիստում շարունակվեցին նշանակումները գործադիր իշխանության պաշտոններում. Վ. Աթաջանյանը նշանակվեց ԼՂՀ էկոնոմիկայի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Ա. Խաչատրյանը՝ ԼՂՀ ազգային անվտանգության պետական վարչության (ԱԱՊՎ) պետի պաշտոնակատար, եւ նրանք ընդգրկվեցին կառավարության կազմի մեջ: Այնուհետեւ քննարկվեց ԼՂՀ քաղաքացիների զինվորական ծառայության՝ 1992 թ. մայիս-հունիսի զորակոչը իրականացնելու՝ ԼՂՀ ՆԽ-ի առաջարկը: Որոշվեց այն անցկացնել գործող օրենսդրության համաձայն: Վերջում լսվեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ Գ. Պետրոսյանի հաղորդումը Երեւան եւ Մոսկվա կատարած աշխատանքային այցի արդյունքների մասին[2]:

Ապրիլի 9-ին Ստեփանակերտ ժամանեց ՌԴ արտգործնախարար Ա. Կոզիրեւը եւ հանդիպում ունեցավ ԼՂՀ իշխանությունների հետ: Սակայն ԼՂՀ ԳԽ նախագահությունը մերժեց Ա. Կոզիրեւի միջնորդական առաքելությունը ղարաբաղյան հիմնահարցի

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ. 1, թ. 36-37:
[2] Նույն տեղում, թ. 38-42:

խաղաղ կարգավորման վերաբերյալ: Ինչպես հայտնի դարձավ հետագայում, ԼՂՀ իշխանությունները հայտնել էին իրենց դիրքորոշումը Ա.Կոզիրեւի առաջարկության վերաբերյալ: Ա. Կոզիրեւը առաջարկել էր ապրիլի 24-ին Մինեռալնիե Վոդի քաղաքում գումարել խորհրդաժողով, որին Ղարաբաղի կողմից պետք է մասնակցեին հայկական եւ ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները[1]: Ղարաբաղի իշխանությունները գտան, որ ցանկացած բանակցություններում ԼՂՀ-ն կարող են ներկայացնել միայն նրա օրինական իշխանությունները:

Ռազմաճակատում լարվածության հերթական բռնկումը տեղի ունեցավ ապրիլի 10-ին, երբ ադրբեջանական զինված ուժերը Միր-Բաշիրից ներխուժեցին Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղը: Ճիշտ է, ԻՊ ջոկատներին հաջողվեց ետ շպրտել թշնամուն, սակայն այդ ներխուժման հետեւանքով խաղաղ բնակչության շրջանում եղան բազմաթիվ զոհեր: Զավթիչները հիմնովին հրդեհել եւ ավերել էին գյուղը[2]: Ապրիլի 12-ին այցելելով այդտեղ՝ ադրբեջանցիների վայրագությունների վկաները դարձան ԼՂՀ ԳԽ նախագահը, այնուհետեւ Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Ք. Քոքսը, որը ապրիլի 11-ից 13-ը գտնվում էր ԼՂՀ-ում եւ իր հետ բերել էր մեծ քանակությամբ հումանիտար օգնություն, ինչպես նաեւ մի խումբ լրագրողներ[3]:

Ապրիլի 14-ի առավոտյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ[4]: Կայացվեցին հետեւյալ որոշումները. ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում փոփոխութ-

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 132:
[2] Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, պատմական, աշխարհագրական, ազգաբաշխական, պատմաճարտարապետական տուեալներ, Անթիլիաս, 1992, էջ 52:
[3] Հարությունյան Վ., նշվ.աշխ., էջ 130:
[4] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ.1, թ. 44-50:

յուններ կատարելու մասին, ԳԽ պաշտոնաթերթ ունենալու վերաբերյալ ԼՂՀ ԳԽ նախագահության որոշման կատարման մասին եւ ժողովրդական պատգամավորների Ասկերանի շրջխորհրդի գործկոմի ղեկավարի պաշտոնում փոփոխություններ կատարելու մասին (Գ. Մանգասարյանը ազատվեց զբաղեցրած պաշտոնից, եւ այդ պաշտոնին նշանակվեց Ա. Գաբրիելյանը): Այնուհետեւ լսվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հաղորդումը հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ֆինանսական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ կատարված աշխատանքների ու նախատեսվող միջոցառումների վերաբերյալ: Մարաղայի դեպքերի առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ Ադրբեջանի ղեկավարության եւ նրա բանակի բարբարոսական գործողությունները դատապարտող հայտարարությամբ:

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա. Մկրտչյանը իրենից հետո թեեւ ոչ մեծ, բայց թողեց քաղաքական ու բարոյական ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչեւ Գ.Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երեւանի հետ ծանր պայքարի պայմաններում: Այսինքն՝ Ղարաբաղը չէր միջամտում ՀՀ ներքաղաքական կյանքին եւ պահպանում էր իր չեզոքությունը:

Ուսումնասիրելով եւ վերլուծելով հետագայում երկրում ծագած ներքաղաքական իրադարձությունները՝ պետք է ասել, որ ապրիլի 14-ի կրակոցը բազմաթիվ մտորումների տեղիք է տալիս, որոնք առ այսօր պատասխան են որոնում: Խնդիրն անգամ այն չէ, թե ինչպես դա տեղի ունեցավ, ամենայն հավանականությամբ այն չբացահայտվողների դասին է պատկանում, սակայն ինչպե՞ս բացատրել փաստերի միանգամայն համընկնումները:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊԽ-ի համատեղ արտակարգ նիստ, որը նախագահում էր ԼՂՀ ԳԽ-ի նախագահի տեղակալ Գ. Պետրոսյանը[1]:

Ժամանակակիցների վկայությամբ, մինչեւ նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անզգույշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը եւ հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացվել էր Ստեփանակերտում: ԼՂՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովի առաջարկությամբ, մինչեւ հետաքննության նախնական եզրակացությունը, ԳԽ նախագահության անդամների եւ Ա. Մկրտչյանի ընտանիքի անվտանգությունն ուժեղացնելու նպատակով՝ ներքին կարգով լրահամալրվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի վրա:

[1] Նույն տեղում, թ. 51-52:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից եւ առաջնորդվելով «ԼՂՀ ԳԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով եւ 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունները դրեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալի՝ Գ. Պետրոսյանի վրա: Այնուհետեւ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ հաղորդագրությամբ, ուր նշվեց հետեւյալը. «ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն հայտնում են, որ սույն թվականի ապրիլի 14-ի երեկոյան դժբախտ պատահարի հետեւանքով ընդհատվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Ասլանի Մկրտչյանի կյանքը:

Կատարվածի հանգամանքների հետաքննության նպատակով ստեղծված է կառավարական հանձնաժողով: Ապրիլի 15-ը, 16-ը եւ 17-ը հանրապետությունում հայտարարվում են սգո օրեր»[1]:

Մահվան հանգամանքները պարզող, միաժամանակ թաղման կառավարական հանձնաժողովի կազմը հետեւյալն էր. Գ. Պետրոսյան, Վ. Բալայան, Օ. Եսայան, Հ. Խաչատրյան, Ա. Տեր-Թադեւոսյան, Ա. Իսագուլով, Ս. Սարգսյան: Ստեղծվեց նաեւ մահվան պատճառների բացահայտման բժշկական հանձնաժողով: Նույն օրը ուշ երեկոյան լսվեց ԼՂՀ իրավապահ մարմինների հաղորդումը իրականացված օպերատիվ միջոցառումների մասին: ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը նշեց, որ ստացված նախնական տեղեկությունների համաձայն, Ա. Մկրտչյանի մահը վրա է հասել տաբելային զենքի հետ անզգույշ վարվելու հետեւանքով:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ԼՂՀ ՆԽ-ն դիմում հղեցին ԼՂ ժողովրդին՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հայրենակիցներ, սույն թվի ապրիլի 14-ի երեկոյան, մոտավորապես ժամը 19-ին, դժբախտ պատահարի զոհ դարձավ ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Ասլանի

[1] Նույն տեղում, թ. 52:

Մկրտչյանը: Հայտնելով այս ծանր լուրը, դիմում ենք ձեր ողջախոհությանը, իմաստնությանը եւ հոգու կորովին: Հանրապետության համար այս ճգնաժամային օրերին երիցս կարեւորվում են մեր ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը: Ծանր կորուստը չպիտի խարխլի մեր շարքերը, չպիտի ջլատի մեր ուժերը: Մենք ձեզ կոչ ենք անում մնալ սառնասիրտ, չենթարկվել սադրանքների, դիմակայել բոլոր դավերին:

Մեր պայքարը արդարացված է, մեր որոշումը՝ անդառնալի: Արցախի ազատության եւ անկախության սուրբ գաղափարին նվիրաբերեց իր կյանքը Արթուր Մկրտչյանը: Թող արյամբ սրբագործված այս գաղափարը միավորի մեր ուժերը, համախմբի մեր շարքերը: Արթուր Մկրտչյանի հիշատակի պահպանումը նրա որդեգրած ուղուն հավատարիմ մնալն է»[1] :

Հուղարկավորությանը մասնակցելու համար Արցախ ժամանեցին ՀՀ ԳԽ պատվիրակությունը՝ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանի գլխավորությամբ, եւ մի խումբ փորձագետներ՝ Ա. Մկրտչյանի զոհվելու հանգամանքները պարզելու համար: Մի քանի օր անց փորձագետների խմբի ղեկավարը հայտարարեց, որ ողբերգության պատճառը եղել է զենքի հետ վարվելու հմտության պակասը, այլ խոսքով՝ դժբախտ պատահար[2]:

Աշխարհի բազմաթիվ երկրների կառավարություններ, հասարակական ու քաղաքական կազմակերպություններ իրենց կսկիծն ու ցավակցությունն են հայտնել իր ազատության համար մարտնչող ժողովրդի ղեկավարի ողբերգական մահվան առթիվ: Ցավակցական հեռագրեր ստացվեցին ԻԻՀ արտգործնախարարությունից, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի կառավարություններից: Հեռա-

[1] «Երկիր», 16.04. 1992թ.:
[2] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997, էջ 409:

գիր ուղարկեց նաեւ Ք. Քոքսը: Մեծ Բրիտանիայի խորհրդարանի փոխխոսնակը մասնավորապես գրել է. «Պատմությունն ապացուցում է, որ նա, ով մեռնում է հանուն ազատության եւ արդարության, երբեք չի մոռացվում: Նրանց արյունը կյանք է բերում ուրիշներին: Ես հարգանքի տուրք եմ մատուցում Ա. Մկրտչյանին, որը պատմական դեր է խաղացել Ղարաբաղի պատմության մեջ, եւ ես ամբողջովին նեցուկ կկանգնեմ ձեզ»[1]:

Այսպիսով՝ Արցախյան շարժման պատմության մեջ վրա հասավ այն նշանակալից պահը, երբ շարժումը թեւակոխեց զարգացման մի նոր շրջան. սկսվեց անկախ հանրապետության կայացման եւ գոյատեւման համար ադրբեջանական ագրեսիայի դեմ համառ պայքարի շրջանը: ԼՂՀ իշխանությունները շարունակեցին ազգային պետության կարգավիճակը անկախ պետականության հարթակ բարձրացնելու ճանապարհին պահպանել միջազգային իրավունքի բոլոր նորմերը:

ԼՂՀ-ում պետական շինարարության առանձնահատկությունն այն էր, որ հանրապետության հռչակումից հետո սկզբնավորված իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր, ապա եւ գործադիր մարմինների ձեւավորումը ընթանում էր ռազմական շինարարության խնդիրների լուծմանը զուգահեռ՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ օրենսդիր մարմինն իր գործունեության հենց սկզբից միջազգային տարբեր կոնվենցիաներին միանալու ուղեգիծ որդեգրեց՝ նպատակ ունենալով ստեղծել ազատ, իրավական եւ ժողովրդավարական պետություն:

Քանի որ ԼՂՀ-ն համաշխարհային հանրության կողմից ճանաչված չէր որպես ինքնիշխան, անկախ պետություն, եւ միջազգային կազմակերպություններում նրա արտաքին քաղաքական

[1] «Երկիր», 16.04.1992թ.:

շահերը ստիպված էր ներկայացնել միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող ՀՀ-ն, այդ բնագավառում համատեղ ջանքերն արդյունավետ համակարգելու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահության ապրիլի 20-ի նիստում որոշում կայացվեց Մ. Սարգսյանին նշանակել ՀՀ-ում ԼՂՀ-ի քաղաքական ներկայացուցիչ[1]: Իսկ ապրիլի 22-ին տեղի ունեցած նիստում որոշվեց ընդունել Հադրութի շրջգործկոմի առաջարկությունը՝ Հադրութի շրջգործկոմի իրավախորհրդատու Ռ. Հարությունյանին նույն շրջանի ժողովրդական դատավոր նշանակելու մասին: ԼՂՀ ԳԽ նախագահությունը նաեւ հաստատեց «ԼՂՀ պաշտպանության խորհրդի մասին» կանոնադրությունը, ըստ որի՝ ՊԽ կազմի մեջ ընգրկվում են ԼՂՀ ԳԽ նախագահը (ՊԽ նախագահ եւ ԻՊ ուժերի գլխավոր հրամանատար), ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալը, ինչպես նաեւ ԼՂՀ ՆԽ նախագահը, ԻՊ ուժերի հրամանատարը, ԼՂՀ պաշտպանության նախարարը, ԳԽ պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահը: Անհրաժեշտ դեպքերում, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ կամ կարգադրությամբ, ՊԽ-ի կազմի մեջ կարող են մտցվել նաեւ այլ պաշտոնատար անձինք: Որպես կանոն, ՊԽ-ի նիստերին հրավիրվում են ԼՂՀ ՆԳ նախարարը, ԼՂՀ ԱԱՊՎ պետը, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, նախագահի կարգադրությամբ՝ այլ պաշտոնատար անձինք[2]:

Կառավարության գործող օրենքներին եւ որոշումներին համապատասխան՝ ՊԽ-ին իրավունք է վերապահվում ԼՂՀ քաղաքացիներին, իրավիճակից ելնելով, ներգրավել հաղորդակցության ուղիների, կառույցների, կապի միջոցների, էլեկտրակայանների, էլեկտրացանցերի, կարեւորագույն այլ օբյեկտների պահպանության, հրդեհների, համաճարակների, այլ աղետների դեմ պայքարի

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ.1, թ. 58:
[2] Նույն տեղում, թ. 59-61:

և այլ պաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքներում: Նաեւ որոշվեց աշխատանքային ավտոսայլային պարհակ հայտարարել պաշտպանության կարիքների բավարարման նպատակով, ինչպես ձեռնարկություններից, այնպես էլ առանձին քաղաքացիներից կատարել փոխադրամիջոցների եւ անհրաժեշտ այլ գույքի ժամանակավոր առգրավում, կարգավորել հիմնարկների եւ ձեռնարկությունների աշխատանքային ժամերը, ամեն տեսակ ժողովների, երթերի եւ ցույցերի կազմակերպումը, արգելել որոշակի ժամից հետո առանց հատուկ անցագրերի փողոցում հայտնվելը, սահմանափակել փողոցային երթեւեկությունը, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում կատարել խուզարկություններ ու կասկածելի անձանց կալանքներ եւ այլն: ԳԽ նախագահությունը որոշեց ուժը կորցրած համարել Պաշտպանության խորհուրդ ստեղծելու մասին ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի թիվ 0023 որոշումը*:

Հայ-ադրբեջանական զինված հակամարտության ճակատում իրադրությունը գնալով շիկանում էր: Ծավալվող ադրբեջանական ագրեսիային դիմակայելը ԼՂՀ-ի գոյատեւման համար կարեւոր եւ կենսական նշանակություն ուներ: Դրան համապատասխան, հայկական կողմը շարունակում էր դիվանագիտական ջանքեր գործադրել միջազգային ասպարեզում՝ նպատակ ունենալով համաշխարհային հանրության գիտակցությանը հասցնել հակամարտության բուն էությունը եւ հասնել նրա խաղաղ կարգավորմանը: Եվ ահա ապրիլի վերջին ԵԱՀԽ-ի ավագ պաշտոնատար անձանց Հելսինկյան խորհրդակցությունը որոշեց հայ-ադրբեջանական առճակատման գոտիներում տեղադրել դիտորդական խմբեր[1]: Դիտորդական խմբերի ղեկավար նշանակվեց Շվեդիայի

* ԼՂՀ նախագահության որոշումը՝ ԼՂՀ ՊԽ-ի կազմը հաստատելու մասին:
[1] «Երկիր», 28.04.1992թ.:

արտգործնախարարի տեղակալ Մոսբերգը: Վերջինս բանակցային գործընթացներ սկսեց Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների հետ: Նախատեսված էր նրա այցը ԼՂՀ, սակայն անհասկանալի պատճառներով այն չկայացավ: Իսկ Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում ապրիլի 28-30-ը տեղի ունեցավ սեմինար-գիտաժողով, որտեղ շահագրգիռ երկրների մասնակցությամբ քննարկվեց Անդրկովկասում տիրող իրադրությունը՝ ԼՂ-ի, ինչպես նաեւ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հարցերը[1]: Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ ԳԽ Արցախի հարցերով հատուկ հանձնաժողովի նախագահ Ս. Բաղդասարյանը, նույն հանձնաժողովի քարտուղար Ս. Զոլյանը եւ ՀՀ նախագահի խորհրդական Ժ. Լիպարիտյանը: Հայաստանի կողմից սեմինարին մասնակցեցին նաեւ մասնագետ-գիտնականներ պրոֆեսոր Յու. Բարսեղովը եւ արեւելագետ Գ. Ասատրյանը: ԼՂՀ-ն ներկայացնում էր ԼՂՀ ԳԽ նախագահի խորհրդական Ս. Քալանթարյանը, եւ դա միջազգային հանդիպումներում ԼՂՀ իշխանությունների ներկայացուցչի առաջին հանդիպումն էր:

Ադրբեջանական կողմը ներկայացնում էին Ադրբեջանի ԳԽ նախագահի տեղակալ Թ. Կարաեւը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ի. Ղամբարը, նախագահի՝ ազգամիջյան հարցերով խորհրդական Ռ. Մուսաբեկովը եւ Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺճ) «Ազադլըգ» («Ազատություն») պաշտոնաթերթի խմբագիր Ն. Նաջաֆովը:

Երեւան վերադառնալիս հայկական պատվիրակությունը Մոսկվայում ոչ պաշտոնական հանդիպումներ ունեցավ ՌԴ ԱԳ նախարարի տեղակալի հետ: Վերջինս ընդունեց նաեւ ադրբեջանական պատվիրակությանը: Ս. Քալանթարյանի վկայությամբ, հակամարտ կողմերին առաջարկվեց արտգործնախարար Կոզիրեւի հետ

[1] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 412:

միասին մասնակցել նախաճաշի, սակայն հայկական կողմը մերժեց այդ առաջարկությունը:

Դիվանագիտական գործընթացներին զուգահեռ՝ իր գոյատեւման համար մաքառող ինքնահռչակ հանրապետությունում ոչ մի օր չէր ընդհատվում պետական շինարարության եւ պաշտպանական բնույթի հրատապ հարցերի քննարկումը եւ լուծումը: Դրա վկայությունն է ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊԽ-ի ապրիլի 27-ի համատեղ նիստը[1]: Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության համար եւ ռազմավարական տեսակետից Ստեփանակերտի օդանավակայանի առանձնահատուկ կարեւորությունը եւ ելնելով հակառակորդի հնարավոր հարձակումից նրա հուսալի պաշտպանության անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ԼՂՀ ՊԽ-ն ընդունեցին որոշում, որով օդանավակայանի պարետ նշանակվեց Ա. Մեսրոպյանը: Օդանավակայանի պարետին հանձնարարվեց օդանավակայանի պետի հետ համատեղ շտապ կազմակերպել մարդկանց ու բեռների համար նախատեսված սպասարանի շինարարությունը: Քաղաքացիների մեկնման եւ ժամանման աշխատանքը կարգավորող ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Հ. Խաչատրյանին հանձնարարվեց Ստեփանակերտի օդանավակայանից մեկնելու համար թույլտվությունները սահմանափակել մինչեւ օրական 15-20 հոգի, իսկ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադեւոսյանին՝ գործուղվող մարդկանց թիվը սահմանափակել 10-ով (բացառությամբ վիրավորների եւ զինծառայողների հատուկ խմբերի): Միաժամանակ ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովին եւ օդանավակայանի պահպանության հրամանատար Ֆ. Գաբրիելյանին հանձնարարվեց ոստիկանական եւ զինվորական հատուկ ջոկատներ հատկացնել օդանավակայանի անվտանգությունը կազմակերպելու եւ իրականացնելու համար, իսկ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադեւոսյանին՝ ապահովել հակառակորդի օդային հարձակումներից օդանավակայանի պաշտպանությունը:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 2, կ. 1, թ. 64-66:

Նույն որոշմամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ԱԱՊՎ պետ Ա. Խաչատրյանին պարտավորեցրեց նախապատրաստել մաքսատան աշխատանքի կազմակերպման նախագիծը:

Սույն որոշման կատարման վերահսկումը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի եւ ԻՊՈՒ հրամանատարի տեղակալ Ս. Բաբայանի վրա:

Որոշման հրատապությունը կայանում էր նրանում, որ որոշ ուժերի վնասակար գործունեության հետեւանքով օդանավակայանում քաոսային իրավիճակ էր ստեղծվել: Դրա պատճառներից մեկն էլ բնակչության մի որոշ մասի արտահոսքի ուժեղացումն էր, որ հուսահատության էր մատնվել եւ ամեն գնով ձգտում էր հեռանալ հանրապետությունից: Իսկ նման միտումի ուժեղացումը կարող էր հանգեցնել համընդհանուր խուճապի:

Պետք է նշել, որ մինչ այդ օդանավակայանի պահպանությունն ու ամբողջ գործունեության վերահսկողությունը իրականացվում էր ՀՀ-ից ղեկավարվող զինված ջոկատների կողմից, որոնք ապրիլի սկզբին ուղարկվել էին Ստեփանակերտ[1]: Ի դեպ, դա կատարվել էր առանց ԼՂՀ օրինական իշխանությունների հետ որեւէ պայմանավորվածության:

Այսպիսով, ռազմաքաղաքական ծանր կացությունը, ԼՂՀ տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը եւ սոցիալ-տնտեսական ծանր վիճակը ԼՂՀ իշխանություններին թելադրում էին անհետաձգելի միջոցներ ձեռնարկել երկրի նորաստեղծ պետականության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

[1] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 164:

ԼՂՀ-ում գործընթացների զարգացման մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Շուշիի ազատագրումը եւ շրջափակման ճեղքումը:

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն ապրիլի վերջերին ու մայիսի սկզբներին հասունացել էր Արցախում ադրբեջանցիների ամենախոշոր ու վտանգավոր ռազմահանգրվանի վերածված Շուշի բերդաքաղաքի ազատագրման պատմական պահը, ինչի անհրաժեշտությունը բխտորոշ էր նորաստեղծ հանրապետության համար: Կարծիքներ կան այն մասին (եւ այն ժամանակ էլ ամբողջ բնակչությունն էր սպասում), որ շուտով պետք է սկսվեր Շուշիի ազատագրման ռազմագործողությունը, սակայն ինչ-ինչ պատճառներով հետաձգվում էր: Այդ պատճառներն, իհարկե, հայտնի էին միայն ԼՂՀ քաղաքական եւ ռազմական ղեկավարությանը, իսկ բնակչության շրջանում սոսկ ենթադրություններ էին շրջում: Հակված ենք կարծելու, որ այդ ռազմագործողությունը հետաձգվում էր Ռուսաստանի դրդմամբ, քանզի նրան ձեռնտու էր, որ ռազմագործողությունն իրականացվեր հենց թեհրանյան բանակցությունների օրերին եւ խափաներ դրանք: Նման կարծիքի համար հիմք է ծառայում այն փաստը, որ Ռուսաստանի համար անցանկալի էր Հարավային Կովկասում եւ մասնավորապես ղարաբաղյան հակամարտության գոտում Իրանի քաղաքական դերի ակտիվացումը: Եվ իրոք, հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ բանակցային գործընթացից Իրանին դուրս մղելու հարցում ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ Ռուսաստանը: Պատահական չէր, որ թեհրանյան հանդիպման նախօրյակին՝ մայիսի 4-ին, պաշտոնական Մոսկվան հատուկ հայտարարությամբ ընդգծեց իր անհանգստությունը նախկին ԽՍՀՄ-ի գործերին Իրանի միջամտության կապակցությամբ եւ պնդում էր

իր մասնակցությունը ԼՂ հիմնախնդրի հարցով Իրանի կողմից կազմակերպված բանակցություններին[1]:

Մայիսի 6-ին ԻԻՀ նախագահի հրավերով Թեհրան ժամանեցին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը եւ ԱՀ նախագահի պաշտոնակատար Յա. Մամեդովը: Նրանք բանակցություններ պետք է վարեին՝ ուղղված ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Այստեղ պետք է ժամաներ նաեւ Մ. Ռաֆայելին[2]: Բանակցությունների արդյունքների հիման վրա ստորագրվեցին համաձայնագրեր, որոնք պարունակում էին կրակի դադարեցման, հաղորդակցությունների ապաշրջափակման, գերիների փոխանակման, փախստականների վերադարձի վերաբերյալ կետեր: Այդ հանդիպմանը պետք է մասնակցեր նաեւ Ա. Կոզիրեւը, բայց նա Թեհրան չմեկնեց: Եվ տարածաշրջանում ռազմական գործողությունների ուժգնացումը, ԼՂ - ներկայացուցիչների բացակայությունը Թեհրանի հանդիպմանը խափանեցին այնտեղ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը: Մինչ ընթանում էին թեհրանյան բանակցությունները, մայիսի 7-ի լույս 8-ի գիշերվա ժամը 2.30-ին սկսվեց Շուշիի ազատագրման ռազմագործողությունը:

Այն հանգամանքը, որ ոչ ԼՂՀ պետական եւ ոչ էլ ընթացիկ արխիվներում մեզ չհաջողվեց գտնել մամուլի միջոցով տարածված, իսկ հետագայում էլ Շուշիի ազատագրմանն անդրադարձած հեղինակների գրքերում[3] շրջանառություն ստացած այն հաղորդագրության իսկությունը հաստատող որեւէ փաստաթուղթ, թե մայիսի 7-ի ուշ երեկոյան տեղի է ունեցել ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊԽ-ի արտահերթ նիստ, որտեղ որոշում է ընդունվել Շուշիի

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 135:
[2] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 414:
[3] Հասրաթյան Ս.,Ղարաբաղյան պատերազմ, Երեւան, 2001, էջ 9, Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 415,
Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 136-137:

ռազմագործողությունը սկսելու մասին, նաեւ այն փաստը, որ այդ ռազմագործողությանը անմիջական մասնակցություն է ունեցել ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊԽ-ի կազմի զգալի մասը (ինչի մասին վկայում են նկարահանված եւ շրջանառության մեջ դրված տեսաժապավենները), հանգեցնում են այն մտքին, որ ռազմագործողության պլանավորումն ու անցկացման նախապատրաստությունը կատարվել են շատ ավելի վաղ: Հայտնի է նաեւ, որ հակառակորդի ուժերի ու միջոցների դասավորության հետախուզումը սկսվել էր դեռեւս մարտ-ապրիլ ամիսներին[1]: Մնում էր միայն հարմար պահին պարզապես այն սկսելու հրահանգի արձակումը:

ԻՊ ուժերի անկոտրում կամքի շնորհիվ հաջողվեց 2 օրվա ընթացքում կոտրել հակառակորդի դիմադրությունը եւ ազատագրել ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող Շուշի քաղաքը[2]:

Ադրբեջանցիները փորձեցին ընթացքում շտկել իրավիճակը: Մայիսի 10-ից նրանք մարտական գործողություններ սկսեցին ԼՂՀ հարավարեւելյան սահմանի երկայնքով՝ Մարտակերտից մինչեւ Հադրութ: Առանձնապես կատաղի մարտեր ընթացան Ասկերանի շրջանում: Գործի դրվեցին մարտական ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ: Հակառակորդը Ասկերանի ճակատից ջղաձիգ փորձեր կատարեց օգնության հասնելու յուրայիններին: Պատահական չէր, որ Շուշիի անկումից երկու օր հետո էլ Ադրբեջանի զանգվածային տեղեկատվության միջոցները իրենց ցեղակիցներին ստահոդ լուրերով էին կերակրում, թե, իբր, քաղաքը գտնվում է իրենց ձեռքին:

Մայիսի 11-ին Աղդամից եւ նույն շրջանի Գյուլափլու գյուղից հարձակում սկսվեց Մարտունու շրջանի Ավդուռ-Մյուրիշեն-

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 51:
[2] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 367:

Նորշեն հայկական գյուղերի ուղղությամբ: ԻՊ ուժերին հաջողվեց կասեցնել թշնամու գրոհը[1]:

Ինչպես ասված էր այդ իրադարձությունների կապակցությամբ հրապարակված ԼՂՀ ԳԽ նախագահության դիմումի մեջ՝ ուղղված ԼՂՀ բնակչությանը, ակնհայտ էր, որ Ադրբեջանի կառավարությունը վիժեցնում էր Ղարաբաղի հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր ջանքերը: Եվ չնայած Ադրբեջանի կողմից աննախադեպ չափերով ռազմական գործողությունների ծավալմանը՝ ԳԽ նախագահությունը ժողովրդին վստահեցնում էր, որ հետ չենք կանգնի որդեգրած ուղուց:

«Հայրենակիցներ: Հակառակորդի նկատմամբ տարած հաղթանակները չպետք է մեզ գլխապտույտի հասցնեն, - ասված էր հայտարարության մեջ: - Գիտակցում ենք, որ վաղ է վերջնական հաղթանակ ակնկալել: Շուշիի վնասազերծումը միայն մեծ հաղթանակի սկիզբն է: Հակառակորդը պատրաստ է առավելագույն զոհողությունների գնով իր խաբված ժողովրդի մոտ ձեռք բերել քանիցս չարդարացված քաղաքական արժեքուղթ: Այդ են վկայում Ասկերանի շրջանում տեղի ունեցած վերջին դեպքերը...» Այնուհետեւ ԳԽ նախագահությունը ժողովրդին կոչ էր անում դառնալ միասնական ոգի ու մարմին՝ հանուն հայրենիքի վերջնական ազատության[2]:

ԻՊ ուժերի ռազմական հաջողություններից գլուխը կորցրած՝ Ադրբեջանի ղեկավարությունը հարկադրված եղավ դիմել միջազգային կազմակերպություններին ու հարեւան տերությունների ղեկավարներին՝ հուսալով, որ նրանք ջանքեր կգործադրեն հարցը կարգավորելու եւ հնարավոր նոր բարդությունները կանխելու համար:

[1] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 419:
[2] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ ԳԽ նախագահության 1992թ. մայիսի 11-ի նիստի արձանագրություն N22:

Միջազգային հանրությունը չէր կարող անուշադրության մատնել տարածաշրջանում ավելի ու ավելի շիկացող իրադրությունը: Եվ ՄԱԿ-ի ԱԽ-ն, քննարկելով ԼՂ հիմնահարցը, որոշեց հատուկ պատվիրակություն ուղարկել հակամարտության տարածաշրջան, որը պետք է հանգամանորեն ուսումնասիրեր այնտեղ տիրող իրադրությունը եւ իր եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացներ ՄԱԿ: Պատվիրակությանը հանձնարարվեց նաեւ պարզել հակամարտության շրջանին մարդասիրական օգնություն հասցնելու հնարավոր եղանակները, իսկ տեղում հարցերը քննելիս մշտական կապ պահպանել ու խորհրդակցել ԻԻՀ եւ ՌԴ արտգործնախարարությունների հետ: ԱԽ-ի այդ նիստում արձագանք չգտավ ՀՀ ներկայացուցչի առաջարկը ՄԱԿ-ի խաղաղարար ուժեր ԼՂ ուղարկելու վերաբերյալ[1]:

Չնայած շարունակվում էին ԼՂՀ բնակավայրերի զանգվածային հրակոծումները, ԼՂՀ ԳԽ ղեկավարությունը, դիվանագիտական ասպարեզում ձեռնարկվող քայլերին զուգահեռ՝ շարունակում էր հանրապետության՝ ինչպես գործադիր իշխանական մարմինների, այնպես էլ տնտեսական ենթակառուցվածքի կատարելագործումը: Այդ ժամանակաշրջանում ԼՂՀ ԳԽ-ի դիվանագիտական քայլերից մեկը հանդիսացավ ԳԽ նախագահության մայիսի 13-ի նիստում ընդունված հայտարարությունը, որի մեջ ասված էր. «ԼՂՀ ԳԽ նախագահությունը հայտարարում է, որ պատրաստ է ըստ ամենայնի օժանդակել հակամարտության սկզբից ի վեր ամբողջ արածաշրջանով մեկ տեղափոխված բոլոր անձանց վերադարձին, նրանց ապահովելով քաղաքացիական բոլոր իրավունքներով եւ ազատություններով, եթե Ադրբեջանը հրաժարվի ինքնիշխան

[1] Ուլուբաբյան Բ.Ա., նշվ. աշխ., էջ 420:

ԼՂՀ-ի նկատմամբ ունեցած նախահարձակ ծրագրերից եւ դադարեցնի ռազմական գործողությունները»[1]:

Հաջորդ օրը՝ մայիսի 14-ին, կայացավ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ԼՂՀ ՆԽ համատեղ նիստ, որը, առաջնորդվելով ԼՂՀ ԳԽ 1992 թ. ապրիլի 3-ի «ԼՂՀ իշխանության եւ կառավարման տեղական մարմինների աշխատանքի արդյունավետությունը ուժեղացնելու լրացուցիչ միջոցառումների մասին» հրամանագրով, կայացրեց որոշում՝ Շուշիի շրջանում հաստատել ժամանակավոր վարչակարգ՝ կազմված 7 մարդուց՝ նրան օժտելով ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գործկոմի լիազորություններով[2]:

Պետականաշինության միջոցառումները ուղեկցվում էին ԻՊ ուժերի նոր հաջողություններով, որոնք շարունակում էին Շուշիի ազատագրումից հետո սկիզբ առած հաղթարշավը: Նրանք մայիսի 16-18-ը ընկած ժամանակահատվածում ազատագրեցին Շուշիի շրջանի Լիսագոր եւ Բերդաձորի բնակավայրերը, Լաչին (այժմ՝ Բերձոր) քաղաքն ու նրա շրջակա գյուղերը, ապա դուրս եկան ՀՀ-ի սահմանը:

Կարելի է ասել, դրանով ավարտվեց Արցախյան պատերազմի առաջին փուլը: Մոտավորապես 3 տարի պահանջվեց ԼՂ-ի շրջափակման օղակը զենքի ուժով վերացնելու համար: Կյանքի կոչվեց երկու հայկական հանրապետություններն իրար կապող ճանապարհը, որն այլ կերպ անվանվում էր «հումանիտար միջանցք»:

Այդ օրերին ցնծության մեջ էր գտնվում ողջ հայությունը, բայց եւ նա ուներ մեծ հոգսեր՝ կապված այդ «հումանիտար մի-

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. մայիսի 13-ի նիստի արձանագրություն N 23:
[2] ԼՂՀ պետարխիվ ֆ. 254, ց. 1, պ. մ. 3, կ. 1, թ.15-16:

ջանքով» տառապյալ արցախահայությանը անհրաժեշտ օգնություն ցույց տալու հետ: ՀՀ-ից Արցախ շտապեց առաջին ավտոշարասյունը, որը գլխավորում էր Արցախից ՀՀ ԳԽ պատգամավոր, Հայաստանի ԳԽ-ի տնտեսական հարաբերությունների եւ տնտեսական ինքնուրույնության հանձնաժողովի անդամ Ռ. Դանիելյանը: Ավելի քան 100 բեռնատար ավտոմեքենաներից բաղկացած շարասյունը Արցախ հասցրեց մեծ քանակությամբ վառելիք, սննդամթերք, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ: Ավտոշարասյան հետ Արցախ էին ժամանել արտասահմանյան լրագրողներ, քաղաքական կազմակերպությունների եւ ընկերությունների ներկայացուցիչներ[1]: Պետք է նշել նաեւ, որ Հայաստանի տարբեր շրջաններից եւ քաղաքներից ԼՂՀ ուղարկվեցին ամենաանհրաժեշտ ապրանքներով բեռնված բազմաթիվ այլ ավտոշարասյուներ:

Մայիսի 19-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը կայացրեց կարեւոր ռազմավարական որոշում՝ «Հանրապետության տարածքից որոշ արտադրատեսակների արտահանումը ժամանակավոր արգելելու, ԼՂՀ-ից մեկնող քաղաքացիների կողմից պարենային մթերքների եւ ժողովրդական սպառման ապրանքների դուրս բերման թույլատրելի նորմեր սահմանելու անհետաձգելի միջոցառումների մասին»[2]: ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի չդադարող ագրեսիայի, շարունակվող շրջափակման, ծայրաստիճան ծանր տնտեսական կացության եւ վառելիքի, պարենի սուր պակասի առնչությամբ, մինչեւ մաքսատուն ժամանելու եւ մեկնելու մասին օրենքների ընդունումը, հանձնարարվեց ԼՂՀ ՆԽ-ին 1992 թ. մայիսի 20-ից անհետաձգելի միջոցներ ձեռնարկել առանց հատուկ թույլտվության հան-

[1] Աբրահամյան Հ., նշվ աշխ., էջ 173-174:
[2] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. մայիսի 19-ի նիստի արձանագրություն N 25:

ռապետության տարածքից հետեւյալ ապրանքների դուրս բերումը ժամանակավոր արգելելու ուղղությամբ. ռազմական տեխնիկա, զենք եւ զինամթերք, պարեն, գինի, օղի, ավտոտրանսպորտ եւ դրա պահեստամասեր, վառելիք, շինանյութ, սարքավորումներ, պատմական արժեք ներկայացնող առարկաներ: Հանձնարարվեց սահմանել ԼՂՀ տարածքից մեկնող քաղաքացիների կողմից պարենի, գինու եւ օղու դուրս բերման թույլատրելի նորմեր: ԼՂՀ ԳԽ ֆինանսավարկային եւ բյուջետային մշտական հանձնաժողովը, պետական շինարարության, օրինականության եւ իրավունքի մշտական հանձնաժողովը պետք է արագացնեին մինչեւ մաքսատուն ժամանելու եւ մեկնելու մասին ԼՂՀ օրենքների մշակումը:

Մինչ ԼՂՀ իշխանությունները քայլեր էին ձեռնարկում՝ ուղղված հանրապետության պետական կառուցվածքի ամրապնդմանն ու կատարելագործմանը, միջազգային հանրակցությունը շարունակում էր ուղիներ որոնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար: Եվ ահա մայիսի 18-19-ը Հելսինկիում ԵԱՀԽ ավագների խորհուրդը որոշում կայացրեց ԵԱՀԽ հովանու ներքո ԼՂ հարցով Մինսկի խմբի մասնակից պետությունների արտակարգ նախապատրաստական հանդիպում անցկացնելու վերաբերյալ[1]:

Իսկ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ձեռնարկեց պետական շինարարության իր հաջորդ քայլը՝ մայիսի 23-ի նիստում որոշում կայացնելով ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը հրավիրել 1992 թ. հունիսի 2-ին: ԳԽ նախագահությունը այդպիսի որոշում կայացրեց՝ հաշվի առնելով ԼՂՀ-ում ստեղծված գերլարված իրավիճակը, ԳԽ որոշ ղեկավար պաշտոնների թափուր լինելը, կառավարության կազմի համալրման անհրաժեշտությունը եւ այն հանգամանքը, որ հանրապետության համար կենսական նշա-

[1] Нагорно-Карабахская Республика: Путь к Вершинам. с. 194.

նակություն ունեցող մի շարք որոշումների եւ օրենքների ընդունումն ու կենսագործումը վերապահվեց ԼՂՀ ԳԽ նստաշրջանին: Միաժամանակ լուծարվեց 1992 թ. մարտի 17-ի եւ մայիսի 13-ի որոշումներով հանրապետության սահմաններից դուրս քաղաքացիների մեկնման համար ստեղծված ժամանակավոր հանձնաժողովը: ՆԽ-ին հանձնարարվեց ապահովել հանրապետության սահմաններից դուրս ավտոբուսային երթեւեկության կայուն աշխատանքը՝ ղեկավարվելով ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մայիսի 19-ի «Հանրապետության տարածքից որոշ արտադրատեսակների արտահանումը ժամանակավոր արգելելու, ԼՂՀ-ից մեկնող քաղաքացիների կողմից պարենային մթերքների եւ ժողովրդական սպառման ապրանքների դուրս բերման թույլատրելի նորմեր սահմանելու անհետաձգելի միջոցառումների մասին» որոշման պահանջներով: Մարդասիրական օգնության բաշխումը վերահսկելու համար ստեղծվեց պատգամավորական հանձնաժողով՝ հետեւյալ կազմով. Ս. Աղաբալյան (հանձնաժողովի նախագահ), Մ. Պետրոսյան, Բ. Բաբայան, Ա. Սարգսյան, Հ. Ավետիսյան, Ա. Մանուչարով: Ստուգման արդյունքների մասին ԼՂՀ ԳԽ նախագահությանը պետք է տեղեկացվեր մինչեւ 1992 թ. մայիսի 30-ը[1]:

Իսկ ռազմաճակատում մայիսյան վերջին օրերին էական փոփոխություններ չարձանագրվեցին, սակայն ադրբեջանական զինված կազմավորումներն ամեն օր հրթիռակոծում էին Հադրութից մինչեւ Շահումյան ընկած ամբողջ տարածությունը: Մայիսի 24-ին պատերազմի ողջ ընթացքում առաջին անգամ թշնամին «Երկիր-երկիր» հրթիռներ արձակեց Շահումյան շրջկենտրոնի եւ նույն շրջանի Կարաչինար հայաբնակ գյուղի ուղղությամբ:[2]:

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. մայիսի 23-ի նիստի արձանագրություն N 26:
[2] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 433:

Քանի որ Ադրբեջանի իշխանությունները ըստ ամենայնի ընդլայնում էին ԼՂՀ-ի դեմ ագրեսիայում իրենց մարտական զինանոցը՝ խաղաղ բնակչության դեմ կիրառելով ավելի ու ավելի հզոր զինատեսակներ, մայիսի 26-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ՄԱԿ-ի ԱԽ-ին: Իրազեկելով ԼՂՀ-ի քաղաքական անկախության դեմ ԱՀ-ի չդադարող ակտիվ ռազմական գործողությունների մասին եւ ներկայացնելով քաղաքների ու գյուղերի ավերման, բոլորովին անմեղ մարդկանց զոհվելու, մթերքների, դեղորայքի, ջրի, էլեկտրաէներգիայի պակասության, ինչպես նաեւ գազի մատակարարումների դադարեցման պատճառով հանրապետությունում ստեղծված ծանր կացությունը, ԼՂՀ ԳԽ-ն հաղորդում էր նաեւ այն մասին, որ Ադրբեջանի ազգային բանակը զանգվածային ոչնչացման զենք է օգտագործում խաղաղ բնակչության դեմ: «Ծանրագույն հանցագործություն է կատարվում մարդկության դեմ,- մասնավորապես ասվում էր հայտարարության մեջ: - Խախտվում են Ժնեւի՝ 1925 թ. արձանագրությամբ ստանձված պարտավորությունները, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 14.11.1974 թ. բանաձեւը, «Պատերազմի զոհերի պաշտպանության մասին» Ժնեւյան համաձայնագրերը, որոնք վերաբերում են զինված հակամարտությունների ժամանակաշրջանում մարդու իրավունքների հարգմանը:

Վերոհիշյալ հանգամանքները միջազգային իրավասուբյեկտ հանդիսացող ԼՂՀ-ի ղեկավարությանը պարտավորեցնում են ՄԱԿ-ի կանոնադրության 52-րդ հոդվածին համապատասխան ձեռնարկել անհատական ինքնապաշտպանական բոլոր միջոցները... Անվտանգության խորհրդին իրազեկելով մեր կողմից ձեռնարկվող անհատական ինքնապաշտպանության միջոցների մասին, խնդրում ենք հավաստել ԼՂՀ-ի նկատմամբ ԱՀ-ի կողմից ագրե-

սիայի ակտի առկայությունը եւ ագրեսորի դեմ կիրառել ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված հատուկ միջոցառումներ»[1]:

Հունիսի 1-6-ը Հռոմում կայացավ խորհրդակցություն, ուր քննարկվեց ղարաբաղա-ադրբեջանական բարդույթը: Որոշում ընդունվեց հունիսի 23-ին 11 տերությունների պատվիրակների մասնակցությամբ լայն քննարկում անցկացնել Մինսկում: Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ առաջ քաշվեցին մի շարք առաջարկություններ: Այստեղ ՀՀ պատվիրակությունը Վաշինգտոնին եւ Մոսկվային մեղադրեց ԼՂՀ-ի հանդեպ սանձազերծած ագրեսիայի համար Ադրբեջանի վրա բավարար չափով ճնշում չգործադրելու մեջ[2]:

Ինչ վերաբերում է խորհրդաժողովում ԼՂՀ ներկայացուցիչների բացակայությանը, որը, ինչպես գտնում էր խորհրդաժողովի ղեկավար Մ. Ռաֆայելին, չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել քննարկման արդյունքի վրա[3], հարկ ենք համարում ընդգծել, որ ԼՂՀ իշխանություններն իրենց հստակ դիրքորոշումն ունեին խորհրդաժողովում ԼՂ-ի ներկայացուցիչների կարգավիճակի մասին: Այդ առնչությամբ դեռեւս մայիսի 4-ին ԼՂՀ ԳԽ արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանը Մոսկվայում հայտարարեց, որ ԼՂ-ն դեմ է Ա. Կոզիրեւի առաջարկությանը՝ ԼՂ հարցերով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովին Ղարաբաղի հայկական եւ ադրբեջանական համայնքների մասնակցության վերաբերյալ: Արցախյան կողմի մասնակցությունը կկայանա այն դեպքում, եթե խորհրդաժողովին մասնակցեն ԼՂՀ օրինա-

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. մայիսի 26-ի նիստի արձանագրություն N 27:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 179:
[3] Նույն տեղում:

կան ընտրված ղեկավարները, որի պատվիրակության կազմում կարող է լինել նաեւ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ[1]:

Այսպիսով՝ ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին եւ Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջեւ: Դա կարելի է համարել ազատագրական պայքարում արցախահայության ամենամեծ ռազմական ու քաղաքական նվաճումներից մեկը եւ կարեւոր գրավական՝ ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Վերլուծելով ԼՂՀ-ում 1992 թ. հունվար-մայիս ամիսներին տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները՝ գալիս ենք այն համոզման, որ նույնիսկ շոշափվող ներքաղաքական անկայունության եւ սաստկացող ռազմագործողությունների պայմաններում ԼՂՀ իշխանությունները ընտրել են զարգացման ժողովրդավարական ուղին, իսկ բանակցային գործընթացի անարդյունավետության հիմնական պատճառը եղել է միջազգային հանրության կողմից ժամանակի պահանջներին համապատասխանող քայլեր չձեռնարկելը: Գործնականում բանակցային ձեւաչափը չէր արտացոլում ղարաբաղյան հակամարտության էությունը:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 136:

3. *Պայքար ԼՂ-ի պետականության պահպանման ու ամրապնդման համար (1992 թ. հունիս-օգոստոս):*

Շուշիի ազատագրումից եւ շրջափակման ճեղքումից հետո թվում էր, թե ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց հակառակը: Դա վառ կերպով դրսեւորվեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որի աշխատանքը անհրաժեշտ ենք համարում լուսաբանել փոքր-ինչ մանրամասնորեն, քանզի այդ նստաշրջանը ուղենիշային եւ բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ-ի քաղաքական կյանքում:

Նստաշրջանը, ինչպես նախատեսված էր, իր աշխատանքն սկսեց հունիսի 2-ին: Նրան մասնակցում էր 51 պատգամավոր: Քննարկման դրվեցին նաեւ երկուս ու կես տասնյակ կարեւորագույն հարցեր եւ օրինագծեր:

Նստաշրջանին մասնակցելու համար ԼՂՀ էին ժամանել Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Ք. Քոքսը, ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը, ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վ. Շիրխանյանը, ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԳԽ պատգամավորներ Կ. Բալայանը*, Դ. Վարդանյանը եւ ուրիշներ: Նշենք մի ուշագրավ հանգամանք. ՀՀ-ից եկած պաշտոնական պատվիրակության՝ ԼՂՀ ԳԽ նախագահ ընտրելու վերաբերյալ պահանջը արդեն հայտնի էր պատգամավորներին: Նստաշրջանը վարում էր ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը: Նա իր ելույթում ներկայացրեց հինգ ամսում ԼՂՀ ԳԽ ղեկավարության կատարած աշխատանքը:

Մինչեւ ԳԽ նախագահի եւ նրա առաջին տեղակալի ընտրությունների անցկացումը խոսքը տրվեց ՀՀ ներկայացուցիչներին: Այնուհետեւ ԳԽ նստաշրջանը աշխատանքը շարունակեց դռնփակ նիստով, որտեղ ելույթ ունեցան ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը եւ ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը: Նրանք ՀՀ ղեկավարության տեսակետները հայտնեցին ԼՂՀ-ին առնչվող քաղաքական, տնտեսական, ռազմական եւ այլ հարցերի շուրջ՝ միաժամանակ հաղորդելով ԼՂՀ ԳԽ նախագահի «բարեհաջող» ընտրությունից հետո ՀՀ-ից սպասվող ծրագրված օգնության մասին:

Պատգամավորների քվեարկությամբ ընդունվեց ԼՂՀ պետական դրոշը (կարմիր, կապույտ, նարնջագույն, որի աջ փոքրիկ հատվածը եռանկյունի սպիտակ գծով անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդանշում է թե՛ Արցախի այսօրվա կացությունը, թե՛ նրա ապագան):

Ինչպես ժամանակին ասել է ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, այդ վերջին տարբերակի մասին խոսել է ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Ա. Մկրտչյանը[1]:

Հունիսի 3-ի առավոտյան նիստում խորհրդարանն անցավ օրակարգի չորրորդ հարցին՝ ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրություններին: Նախագահի թափուր պաշտոնի համար առաջադրվեցին Ռ. Քոչարյանի եւ Գ. Պետրոսյանի թեկնածությունները: Պատգամավոր Հ. Խաչատրյանն առաջարկեց նախքան թեկնածուների նախընտրական ծրագրերը լսելը ստանալ ՀՀ ԳԽ պատվիրակության հավաստիացումն առ այն, որ ընտրության արդյունքները չեն անդրադառնա ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի փոխհարաբերությունների վրա: Նման

* Նստաշրջանի ժամանակ լուր տարածվեց ՀՀ ԳԽ պատգամավոր Կ.Բալայանի առեւանգման մասին, ինչի հետեւանքով քաղաքական մեծ աղմուկ բարձրացավ, եւ որոշ ժամանակ անց նա ազատ արձակվեց: Պատահարի հանգամանքները պարզելու համար ստեղծվեց պատգամավորական հանձնաժողով՝ հետեւյալ կազմով. Հ. Գրիգորյան, Կ. Բաբուրյան,Վ. Գրիգորյան, Ռ. Աղաջանյան, Հ. Խաչատրյան:

[1] «Երկիր», 03 06.1992թ.:

հավաստիացումներ ստանալով ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանից, որը նաեւ ընդգծեց հարցի երկկողմանիությունը, խորհրդարանը թեկնածուներին հնարավորություն տվեց ներկայացնել իրենց ծրագրերը եւ պատասխանել հարցերին[1]:

Փակ գաղտնի քվեարկության առաջին փուլում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանն իր մրցակցից 7 ձայն ավելի (30) ստացավ, սակայն դա բավական չէր ընտրվելու համար, քանի որ պահանջվում էր ստանալ ընտրող պատգամավորների երկու երրորդի (41) աջակցությունը:

Դարձյալ ԳԽ նախագահի թեկնածուներ առաջադրվեցին Գ. Պետրոսյանն ու Ռ. Քոչարյանը, ինչպես նաեւ Լ. Պետրոսյանն ու Վ. Գալստյանը: Սակայն վերջին երկուսը հանեցին իրենց թեկնածությունները: Քվեարկությունից առաջ պատգամավորներն իրենց կարծիքը հայտնեցին ստեղծված կացության եւ թեկնածուների մասին: Երկրորդ անգամ ելույթ ունենալով՝ ՀՀ պաշտպանության նախարար Վ.Սարգսյանը նորից պատգամավորների ուշադրությունը հրավիրեց անձամբ իր եւ ՀՀ իշխանությունների դիրքորոշման վրա: Քվեարկության երկրորդ փուլն ավարտվեց հետեւյալ արդյունքներով. Գ. Պետրոսյանի օգտին՝ 26, Ռ. Քոչարյանի օգտին՝ 27 ձայն: Քվեարկությունից անմիջապես հետո կրկին ելույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը՝ պաշտպանելով Վ. Սարգսյանի տեսակետը: Ապա հանդես եկան ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները:

Հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, պատգամավորները նախ քննարկեցին ԼՂՀ պատվիրակության՝ ԵԱՀԽ-ի նիստին մասնակցելու նպատակով Հռոմ մեկնելու հնարավորություններն ու նպատակահարմարությունը: Ելույթ ունեցող պատգամավորները քննադատության ենթարկեցին ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքա-

[1] «Արցախ», 08.06.1992թ.:

կանությունը՝ նրանց մեղադրելով վերջին ժամանակները մի շարք փաստաթղթեր ստորագրելու համար, որոնցում ԼՂ-ն հանիրավի դիտվում էր Ադրբեջանի կազմում:

Մինչեւ ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուների առաջադրմանն անցնելը, խորհրդարանը որոշեց, որ յուրաքանչյուր թեկնածու կարող է քվեարկվել երեքից ոչ ավելի անգամ: Ապա վերստին առաջադրվեցին Ռ. Քոչարյանի ու Գ. Պետրոսյանի թեկնածությունները՝ այս անգամ, սակայն, Շ. Մեղրյանի, Վ. Հակոբյանի եւ Բ. Առուշանյանի թեկնածությունների «ընկերակցությամբ»: Վերջին երկուսն իսկույն հանեցին իրենց թեկնածությունները, ապա անսպասելիորեն ինքնաբացարկ տվեցին Գ. Պետրոսյանը եւ Ռ. Քոչարյանը:

Թեկնածու Շ. Մեղրյանը հանդես եկավ նախընտրական ծրագրով, պատասխանեց պատգամավորների հարցերին, եւ գաղտնի քվեարկության թերթիկ մտցվեց միայն Շ.Մեղրյանի ազգանունը: Նրա օգտին քվեարկեց 33 պատգամավոր: Արդյունքում ԳԽ նախագահի պաշտոնը կրկին մնաց թափուր:

Մտքերի փոխանակությունից եւ դարձյալ համաձայնության չգալուց հետո որոշվեց նիստն անցկացնել դռնփակ: Փակ նիստում պատգամավորները պաշտպանեցին ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի առաջարկը՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կազմավորել կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համաձայնեցնող հանձնաժողով: Բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Գ. Պետրոսյանը, Շ. Մեղրյանը, Լ. Մելիք-Շահնազարյանը, Վ. Բալայանը՝ մի կողմից, եւ Ռ. Քոչարյանը, Լ. Պետրոսյանը, Օ. Եսայանը, Ս. Սարգսյանը՝ մյուս կողմից:

Հունիսի 5-ի առավոտյան նիստն սկսելիս պատգամավորներն իմացան, որ բանակցություններն անպտուղ են անցել: Ինչպես հայտնի դարձավ, մի կողմը պաշտպանել է Շ.Մեղրյանի թեկնածությունը, իսկ մյուսը կողմը առաջարկել է ԼՂՀ-ում մտցնել նա-

խագահական կառավարում[1]: Այնուհետեւ Շ. Մեղրյանը հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ ԳԽ նախագահի համար իր թեկնածության առաջադրվելուց հետո նստաշրջանի ընդմիջումների ընթացքում ետնաբեմում հնչել են տարբեր հայտարարություններ. իբր ԻՊՈՒ ստորաբաժանումները խանգարում են նստաշրջանի աշխատանքին, ինչպես նաեւ խոսակցություններ են եղել Շահումյանի շրջանի պատվիրակության հասցեին, թե ինչու ԼՂՀ ԳԽ նախագահը պիտի ընտրվի Շահումյանի շրջանից: Ի նշան վիրավորվածության՝ Շահումյանի շրջանի պատվիրակությունը հեռանում է դահլիճից[2]: Ստեղծվում է մի իրադրություն, որը կարող էր հանգեցնել ներքին ընդհարումների: Նշենք նաեւ, որ առաջարկություններ են եղել իշխանությունը տալ բանակին եւ ցրել խորհրդարանը[3]:

Պատգամավոր Վ. Հայրիյանը կարդաց ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարական կազմի դիմումը խորհրդարանին: Որոշվեց ԼՂՀԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադեւոսյանին եւ Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազան Մարտիրոսյանին հրավիրել նստաշրջան: Ընդմիջումից հետո ելույթ ունեցավ ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վ. Շիրխանյանը: Նա իր ելույթով հասկացրեց, որ առճակատումը ՀՀ իշխանությունների հետ կարող է հանգեցնել բացասական հետեւանքների: Այնուհետեւ ելույթ ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, նշելով, որ ինքը այժմ հանդես է գալիս որպես իր ժողովրդի ճակատագրով մտահոգված արցախցի եւ անհանգստացած է Վ. Սարգսյանի այն հայտարարությամբ, թե, իբր, Հայաստանը ներքաշվել է պատերազմի մեջ, եւ այդ ամենը կատարվել է դաշնակցության մեղքով:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 4, պ. մ. 1, կ. 1, թ. 98:
[2] Նույն տեղում, թ. 95:
[3] Նույն տեղում, թ. 86:

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին մի շարք պատգամավորներ, այդ թվում ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադեւոսյանը: Նա պատգամավորներին մասնավորապես հաղորդեց ԼՂՀ սահմանում ադրբեջանական ուժերի կուտակման մասին եւ առաջարկեց վերջ դնել երկպառակությանը[1]:

Ի վերջո, ձայների ճնշող մեծամասնությամբ որոշվեց ԳԽ նախագահի ընտրությունները հետաձգել մինչեւ հուլիսի վերջը՝ խորհրդարանի պատգամավորական թափուր տեղերի համար կրկնական ընտրությունների անցկացումից հետո:

Երեկոյան նիստում պատգամավորներն անցան «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքի քննարկմանը, ապա եւ ընդունեցին այն: Նիստի վերջում նրանք ձեռնամուխ եղան ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի ստեղծմանը:

Հունիսի 6-ին նստաշրջանն առաջին ընթերցմամբ ընդունեց զինապարտության եւ զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին ԼՂՀ օրենքները, որոնք միտված էին հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակի կայունացմանը: Պատգամավորները չկարողացան որոշումներ կայացնել եւս մի շարք օրախնդիր հարցերի վերաբերյալ: Նստաշրջանն ընդհատվեց անբավարար թվով պատգամավորների ներկայության պատճառով, քանի որ սահմանային շրջաններում վիճակը վատթարացել էր, եւ մի շարք պատգամավորներ, լինելով ԻՊՈՒ ստորաբաժանումների մարտիկներ եւ հրամանատարներ, շտապ մեկնեցին ճակատային գիծ: Որոշվեց նստաշրջանի աշխատանքը շարունակել հունիսի 17-ին:

[1] Նույն տեղում, թ. 94:

Այսպիսով, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը ցույց տվեց, որ, ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում ոչ միայն չէին մարել ներքաղաքական հակասությունները, այլեւ, կարելի է ասել, դրանք զարգանում էին արդեն կայծակնային արագությամբ: Դրանում կարեւոր դեր են խաղացել արտաքին ուժերը, որոնք ամեն գնով ձգտում էին իշխանափոխություն իրականացնել ԼՂՀ-ում:

Ի հաստատումն ԳԽ նստաշրջանում ԻՊՈՒ հրամանատարի նախազգուշացմանը, 1992 թ. հունիսի առաջին տասնօրյակում նկատելիորեն ակտիվացան հակառակորդի գործողությունները ԼՂՀ սահմանագծի ողջ երկայնքով: Նա կենդանի ուժեր եւ զրահատեխնիկա էր կենտրոնացնում ղարաբաղա-ադրբեջանական զինված կազմավորումների շփման գծում՝ միաժամանակ ավելի ուժգնացնելով ԼՂՀ բնակավայրերի հրթիռահրետակոծությունները: Կարելի էր ենթադրել, թե հակառակորդը այդպիսով արձագանքում էր ԼՂՀ նստաշրջանում ներքաղաքական կրքերի շիկացմանը՝ ասես հուշելով, որ նման ներքաղաքական մթնոլորտը անչափ ձեռնտու է իրեն: Եվ ահա, հունիսի 12-ին ռազմաճակատի հյուսիսարեւելյան հատվածներում հարձակման անցնելով շուրջ 120 կմ երկարությամբ, նա կարողացավ մի քանի օրում գրավել Շահումյանի շրջանը եւ Մարտակերտի ու Ասկերանի շրջանների մի շարք գյուղեր: Այդ առնչությամբ հունիսի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն հանդես եկան հետեւյալ հայտարարությամբ. «Երեկ ադրբեջանական ազգային բանակը ավիացիայի եւ մեծաքանակ զրահատեխնիկայի աջակցությամբ, հրթիռահրետանային ուժեղ հրակոծությունից հետո, խոշորածավալ հարձակում է ձեռնարկել ԼՂՀ հյուսիսարեւելյան, արեւելյան եւ հարավարեւելյան հատվածներում:

Մարտակերտի եւ Ասկերանի շրջաններում հրի են մատնվել մի շարք գյուղեր: Ադրբեջանական բանակն օգտագործում է քիմիական զենք, հայկական բնակավայրերի վրա նետվում են թունավոր նյութերով ավիառումբեր: Ինքնապաշտպանության ուժերի մարտիկների եւ խաղաղ բնակչության շրջանում կան սպանվածներ ու վիրավորներ, զանգվածային թունավորումներ:

Ձեռնարկված մարտական գործողությունների մեծածավալությունն ու բնույթը վկայում են վաղօրոք նախատեսված գործողության մասին: Ադրբեջանի չքողարկված ագրեսիան մենք գնահատում ենք որպես հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ միջազգային ընկերակցության ջանքերի կասեցմանն ուղղված կանխամտածված գործողություններ:

Տարածաշրջանում լարվածության հետագա ծավալման ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Ադրբեջանի քաղաքական եւ ռազմական ղեկավարության վրա:

Ինքնապաշտպանության ուժերը ձեռնարկում են բոլոր միջոցները ԼՂՀ-ի ինքնիշխանությունը եւ անկախությունը պաշտպանելու համար»[1]:

Այստեղ լիովին բնականոն հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ վերջին պարտություններից հետո բարոյալքված ադրբեջանական բանակը, որն ի վիճակի չէր լայնածավալ ռազմագործողություն վարել, հանկարծ կարողացավ այդքան մեծ հաջողություններ հասնել շատ կարճ ժամանակահատվածում: Չէ՞ որ Ադրբեջանի ներքաղաքական ճգնաժամը չէր կարող նպաստել ադրբեջանական բանակի մարտական ոգու վերելքին: Ընդհակառակը, այդ ճգնաժամը ավելի էր խարխլում նրա մարտունակությունը:

Պետք է նշել նաեւ, որ տվյալ ժամանակաշրջանի ոչ բոլոր քաղաքական իրադարձություններն են հայտն գիտական շրջանակներին եւ բացահայտում են պահանջում: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաեւ նրա քա-

[1] «Արցախ», 15. 06. 1992թ.:

ղաքական երկարատեւ շահարկումները, հեղինակները հիմնակա-
նում շրջանցել են՝ լավագույն դեպքում տուրք տալով ծայրահե-
ղությունների: Շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ
Շահումյանի եւ Մարտակերտի անկման վերաբերյալ: Սակայն, ինչ-
պես էլ լինի, պարզ է մնում մի բան. ԼՂՀ եւ ՀՀ ուժային համակար-
գերը գիտեին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների
մասին[1]:

Շահումյանի եւ Մարտակերտի անկումը մեծ քաղաքական
աղմուկ բարձացրեց ՀՀ-ում: Լարվեց ներքաղաքական դաշտը: Փո-
խադարձ մեղադրանքներ հնչեցին. Շահումյանում տեղակայված
հայաստանյան կամավորական ստորաբաժանումները մեղադրվե-
ցին դիմադրություն ցույց չտալու եւ խուճապ առաջացնելու մեջ:
Իսկ ՀՀ իշխանությունները մեղադրում էին ԼՂՀ ղեկավարությանը[2]:
Մեղադրվում էին նաեւ ԻՊՈՒ Շահումյանի շրջանային շտաբն ու
հրամանատարությունը՝ դիմադրություն չկազմակերպելու համար,
իսկ վերջիններս էլ, ի դեմս Շ. Մեղրյանի՝ ԼՂՀ ԻՊՈՒ շտաբին... Շ.
Մեղրյանը մի հարցազրույցում հայտարարել է, որ «իր հայրենիքի
կորուստը ռազմաքաղաքական պարտություն էր, վերին ղեկավա-
րության ապիկարության արդյունք», իսկ ինքն ու յուրայիններն ա-
մեն ինչ կանեն հայրենի հողը թուրքի գերեզման դարձնելու հա-
մար: Միայն թե ամբողջ հայ ժողովուրդն օժանդակի, թեւ ու թի-
կունք լինի[3]: Եվ նա, ինչպես հայտնի է, իր հրամանատարության
տակ գտնվող ԻՊ ջոկատներով պարտիզանական պայքար ծավա-
լեց թշնամու կողմից զավթված հայրենի շրջանում:

Իսկ Արցախում ԼՂՀ ԳԽ նախագահությունը համառորեն
ջանքեր էր գործադրում ստեղծված ճգնաժամային իրավիճակից

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 4, պ. մ. 1, կ. 1, թ. 94:
[2] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 463:
[3] Նույն տեղում, էջ 484:

դուրս գալու շահեկան ուղիներ գտնելու համար: Հունիսի 16-ին
տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստ, որ-
տեղ քննարկվեցին օրախնդիր մի շարք հարցեր[1]: ԼՂՀ ԳԽ նախա-
գահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը տեղեկացրեց Երեւան եւ
Մոսկվա կատարած պաշտոնական այցերի արդյունքների մասին:
Հանրապետության օպերատիվ իրադրության մասին ԼՂՀ ՆԳ նա-
խարար Ա. Իսագուլովի հաղորդումից հետո ընթերցվեց Շահումյա-
նի շրջխորհրդի գործկոմի նախագահ Շ. Մեղրյանի հեռախոսագի-
րը շրջանում տիրող իրավիճակի մասին: ԼՂՀ ԳԽ նախագահությու-
նը հանձնարարեց ԼՂՀ ՆԽ-ում ստեղծել Շահումյանի շրջանից
բռնագաղթած հայ բնակչության ընդունումը, տեղավորումը համա-
կարգող շտաբ: Ելնելով հանրապետությունում տիրող բարդ իրա-
վիճակից՝ որոշվեց ԼՂՀ ԳԽ նստաշրջանի աշխատանքը վերսկսել
ոչ թե հունիսի 17-ին, ինչպես նախատեսված էր, այլ՝ հունիսի 30-
ին:

Նկատի ունենալով Ադրբեջանի ազգային բանակի աննա-
խադեպ լայնածավալ հարձակման ծանր հետեւանքներն ու ԼՂՀ-ին
սպառնացող վտանգը՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմեց աշխար-
հի բոլոր հայորդի սպաներին, կադրային զինվորականությանը,
հայկազուն երիտասարդությանը՝ կոչ անելով «գալ Արցախ եւ զո-
րավիգ լինել հայրենիքի ազատության նվիրական նպատակին»:

Հաջորդ օրը՝ հունիսի 17-ին, ԼՂՀ ՊԽ-ն հանդես եկավ հայ-
տարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում էր. «Առաջնորդ-
վելով մարդասիրական սկզբունքներով եւ հարգելով կրոնական
զգացմունքները, ինչպես նաեւ բնակչության շրջանում համաճա-
րակի բռնկումը կանխելու նպատակով, ԼՂՀ ՊԽ-ն Ադրբեջանի
զինյալ կազմավորումներին առաջարկում է ռազմաճակատի ամ-
բողջ երկայնքով 10 ժամ դադարեցնել ռազմական գործողություն-

[1] «Արցախ»,18. 06.1992թ.:

ները՝ սկսած հունիսի 17-ի ժամը 10-ից: Այդ ընթացքում ԼՂՀ ԻՊՈՒ-ին հնարավորություն կտրվի հավաքել ընկած ադրբեջանցի զինվորների դիակները, որոնց թիվը ռազմաճակատի միայն մի հատվածում 400-ից ավելի է»[1]: Սակայն ադրբեջանական կողմը չընդունեց այդ առաջարկը եւ շարունակեց լայնածավալ հարձակումը: Կրելով բազմաթիվ կորուստներ՝ նա հաջողությունների հասավ Մարտակերտի շրջանում, առաջ շարժվեց Նարեշտար-Կիչան-Սրխավենդ ճակատային հատվածում, ինչի հետեւանքով Մարտակերտը Ստեփանակերտի հետ կապող մայրուղին փաստորեն հայտնվեց փակվելու վտանգի տակ: Իսկ դա նշանակում էր Մարտակերտի եւ Շահումյանի շրջանների ամբողջ տարածքի անջատում հանրապետությունից: Հակառակորդը մոտեցավ Ասկերանին, միաժամանակ մարտեր ընթացան Մարտունու շրջանի Նորշեն, Մյուրիշեն, Ավդուռ գյուղերի ուղղությամբ: Այդ օրերին ՀՀ կողմից տրամադրված ռազմական օգնությունը դեռեւս նշանակալի չէր[2]: Ստեղծվեց անմխիթար վիճակ, հանրապետության գոյությունը հարցականի տակ էր: Ծանր կացությունից դուրս գալը եւ ծառացած բարդ հարցերի լուծումը առանց կարգուկանոնի եւ ուժերի ու միջոցների համախմբման՝ անհնար էր: Դրանից ելնելով՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն հունիսի 18-ին համատեղ նիստում քննարկեցին հանրապետությունում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը: Որոշվեց հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարել մեկ ամիս ժամկետով: Դա նպատակ էր հետապնդում՝ հնարավորություն ստեղծել հակառակորդի հարձակողական գործողությունների հետեւանքները վերացնելու եւ հանրապետությունում օրինականությունն ու կարգապահությունն ամրապնդելու համար: Միաժամանակ ընդլայնվեց

[1] Նույն տեղում:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 176:

ՊԽ-ի կազմը՝ նրան տալով ԼՂՀ պետական իշխանության եւ կառավարման մարմինների կարգադիր եւ գործադիր լայն լիազորություններ: ՊԽ-ի կազմի մեջ մտան ՊԿ նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ՆԳ նախարար Ա. Իսագուլովը, ԼՂՀ ԱԱՊՎ պետ Ա. Խաչատրյանը, ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանը, հատուկ տնտեսական ծրագրերի վարչության պետի տեղակալ Լ. Պետրոսյանը[1]: ԼՂՀ «Արտակարգ դրության մասին» օրենքի 20-21 հոդվածներին համապատասխան՝ արգելվեց առանց հատուկ թույլտվության ԼՂՀ փոխադրամիջոցների եւ քաղաքացիների մեկնումը հանրապետությունից: Թշնամու ագրեսիային ըստ ամենայնի դիմագրավելու նպատակով՝ որոշվեց հունիսի 20-ից հանրապետության տարածքում անցկացնել մասնակի զորահավաք՝ զորակոչել 18-40 տարեկան զինապարտներին, մինչեւ 50 տարեկան սպաներին, 19-ից 30 տարեկան՝ հատուկ պատրաստություն ունեցող կանանց: Բացի այդ, ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն կոչով դիմեցին զենք կրելու ընդունակ բոլոր շահումյանցիներին, բոլոր նրանց, ում համար թանկ են հայրենիքն ու ազատությունը, պարտիզանական պայքար ծավալել թշնամու կողմից զավթված ամբողջ տարածքում[2]:

Խուճապը կանխելու եւ նյութական արժեքները փրկելու նպատակով՝ ԼՂՀ ՊԽ նախագահի կարգադրությամբ հունիսի 19-ին Մարտակերտի հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններին եւ ղեկավար կազմին, որոնք գտնվում էին այդ շրջանից դուրս, պարտավորեցվեց անհապաղ մեկնել Մարտակերտի շրջան եւ ձեռնա-

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի նախագահության եւ ՆԽ-ի 1992թ. հունիսի 18-ի համատեղ նիստի արձանագրություն N 32:
[2] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. հողը կանչում է, գիրք Գ, Երեւան, 2005, էջ 591:

մուխ լինել իրենց ծառայողական պարտականությունների կատարմանը[1]:

Որպես հիշատակված քայլերի շարունակություն՝ ԼՂՀ ԳԽ նախագահության հունիսի 21-ի նիստը ընդունեց «1992 թ. հունիսի 18-ին ԼՂՀ-ում մտցված արտակարգ դրության ռեժիմի պայմաններում իրականացվելիք արտակարգ միջոցառումների ցանկի մասին» հրամանագիրը[2]: Հաշվի առնելով, որ ԼՂՀ ԳԽ-ի ընդհատված նստաշրջանում չեն ընտրվել ԼՂՀ ԳԽ նախագահ եւ նրա առաջին տեղակալ, իսկ հերթական նիստը հետաձգվել է ԼՂՀ տարածքի մի հատվածի բռնանվաճման կապակցությամբ, ինչը բացասաբար է անդրադառնում նախագահության եւ նրա աշխատակազմի աշխատանքի վրա, ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ԳԽ առաջին տեղակալի գործառութային պարտականությունները դնել նախագահության անդամ Կ. Բաբուրյանի վրա, իսկ ԳԽ նախագահի տեղակալի պարտականությունները՝ նախագահության անդամ Ս. Աղաբալյանի վրա: Ընդունվեց ԼՂՀ ԳԽ նախագահության ղեկավարության պարտականությունները բաշխելու մասին որոշումը: ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականություններն էին՝ ընդհանուր ղեկավարում, ԳԽ պաշտպանության եւ անվտանգության, արտաքին հարաբերությունների, պետական շինարարության, իրավական հարցերի, օրինականության ամրապնդման մշտական հանձնաժողովների ղեկավարում:

ԳԽ նախագահի առաջին տեղակալի վրա դրվեց ֆինանսավարկային եւ բյուջետային, ագրարային հարցերի եւ գյուղական կյանքի, ինչպես նաեւ մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների հանձնաժողովների ղեկավարումը:

[1] «Արցախ», 20.06.1992թ.:
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 3, կ. 1, թ. 46-51:

ԳԽ նախագահի տեղակալը պետք է զբաղվեր առողջապահության, սպորտի, սոցիալական հարցերի, բնապահպանության եւ կրթության, գիտության, լեզվի, մշակույթի եւ լրատվության հանձնաժողովների ղեկավարմամբ:

ԳԽ քարտուղարի վրա դրվեց ԳԽ նախագահության եւ քարտուղարության աշխատակազմերի ղեկավարումը:

Հունիսի 21-ի նիստում նախագահությունը քննարկեց թշնամու կողմից Շահումյանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի մի հատվածի բռնազավթման մասին հարցը եւ հանդես գալով հայտարարությամբ՝ վստահություն հայտնեց, որ ԼՂՀ-ի այդ տարածքների հանձնման բոլոր հանգամանքները կպարզվեն ու կհրապարակվեն:

Միաժամանակ, ընդունված որոշմամբ, կատարվածի հանգամանքների ուսումնասիրման գործը դրվեց ԼՂՀ ԳԽ պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովի, մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների հանձնաժողովի, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի, ագրարային հարցերի եւ գյուղական կյանքի հանձնաժողովի վրա: Նրանց հանձնարարվեց իրենց աշխատանքը կատարել պատգամավորների եւ ակտիվի լայն ընդգրկումով[1]:

ԼՂՀ-ում ռազմաքաղաքական իրադրության նման զարգացումները, բնականաբար, անդրադարձան նաեւ ՀՀ-ի ներքաղաքական իրավիճակի վրա: Տեղի տալով ժողովրդական հոծ զանգվածների միահամուռ պահանջին՝ հունիսի 22-ին ՀՀ ԳԽ արտակարգ նստաշրջան հրավիրեց ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների մասնակցությամբ, ուր պետք է քննարկվեր Արցախում ստեղծված իրավիճակը: Եղան տարբեր առաջարկություններ, լսվեցին փոխա-

[1] Նույն տեղում, թ. 52:

դարձ մեղադրանքներ. նախագահ Լ.Տեր-Պետրոսյանն իր ելույթում ԼՂՀ ղեկավարությանը մեղադրեց այն բանում, որ նա, իբր, ինքնագլուխ որոշումներ է կայացնում՝ անտեսելով ՀՀ կառավարության եւ տարբեր մարմինների տեսակետները: Այդ իմաստով նա օրինակ բերեց ԵԱՀԽ ԼՂ-ի հարցով Մինսկի խորհրդաժողովի շրջանակներում Հռոմի խորհրդակցությանը ԼՂ-ից պատվիրակություն չուղարկելը:

Ելույթ ունենալով՝ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը հակիրճ արձագանքեց ՀՀ նախագահի կշտամբանքներին, ապա հեռացավ դահլիճից: Այնուհետեւ ելույթ ունեցան ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներ Լ. Մելիք-Շահնազարյանը, Հ. Խաչատրյանը, Հ. Գրիգորյանը: Նրանք ՀՀ ղեկավարությանը մեղադրեցին ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքում պառակտում մտցնելու, Արցախին վերաբերող հարցերում նախկին որոշակի ու վճռական դիրքից հեռանալու եւ մի անհեռանկար գործելակերպ որդեգրելու մեջ, որից այնքան էլ հեռու չէ Արցախից հրաժարվելը[1]: ԼՂՀ պատվիրակության դժգոհության սկզբունքային պատճառներից մեկն այն էր, որ ՀՀ կառավարությունը հանդուրժում է միջազգային փաստաթղթերում Արցախը Ադրբեջանի կազմում նշելը եւ ստորագրում այդ փաստաթղթերը: Եվ միայն դրանից երկու շաբաթ անց՝ հուլիսի 8-ին, վերջապես, ՀՀ ԳԽ-ն ընդունեց հետեւյալ որոշումը. «ՀՀ-ի համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն նշված կլինի Ադրբեջանի կազմում»[2]:

Մինչ ՀՀ ԳԽ նստաշրջանում բուռն բանավեճեր էին ընթանում, Ադրբեջանի ռազմական ղեկավարությունը մեծացնում էր ճնշումը արցախյան ռազմաճակատում: Այդպիսի լարված իրադրության պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը շարունակում էր հանրապետության կենսագործունեության օրախնդիր հարցերի քննարկումն ու լուծումը: Այդ իմաստով բացառություն չհանդիսացավ հունիսի 27-ին տեղի ունեցած արտակարգ նիստը, որտեղ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ընդունել ԼՂՀ ՆԽ-ի հունիսի 25-ի առաջարկը եւ «Արտակարգ դրության մասին» ԼՂՀ օրենքի, ինչպես նաեւ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՆԽ-ի 1992 թ. հունիսի 21-ի համատեղ որոշմանը համապատասխան՝ արտակարգ դրության պայմաններում Շահումյանի շրջանում ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՆԽ-ի լիազոր ներկայացուցիչ նշանակել Վերինշեն գյուղի խորհտնտեսության տնօրեն Ա. Ջիլավյանին[1]: Լիազոր ներկայացուցչին հանձնարարվեց ԼՂՀ շրջաններից բռնատեղահանված բնակչության ընդունման եւ տեղավորման հանրապետական հանձնաժողովի հետ համատեղ կարգավորել Շահումյանի շրջանի բնակչության հետ տարվող աշխատանքը սոցիալ-կենցաղային բնույթի հարցերի անհետաձգելի լուծման, արտակարգ դրության ռեժիմի ապահովման ուղղությամբ:

ԳԽ նախագահությունը հավանություն տվեց ՀՀ ԳԽ նստաշրջանում ԼՂՀ ԳԽ պատվիրակության դրսեւորած դիրքորոշմանը եւ նրա արտանստաշրջանային գործունեությանը: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանին հանձնարարվեց ԼՂՀ ԳԽ նախագահության գործունեությունը նպատակաուղղել ՀՀ ղեկավարության հետ համակարգող աշխատանքներին ավելի գործուն բնույթ տալուն: Հավանության արժանացավ նաեւ Մոսկվայում ԵԱՀԽ-ի անդամ երկրների՝ Մինսկում գումարվելիք խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելիի հետ հանդիպման ընթացքում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի եւ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ Հ. Գրիգորյանի գործունեությունը:

[1] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 464:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 181:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 3, կ. 1, թթ. 54-60:

Հաշվի առնելով հանրապետության հյուսիսային, արեւելյան, հարավային շրջանների ուղղություններում Ադրբեջանի ագրեսիայի սաստկացումը եւ այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ պատգամավորներին տեղերում թողնելու նպատակահարմարությունը, ինչի հետեւանքով կնվազեր քվորում ապահովելու հնարավորությունը, ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց անորոշ ժամանակով հետաձգել ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը 1992 թ. հունիսի 30-ին վերսկսելու համար տարվող աշխատանքները:

Նույն նիստում ընդունած որոշմամբ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը աննպատակահարմար գտավ ԼՂՀ պատվիրակության մասնակցությունը նաեւ 1992 թ. հունիսի 29-ին Հռոմում կայանալիք խորհրդակցությանը: Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ուղերձ հղեց ԼՂ հիմնահարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիին եւ Հռոմում կայանալիք նախապատրաստական հանդիպման մասնակից երկրներին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հռոմի հանդիպմանը ԼՂՀ պատվիրակության մասնակցության հարցը սուր տարաձայնություններ է առաջ բերել ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի ղեկավարության միջեւ, վերջինիս դիրքորոշումը պարզ դարձնելու նպատակով հարկ ենք համարում մեջբերել հատվածներ հիշատակված ուղերձի տեքստից.

«Ամեն անգամ կոնկրետ բանակցությունների կամ մեր մասնակցության վերաբերյալ որոշում կայացնելու նախաշեմին ադրբեջանական կողմը խոշորամասշտաբ հարձակումներ է սկսում բոլոր ռազմաճակատներով, ինչը, օրինակ, տեղի ունեցավ 1992 թ. հունիսի 12-ին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար պրն Պետրոսյանի եւ Մինսկի խորհրդաժողովի նախագահ պրն Ռաֆայելիի բանակցությունների ժամանակ, Հռոմի հանդիպումը սկսելու նախօրյակին, որը պետք է սկսվի հունիսի 29-ին...

Մեզ հղած հրավերում, ինչպես նաեւ ընդունվող փաստաթղթերում ԼՂՀ օրինական ընտրված իշխանությունների կարգավիճակը իջեցվում է մինչեւ «հայկական համայնքի ներկայացուցիչների» կամ նույնիսկ «Ստեփանակերտի ներկայացուցիչների» կարգավիճակ: Դրանով հանրապետության բնակչության 90 տոկոսի ընտրած իշխանությունների ներկայացուցչությունը հավասարեցվում է ադրբեջանական համայնքի ներկայացուցչությանը, ինչը միանգամայն անընդունելի է:

Մեր կարծիքով, Հռոմի նախնական հանդիպման գործունեության ուղղվածությունը այդ հիմնահարցի լուծման նկատմամբ միակողմանի մոտեցում է ենթադրում հօգուտ Ադրբեջանի, այսինքն՝ ԼՂ-ն պահել ԱՀ-ի կազմում: Դրա հետեւանքով լրիվ անտեսվում է ժողովրդի ինքնորոշման օրինական իրավունքը, որը արտահայտված է 1991թ. դեկտեմբերի 10-ի (Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր) համաժողովրդական հանրաքվեով:

Ափսոսանքով պիտի հայտնենք, որ ԼՂՀ ԳԽ նախագահության 6 ժամ տեւած արտակարգ նիստում որոշում կայացվեց ձեռնպահ մնալ Հռոմի խորհրդակցության նախնական աշխատանքին մասնակցելուց: Այս որոշման վրա ներգործել են ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ագրեսիայի հերթական ուժեղացումը եւ վերը շարադրված մեր մտահոգությունը»[1]:

Սակայն ներքին եւ արտաքին ճնշումների տակ, հուլիսի 1-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված որոշեց պատվիրակություն ուղարկել Հռոմ՝ մասնակցելու ԵԱՀԽ Մինսկի խմբի՝ ԼՂ-ին նվիրված խորհրդակցությանը[2]: Հուլիսի 4-7-ը Հռոմի նախապատ-

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի նախագահության 1992 թ. հունիսի 27-ի նիստի արձանագրություն N 34:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 146:

բաստական հանդիպմանը մասնակցելու համար ստեղծվեց պաշտոնական պատվիրակություն՝ հետեւյալ կազմով. ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյան (պատվիրակության ղեկավար), Հ. Խաչատրյան, Ռ. Քոչարյան, Հ. Բալայան[1]:

Ինչպես եւ սպասվում էր, Հռոմի հանդիպումը չարդարացրեց որոշ հայ քաղաքական գործիչների հույսերը: Հուլիսի 5-ին հայկական պատվիրակությունը լքեց նիստը, քանի որ խորհրդակցության մասնակիցները ոչ միայն չէին ճանաչում ԼՂՀ-ի պատվիրակության իրավահավասար կարգավիճակը, այլեւ հրաժարվում էին դատապարտել Ադրբեջանի ագրեսիան եւ նրա կողմից Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը զավթելու փաստը: Հետագայում ԼՂՀ-ի պատվիրակությունը հեռացավ բանակցությունների սեղանից, երբ հայտնի դարձավ, որ միջնորդ իրավական կազմը սկսել է խուսափել Ղարաբաղի պատվիրակությանը հատուկ կարգավիճակ տալու խոստումը կատարելուց[2]:

Մինչդեռ ղարաբաղա-ադրբեջանական ռազմաճակատում իրադրությունը հարաճուն շիկանում էր: Ռազմագործողությունների լայն ծավալման հետեւանքով բնակչության շրջանում հնարավոր համընդհանուր խուճապը կանխելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հունիսի 29-ին որոշում կայացրեց՝ արգելել քաղաքացիների մեկնումը ԼՂՀ սահմաններից դուրս՝ անկախ սեռատարիքային պատկանելությունից, բացառությամբ հատուկ գործուղվածների: Լուծարվեց ԼՂՀ սահմաններից դուրս քաղաքացիների մեկնման թույլտվություն տրամադրող հատուկ հանձնաժողովը: ԼՂՀ ՆԽ-ին հանձնարարվեց խստագույնս առաջնորդվել սույն որոշմամբ, շրջանային իշխանություններին՝ անվերապահորեն

[1] «Արցախ», 03.07.1992թ.:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 182:

գործուն միջոցներ ձեռնարկել բռնատեղահանվածներին իրենց շրջաններում տեղավորելու համար[1]:

Առաջ անցնելով՝ ասենք, որ հուլիսի 1-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայաց եց լուծարված հատուկ հանձնաժողովի փոխարեն ՆԽ-ին կից ստեղծել հիվանդության պատճառով եւ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում հանրապետության սահմաններից դուրս ԼՂՀ քաղաքացիների մեկնումը թույլատրող հանձնաժողով[2]:

Հունիսի 30-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հունիսի 29-ի հեռուստաելույթը:

Նշենք, որ նրա ծավալուն (մեկուկես ժամ տեւողությամբ) այդ ելույթի դրդապատճառը ՀՀ ԳԽ նստաշրջանում գագաթնակետին հասած վեճն էր իշխանությունների եւ ընդդիմության միջեւ, որի հիմքն էլ Արցախի դրամատիկ վիճակի վերաբերյալ իրարամերժ դիրքորոշումներն էին: Լ. Տեր-Պետրոսյանն անդրադարձավ նաեւ ԵԱՀԽ հանդիպումներին ԼՂՀ-ի պատվիրակության չմասնակցելուն եւ դատապարտեց այն՝ ասելով. «Դա մեր միակ շանսն էր, մեր միակ հնարավորությունը՝... պահպանելու Լեռնային Ղարաբաղը»[3]: Իսկ հուլիսի 1-ին ՀՀ ԳԽ նստաշրջանում Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե ԼՂՀ-ի վերաբերյալ եղած հարցը խորհրդարանում երեկ լուծում չստացավ, այսօր էլ ինքը թույլ չի տա, որ քննարկումը շարունակվի, քանի որ նման հարցերին վճիռ տալու իրավունք միայն ինքն ունի՝ որպես հանրապետության նախագահ: Նա նշեց նաեւ, որ Ազգային դաշինքը հայ ժողովրդին տանում է ստույգ կործանման, որովհետեւ ԼՂՀ-ն ճանաչելը պիտի նշանակի

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 3, կ. 1, թ. 61-63:
[2] Նույն տեղում, ց. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 8:
[3] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 478:

պատերազմ հայտարարել մեր երկու հարեւաններին՝ Ադրբեջանին ու Թուրքիային: Իսկ մենք թույլ ենք նույնիսկ միայն Ադրբեջանից:

Այդ հանգամանքը չէր կարող չանհանգստացնել ԼՂՀ ԳԽ նախագահությանը: Հունիսի 30-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց հետեւյալ դիմումը հղել հայ ժողովրդին. «Հայրենակիցներ, վերջին օրերին ծայրաստիճան լարվել է քաղաքական իրավիճակը Հայաստանում, որը բացասաբար է անդրադառնում նաեւ ԼՂՀ-ի վրա: Ցավով նշում ենք, որ դրությունն ապակայունացնելու նպատակով փորձեր են արվում մեզ ներքաշել քաղաքական պայքարի մեջ: Սա անընդունելի է, քանի որ մենք միշտ էլ մեր ջանքերը ներդրել ենք նման ապակայունացում թույլ չտալու համար, իսկ Արցախյան շարժումը հիմք է դրել համայն հայ ազգի համախմբմանն ու միավորմանը: ԼՂՀ իշխանությունները միշտ էլ ձգտել են լինել քաղաքական կայունության երաշխիք:

Այս առնչությամբ ստիպված ենք ի լուր ամենքի հայտնել, որ Արցախի իշխանությունները հավատարիմ կմնան իրենց քաղաքական ուղեգծին եւ, ըստ ամենայնի, կձգտեն նպաստել Հայաստանում քաղաքական կայունության ապահովմանը: Սակայն քաղաքական ոչ մի խաղ, ոչ մի նպատակ չի կարող ստիպել, որ Արցախի իշխանությունները հրաժարվեն պահանջատիրությունից: Մենք թույլ չենք տա, որ քառամյա պայքարի ընթացքում բազում զոհողությունների գնով գաղութային լծից ազատված ժողովուրդը կրկին հայտնվի ստրկության ճիրաններում:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը Հայաստանի, Արցախի եւ ի սփյուռս աշխարհի ամբողջ հայությանը կոչ է անում այս ճակատագրական պահին համախմբվել, զերծ մնալ իրադրության ապակայունացմանը միտված քայլերից եւ բոլոր ջանքերը ուղղել հայրենիքի պաշտպանության սուրբ գործին»[1]:

Այսպիսի ներքաղաքական լարվածության ֆոնի վրա առավել ցցուն եւ սպառնալից էր դառնում իրադրությունը ռազմաճակատում: Ճիշտ է, հուլիսի սկզբներին միայն տեղական նշանակության մարտեր ծավալվեցին Հադրութի, Մարտունու ու Ասկերանի շրջանների մի շարք գյուղերի մատույցներում, սակայն հիմնական մարտական գործողությունները շարունակվում էին Մարտակերտի շրջանում, որին թշնամին ձգտում էր տիրանալ ցանկացած գնով: Հուլիսի 4-ին հակառակորդը լայնածավալ հարձակում ձեռնարկեց եւ տիրացավ Մարտակերտ քաղաքին: Նույն օրվա գիշերը ադրբեջանական զորամիավորումները Քելբաջարի շրջանից ներխուժեցին Մարտակերտի շրջանի երկրորդ խոշոր բնակավայրը՝ Հաթերք գյուղը եւ հրկիզեցին այն: Արդեն հուլիսի 10-ին ռազմաճակատի գիծն անցնում էր Դրնբոն-Գյուլաթաղ հատվածով[2]: Ի հակակշիռ դրան, հուլիսի 5-ին Ասկերանի շրջանի ԻՊՈՒ ստորաբաժանումները հաջող մարտական գործողություններ ծավալեցին Նախիջեւանիկ, Փրջամալ, Արանզամին ու Սառնաղբյուր գյուղերի ուղղությամբ եւ ժամանակավորապես վերահսկողության տակ առան այդ գյուղերը[3]:

ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարության միջեւ տարաձայնությունների սրման, ղարաբաղյան ռազմաճակատում լարվածության մեծացման պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիվանագիտական քայլեր էր ձեռնարկում միջազգային ասպարեզում՝ ուղղված նորաստեղծ հանրապետության գոյատեւմանը սպառնացող վտանգների չեզոքացմանը: Այդ քայլերից մեկն էր հուլիսի 3-ին

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 3, կ. 1, թ. 66:
[2] Հասրաթյան Ս., Գոյամարտ (ԼՂՀ ՊԲ-ի մարտական ուղու պատմության համառոտ ուղեկցույց), Ստեփանակերտ, 1998, էջ 14:
[3] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 480:

ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի ուղեւորությունը Մոսկվա՝ հանդիպելու Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ (ելնելով անվտանգության նկատառումներից՝ այդ հանդիպումների մասին տեղեկությունները մանրամասնելու հարկ չկա): Նույն օրը ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանը մեկնեց Ստրասբուրգ (Ֆրանսիա)՝ հանդիպումներ ունենալու Եվրախորհրդարանում[1]: Իսկ հուլիսի 6-ին Ստեփանակերտ ժամանեց ՀՀ ԳԽ պատվիրակությունը՝ ԳԽ նախագահի տեղակալ Ա. Սահակյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, Հայաստանի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Հուլիսի 7-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՀՀ պատգամավորական պատվիրակությունը քննարկեցին Արցախում ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրադրության հետ առնչվող մի շարք հարցեր: Պատվիրակությունը մասնակցեց նաեւ ԼՂՀ ՆԽ նիստին, որտեղ քննարկվեց փախստականների տեղավորման եւ առաջին անհրաժեշտության պարագաներով նրանց նվազագույն ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագիրը[2]:

Հուլիսի 9-ին ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՆԽ համատեղ նիստում որոշվեց ընդունել ԼՂ հարցով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիի առաջարկը՝ 1992 թ. հուլիսի 9-ի 01 ժամից 30 օրով կրակը դադարեցնելու վերաբերյալ[3]:

Թեեւ Ադրբեջանի կառավարությունը պաշտոնապես հայտարարել էր, թե ընդունում է Մ. Ռաֆայելիի առաջարկը, սակայն ռազմական գործողություններն ավելի սաստկացան: Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունն ու ՆԽ-ն նորից հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում ասված էր. «Վերջին ժամանակներս, նպատակ ունենալով կանգնեցնել Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի միջեւ ռազմական հակամարտության սաստկացումը, կրակի դադարեցման շուրջ համաձայնության գալու բազմաթիվ փորձեր են ձեռնարկվել: Ցավոք, դրանք ամեն անգամ խախտվել են Ադրբեջանի կողմից, ինչը հանգեցրել է ԼՂՀ բնակավայրերի հերթական կորստին:

Հակառակ դրան, ԼՂ-ի հարցով Մինսկում կայանալիք համաժողովի նախապատրաստական հանդիպմանը մասնակցելու համար ԼՂՀ ԳԽ պատվիրակության իրավահավասար կարգավիճակը չճանաչելու պատճառով, համաժողովի նախագահ պրն Ռաֆայելին առաջարկել է համաձայնել 1992 թ. հուլիսի 9-ի ժամը 01-ից 30 օրով կրակի դադարեցմանը: Մեզ հաղորդվել է, որ Ադրբեջանի նախագահը այդ առաջարկությանը համաձայնվելու պատրաստակամություն է հայտնել:

Սակայն հուլիսի 9-ին, Մոսկվայի ժամանակով ժամը 10-ին ՍՈՒ-25 երկու ռեակտիվ ինքնաթիռներով ռմբակոծվել է Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղը: Բացի այդ, նույն օրը լայնածավալ հարձակում է ձեռնարկվել Մարտակերտի շրջանի մի քանի գյուղերի վրա:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ կառավարությունը լիազորված են հայտարարել, որ ԼՂ-ն միշտ հանդես է եկել ու հանդես է գալիս հակամարտության խաղաղ կարգավորման օգտին: Սակայն Ադրբեջանի հարձակողական գործողությունները, զանգվածային լրատվության միջոցներում Ադրբեջանի նախագահի վերջին հայտարարությունները ոչ մի կասկած չեն թողնում այդ հանրապետության իսկական մտադրությունների մասին: Մենք պատրաստ

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 147:
[2] «Արցախ», 09. 07. 1992թ.:
[3] ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 1, պ. մ. 4, կ.1, թ. 9-10 :

ենք գործարար համագործակցության, եթե վստահ լինենք, որ մյուս կողմը այլ նպատակներ չի հետապնդում»[1]:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի տարածքի մի մասի բռնազավթման հետեւանքով տեղահանված բնակչությանը հանրապետության տարածքում տեղավորելու, ԼՂՀ-ի պաշտպանությունը կազմակերպելու, երկրի տնտեսությունը բնականոն հունի մեջ դնելու անհրաժեշտությունը՝ հուլիսի 11-ին ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՆԽ-ի համատեղ նիստում որոշում կայացվեց ԼՂՀ ՆԽ-ին միջոցներ տրամադրել՝ բռնատեղահանվածներին ժամանակավոր կացարաններում տեղավորելու եւ նրանց համար սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու նպատակով: Որոշվեց ժամանակավորապես արգելել ԼՂՀ քաղաքացիների մեկնումը հանրապետությունից, լուծարել ՆԽ-ին կից գործող համապատասխան հանձնաժողովը: Հանրապետությունից մեկնել կարող էին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի եւ ՆԽ նախագահ Օ. Եսայանի թույլտվությունն ունեցող անձինք: Զինծառայողների գործուղման եւ վիրավոր ազատամարտիկների տեղափոխման թույլտվությունը տրամադրվում էր ԼՂՀ ՊԿ նախագահ Ս. Սարգսյանի կողմից: Ժողովրդատնտեսական մթերքների եւ փոխադրամիջոցների դուրս բերման թույլտվությունը վերապահված էր ԼՂՀ ՆԽ-ին: Այլ հանրապետություններում գրանցում ունեցող քաղաքացիները ԼՂՀ սահմաններից մեկնել կարող էին առանց թույլտվության՝ ըստ ներկայացվող փաստաթղթերի[2]:

Իսկ ռազմաճակատում սկսեցին փոփոխություններ տեղի ունենալ հօգուտ արցախյան կողմի: Հուլիսի 12-ին, վերախմբավորելով ուժերը, ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումներն անցան հակահարձակման եւ ազատագրեցին Մարտակերտի շրջանի Կուսապատ,

[1] Նույն տեղում, թ. 11:
[2] Նույն տեղում, թ. 12-13:

Ջայնաթաղ, Գյուլաթաղ եւ Մեհմանա գյուղերը, իսկ հուլիսի 14-ի երեկոյան, անցնելով Թարթառի ձախափնյակը, ծանր մարտերի արդյունքում ազատագրեցին Չափար գյուղն ու ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող Գետավանի կամուրջը: Այդպիսով՝ նրանց հաջողվեց մոտենալ Սարսանգի ջրամբարին[1]: Նրանք հաջող ռազմագործողություն իրականացրեցին հուլիսի 19-ի լույս 20-ի գիշերը՝ Հաթերքից դուրս շպրտելով ադրբեջանական զորամիավորումները եւ ազատագրելով Թարթառի հովտի այդ հինավուրց կենտրոնը: Սակայն, ցավոք, վիճակված չէր զարգացնել այդ հաջողությունները: Դրանք սոսկ ժամանակավոր բնույթ կրեցին, եւ հետագա իրադարձություններն ընթացան տրամագծորեն հակառակ ուղղությամբ:

ԼՂՀ ԳԽ նախագահության հերթական նիստը տեղի ունեցավ հուլիսի 12-ին, որի օրակարգում դրված էր ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի եւ ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանի՝ զբաղեցրած պաշտոններից հրաժարականների հարցը, որոնք նախագահության կողմից մերժվեցին[2]:

Նշված իրադարձության վերաբերյալ կարծիքներ էին տարածվել, թե ԳԽ նախագահի պաշտոնակատարի եւ քարտուղարի հրաժարականի պատճառը ներքին եւ արտաքին ճնշումներն են, եւ այդ քայլը իշխանական համակարգում երկպառակությունը կանխելու նպատակ է հետապնդում:

Հուլիսի 15-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը իր հերթական նիստում հավանություն տվեց Հռոմի խորհրդակցությունում ԼՂՀ պատվիրակության գործունեությանը[3], իսկ հուլիսի 21-ին մասնավորապես հետեւյալ բովանդակությամբ նամակը հղեց ԵԱՀԽ Մինս-

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 83:
ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 14-16:
[3] Նույն տեղում, թ. 17-19:

կի խորհրդաժողովի նախապատրաստական հանձնաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիին. «Գտնելով, որ խաղաղ գործընթացը հնարավոր է, մենք ԵԱՀԽ եւ մասնակից պետությունների ղեկավարներից սպասում ենք հանդիպական քայլեր, որոնք կարող էին հանգեցնել հետեւյալ դրույթների ընդունմանը. ինչ-որ ձեւով արձանագրել վետոյի մեր իրավունքը կամ մեր իրավահավասար մասնակցությանը տալ ֆորմուլ, որը թույլ կտա մեզ պաշտպանել ԼՂՀ ժողովրդի շահերը: Այդ դեպքում, եթե Ադրբեջանը հետագայում էլ պնդի խորհրդաժողովին ԼՂՀ ադրբեջանական փոքրամասնության ներկայացուցչի մասնակցությունը, ինչը, մեր կարծիքով, ապօրինի է եւ անընդունելի, մենք մեզ իրավունք կվերապահենք մեր հանրապետության պաշտոնական պատվիրակության կազմից դուրս դրան մասնակցելու համար հրավիրել ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին:

Չնայած կրակը դադարեցնելու Ձեր կոչին, ԼՂՀ-ի դեմ պատերազմական գործողությունները մեկ րոպե անգամ չեն դադարեցվել: Մենք ունենք բոլոր հիմքերը իմանալու, որ Ադրբեջանը օգտվում է Հռոմի նախապատրաստական հանդիպումից՝ իր ռազմական պոտենցիալը հզորացնելու եւ ԵԱՀԽ շրջանակներում խաղաղարար գործընթացի ձախողմանն ուղղված խոշորամասշտաբ նոր գործողություններ նախապատրաստելու համար, ինչի վկայությունն են 1992 թ. հուլիսի 20-21-ը գրոհիչ ինքնաթիռներով ԼՂՀ - մայրաքաղաքի ռմբակոծումները, որոնք հասցրին լուրջ ավերածությունների եւ մարդկային զոհերի: ԵԱՀԽ-ի մասնակից երկրների կողմից Ադրբեջանի ագրեսիայի վճռական դատապարտումը կարող էր այդ երկիրը ետ պահել ինքնիշխան ԼՂՀ-ի հանդեպ ռազմական հետագա գործողություններից»[1]:

[1] Նույն տեղում, թ. 26-27:

Հուլիսի 26-ին Ստեփանակերտ ժամանեց ՌԴ հատուկ հանձնարարությունների գծով դեսպան, ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման ռուսաստանյան միջնորդական առաքելության ղեկավար Վ.Կազիմիրովը: ԼՂՀ ղեկավարության հետ հանդիպման ժամանակ քննարկվեց հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման միջոցառումների ռուսաստանյան «ծրարը»[1]:

Ինչպես հայտնի դարձավ, Ռուսաստանի ԱԳ նախարարը մտադիր էր առաջարկել օգոստոսի 7-ին Մոսկվայում անցկացնել Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ներկայացուցիչների ոչ պաշտոնական հանդիպում՝ նվիրված ԼՂ հակամարտության կարգավորմանը: Մինչդեռ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնահարցը օգոստոսի 5-ին Մոսկվայում քննարկվեց ՌԴ եւ ՀՀ արտաքին գործերի նախարարներ Ա. Կոզիրեւի եւ Ռ. Հովհաննիսյանի հանդիպման ժամանակ: Ինչպես բանակցությունների ավարտից հետո հայտարարեց Ա. Կոզիրեւը, քննարկվել են կրակի դադարեցման, հակամարտության կողմերի բաժանման եւ խաղաղության ձեռք բերման հետ կապված կոնկրետ մանրամասներ: Ռուսաստանի արտգործնախարարի խոսքերով, կողմերը հնարավոր են գտնում այդ նպատակով խաղաղարար ուժեր ներգրավել տարածաշրջան: Ա. Կոզիրեւն առավել իրական էր համարում այն տարբերակը, որի դեպքում Ռուսաստանը, որպես միջնորդ հակամարտության կարգավորման գործում, ՄԱԿ-ի հովանու տակ իր զորքերն ուղարկի ԼՂ[2]:

Մինչ միջազգային ասպարեզում դիվանագիտական քայլեր էին ձեռնարկվում ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ, Ադրբեջանը կտրուկ ակտիվացրել էր ռազմա-

[1] «Արցախ», 28.07.1992թ.:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 158:

կան գործողությունները ԼՂՀ-ի դեմ եւ փորձում էր զարգացնել ռազմական հաջողությունները՝ խտրություն չդնելով միջոցների միջեւ: Այդ իրադարձությունների կապակցությամբ, օգոստոսի 8-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ուր, մասնավորապես, ասվում էր. «...Ռազմական անհրաժեշտությամբ չթելադրված այս գործողությունները պերճախոս վկայում են, որ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը ձեռնամուխ է եղել ԼՂՀ-ի խաղաղ բնակչության հետեւողական ոչնչացմանը: Ուշագրավ է, որ դա կատարվում է հատկապես այն ժամանակ, երբ Հռոմում շարունակվում են ԵԱՀԽ-ի շրջանակներում ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունները, երբ ՌԴ-ի նախաձեռնությամբ փորձ է արվում ձեռք բերել զինադադարի մասին համաձայնություն:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն դիմում են միջազգային հանրությանը, աշխարհի բոլոր երկրների խորհրդարաններին՝ կոչ անելով անհապաղ միջոցներ ձեռք առնել ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան սանձելու եւ հայ բնակչության եղեռնը կանխելու ուղղությամբ»[1]:

Այսպիսով՝ հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում ստեղծվեց ծայրաստիճան լարված եւ անկայուն իրավիճակ՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր եւ ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին: Անհրաժեշտ է նշել նաեւ, որ այսօր որոշ քաղաքագետներ եւ պատմա-

[1] «Արցախ», 08.08.1992թ.:

բաններ ԻՊՈՒ-ի անհաջողությունները վերագրում են ԳԽ-ին եւ ԻՊՈՒ-ի նախկին հրամանատարությանը, որի ռազմաքաղաքական գործունեությունը համարում են կազմակերպչական տեսակետից անարդյունավետ՝ դրան գումարելով ռուսական օգնությունը Ադրբեջանին, նաեւ Հայաստանի ոչ ռուսական կողմնորոշումը: Սակայն պատմական դեպքերը ուսումնասիրելուց եւ վերլուծելուց հետո կասկածի տակ է առնվում նման տեսակետի տրամաբանական լինելը:

Պատմագրության մեջ հանիրավի չի բարձրաձայնվում այն պատմական ճշմարտության մասին, որ ԼՂՀ ԳԽ ընտրություններում հաղթանակեցին եւ իշխանության եկան պաշտոնական Երեւանի համար կատարելապես անցանկալի ուժեր, ինչը ՀՀ իշխանությունների, հատկապես նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի համար անսպասելի էր: Ամենայն հավանականությամբ, նա գտնում էր, որ Արցախը կարող է որոշակի քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերել եւ մի կողմ կանգնել Հայաստանի ներքին կյանքից, իսկ արտաքին քաղաքական ասպարեզում՝ իր պահանջները թելադրել որպես անկախ երրորդ կողմ: Այսինքն՝ ՀՀ իշխանությունները կորցնում էին անչափ կարեւոր խաղաքարտ, որը անհրաժեշտության դեպքում կարող էր ներքին կայունության գրավական լինել: ՀՀ նախագահը նաեւ երկյուղ ուներ, որ այդ խաղաքարտը կարող է օգտագործել ընդդիմությունը: Բացի այդ, պաշտոնական Երեւանը կարող էր զրկվել հայ-ադրբեջանական հակամարտության, ինչպես նաեւ Արցախյան շարժման մեջ առաջատարի դերից:

Ինչպես նկատելի է, 1992թ. մայիսյան հաղթանակներից հետո ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը ցույց տվեց, որ ՀՀՇ-ի հեղինակությունը ԼՂՀ-ում այնքան էլ բարձր չէր: Այդ իրադարձություններից հետո մինչ օրս նույնիսկ գիտական շրջանակների համար չբացահայտված եւ առեղծվածային մնա-

ցած պատճառներով (այլ ոչ թե շրջանառության մեջ մտած, բայց լիովին կասկածելի ռազմական գործոնների հետեւանքով) թշնամուն հանձնվեցին Շահումյանի շրջանն ու Մարտակետի շրջանի մի մասը: Մեր կարծիքով, Շահումյանի ու Մարտակերտի անկումը պետք է բացատրել փոխկապակցված, թերեւս, իրար լրացնող մի շարք քաղաքական գործոններով: Հետագայում կտեսնենք, որ իրադարձությունների զարգացումը եւ երկրում ստեղծված քաոսային վիճակը անխուսափելի դարձրին մի շարք արմատական փոփոխությունները ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքում, որոնք կատարվեցին ՀՀ ղեկավարության պահանջով: Դրանից հետո միայն սկսվեց Արցախյան պատերազմում հայկական կողմի նոր հաջողությունների շրջանը: Այստեղ հարկ է նկատել, որ իրադարձությունների այդչափ կտրուկ շրջադարձը խորհելու տեղիք է տալիս՝ առաջ քաշելով նշված կարճ ժամանակահատվածի ներքաղաքական անցքերի քաղաքական եւ պատմագիտական խոր ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ Բ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԸ ԼՂՀ-ում (1992 Թ. ՕԳՈՍՏՈՍ-1994 Թ. ՄԱՅԻՍ)

1. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը եւ նրա գործունեությունը:

ԼՂՀ եւ ՀՀ իշխանությունների միջեւ փոխհարաբերությունները մնում էին չհստակեցված եւ մոտալուտ լիցքաթափման հույսեր չէին ներշնչում: Դրանից ելնելով՝ դեռեւս հուլիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաեւ ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երեւանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետեւյալ կազմով. Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ.Ղազարյան, Հ. Խաչատրյան[1]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[2] եւ ուսումնասիրելով հունիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 22-23:
[2] Հեղինակի անձնական արխիվ:

«անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ եւ նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները[1]: Կարելի է կռահել, թե ինչու օգոստոսի 11-ին հանրապետության ՆԽ նախագահ Օ. Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրեց իշխանության գոյություն ունեցող կառույցների եւ ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ եւ առաջարկեց մինչեւ 1992 թ. վերջը հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաեւ ստեղծել ինչ-որ մարմին եւ ԼՂՀ ԳԽ-ի ու ՆԽ-ի լիազորությունները հանձնել այդ մարմնին[2]: Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, նույն հրաժարականի հարցով երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել Գ.Պետրոսյանի հրաժարականի դիմումը[3]:

Ակնհայտ է, որ, փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահությունը երկրում գոյություն ունեցող ռազմաքաղաքական ճգնաժամային պայմաններում կանգնել էր երկընտրանքի առաջ. կամ պահպանել պետականությունը՝ իշխանությունը զիջելով հակառակ թեւին, կամ էլ գնալ առճակատման՝ պահպանելով իշխանությունը, բայց սպառնալիքի տակ դնելով երկրի անվտանգությունը:

Երկրի ներքաղաքական կյանքի լարվածությունը ասես արձագանք էր գտնում ռազմաճակատում. օգոստոսի 12-ին հակառակորդը լայնածավալ հարձակում ձեռնարկեց Մարտակերտի շրջանի Մեծշեն-Մաղավուզ ուղղությամբ: Տեւական մարտերից հետո

[1] ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992 թ. հուլիսի 27-ի նիստի սղագրություն:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 182:
[3] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 31-33:

նրան հաջողվեց վերստին զավթել Հաթերք գյուղը եւ Սարսանգի ջրամբարի շրջակա տարածքները:

Ադրբեջանի ագրեսիայի աննախադեպ ծավալման եւ ԼՂՀ-ի տարածքի մի մասի բռնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը օգոստոսի 12-ին որոշում ընդունեց ԼՂՀ-ում 6 ամսվա ժամկետով ռազմական դրություն հայտարարելու մասին: Նախագահության արձակած հրամանագրով հայտարարվեց 1947-ից մինչեւ 1974 թթ. ծնված արական սեռի քաղաքացիների զորահավաք: Զորահավաքի առաջին օրը համարվեց հենց նույն օգոստոսի 12-ը: Որոշվեց միջոցներ ձեռնարկել՝ ԼՂՀ-ի սահմաններից դուրս գտնվող զորահավաքի ենթակա ԼՂՀ բոլոր քաղաքացիներին մեկ շաբաթվա ընթացքում վերադարձնելու համար: ԼՂՀ ԻՊՈՒ շտաբին, ՆԳՆ-ին, ԱԱՊՎ-ին, պարետությանը, զինվորական կոմիսարիատին եւ դատախազությանը հանձնարարվեց ապահովել սույն հրամանագրի կատարումը պատերազմական ժամանակի օրենքներին համապատասխան:

Ընդունված որոշման մասին եռօրյա ժամկետում իրազեկվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին եւ ՄԱԿ-ի ԱԽ-ին[1]:

Օգոստոսի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, որտեղ ասվում էր. «ԼՂՀ-ում ստեղծվել է ծայրահեղ ռազմաքաղաքական կացություն: Սպառնալիքի տակ են դրված բուն ԼՂՀ-ի գոյությունը, նրա բնակչության կյանքն ու անվտանգությունը: Այսպիսի պայմաններում հարկավոր են իրադրության կայունացմանը միտված կոշտ եւ անհետաձգելի միջոցառումներ:

Այս նպատակով ԼՂՀ-ում հայտարարված է ռազմական դրություն: Առաջիկայում իրականացվելու է 18-ից մինչեւ 45 տարեկան արական սեռի բնակչության զորահավաք:

[1] Նույն տեղում, թ. 34:

Այս առնչությամբ խնդրում ենք Ձեզ՝ օժանդակել ինչպես զորահավաքի ենթակա տարիքի եւ զինվորական պարտականություններից խուսափող բոլոր ԼՂՀ բնակիչներին Հայաստանից ԼՂՀ վերադարձնելու (այդ թվում՝ եւ հարկադիր), այնպես էլ՝ Հայաստանից դեպի այլ հանրապետություններ նրանց մեկնումը արգելելու գործին»[1]:

ԳԽ նախագահության նույն նիստում ընդունվեց «ԼՂՀ-ում ռազմական դրություն մտցնելու մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագիրը[2]:

Պատերազմական ժամանակի կարիքներին առնչվող արտադրական առաջադրանքների կատարումն ապահովելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ընդունել «Պատերազմական ժամանակ բանվորների ու ծառայողների աշխատաժամանակի ռեժիմի մասին» հրամանագիրը, ըստ որի՝ ԼՂՀ ՆԽ-ի թույլտվությամբ արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության եւ առեւտրի ձեռնարկությունների տնօրեններին իրավունք վերապահվեց ինչպես ձեռնարկության բոլոր բանվորների ու ծառայողների, այնպես էլ առանձին արտադրամասերի, տեղամասերի եւ բանվորների ու ծառայողների խմբերի համար սահմանել օրական մինչեւ 5 ժամ տեւողությամբ պարտադիր արտաժամյա աշխատանք, իսկ 14-ից մինչեւ 16 տարեկան անձինք կարող էին ներգրավվել օրական 3 ժամից ոչ ավելի տեւողությամբ պարտադիր արտաժամյա աշխատանքներում: Պարտադիր արտաժամյա աշխատանքներին չէին կարող ներգրավվել հղի կանայք՝ սկսած հղիության վեցերորդ ամսից, ինչպես նաեւ այն կանայք, որոնք ունեին մինչեւ 1 տարեկան երեխաներ: Ըստ հրամանագրի՝ բանվորների ու ծառայողների պարտադիր արտաժամյա աշխատանքի համար վարձատրությունը սահմանվեց 1.5 դրույքաչափով:

Ընդունվեց նաեւ «Պատերազմական ժամանակ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության ֆոնդի վրա դրված հարկի եւ բնակչությունից գանձվող եկամտահարկի վրա ժամանակավոր հավելավճար սահմանելու մասին» որոշումը[1]:

1992 թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը եւ լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների[2]: Ընդունվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ իրարամերժ կարծիքներ, եւ, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ):

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կ. Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը, ԼՂՀ ՊԿ նախագահ Ս. Սարգսյա-

[1] Նույն տեղում, թ. 33:
[2] Նույն տեղում, թ. 35-45:

[1] Նույն տեղում, թ. 41:
[2] Նույն տեղում, թ. 44-47:

նը, ԼՂՀ ՆԳՆ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը, ԻՊՈՒ հրամանատարի առաջին տեղակալ Ս. Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության՝ 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության գոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական մարմնի նորովի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ կենսական անհրաժեշտություն եւ պատմականորեն արդարացվեց: Սակայն պետշինարարության հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունը ակնբախ են դարձնում այդ գործում եղած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա: Հասկանալի պատճառներով հարկ չենք համարում կանգ առնել այդ թերությունների ու շեղումների վրա...

Պետք է նշել նաեւ, որ ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր հիմնականում ՀՀ իշխանությունների կողմից, եւ դա կատարվում էր որպես երկու հայկական հանրապետությունների իշխանությունների գործողությունները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն: Իհարկե, այդ անհրաժեշտությունը կար, եւ այն նույնիսկ կենսական պահանջ էր, սակայն դա հանգեցրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում ԼՂՀ-ի պետական ինքնուրույնության որոշակի սահմանափակմանը: Հետագայում կնկատենք, որ ԼՂՀ-ն զրկվեց որեւէ ինքնուրույն քաղաքական քայլ կատարելու հնարավորությունից, հետզհետե սեղմվեցին հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության շրջանակները, եւ նրա կարգավիճակը աստիճանաբար դարձավ ձեւական: Իսկ ժողովրդավարական ձեւով ստեղծված պետությունը պատերազմական իրադրության թելադրանքով վերածվեց ավտորիտարի: Ցավոք, օգտվելով ժամանակի պարտադրած հանգամանքներից, իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաեւ հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց եւ՝ ժողովրդի բարոյահոգեբանության, եւ՝ երկրի պետական շինարարության որակի վրա:

Որպես հակակշիռ վերը ասվածի՝ պետք է նշել, որ ՊՊԿ-ն, իր ձեռքը վերցնելով վերոհիշյալ լիազորությունները, շարունակեց եւ գործունեության առաջին պլան մղեց կառավարման համակարգի յուրովի կենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաեւ ԻՊ ուժերը կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցկացնելու, այսինքն՝ բանակային ենթակառույցների, պաշտպանական շրջանների (ՊՇ) ձեւավորման գործընթացը: Իսկ այն սկսվել էր դեռեւս ԼՂՀ ՊԿ նախագահի՝ «Պաշտպանական շրջանների եւ շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» 1992թ. օգոստոսի 14-ի հրամանագրով[1]: Այդ հրամանագրի հիման վրա ստեղծվեցին 6 ՊՇ-ներ: Իսկ 1993 թ. նոյեմբերին ԻՊՈՒ-ի վերակազմավորման գործընթացը մոտեցավ իր ավարտին, եւ ԼՂՀ

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 86:

ՊՊԿ նախագահը նոյեմբերի 10-ին հրաման ստորագրեց ԼՂՀ Ի-ՊՈՒ-ն ԼՂՀ Պաշտպանության բանակի (ՊԲ) վերակազմակերպելու մասին[1]:

Սկսած 1992թ. սեպտեմբերից՝ ՀՀ-ի քաղաքական եւ ռազմական գործուն աջակցության հետ զուգակցված, նորից հնարավորություն ընձեռվեց դիմագրավել հակառակորդի լայնածավալ հարձակումներին, համառ պաշտպանական մարտերում հյուծել նրա ուժերը եւ նախադրյալներ ստեղծել բռնազավթված բնակավայրերն ազատագրելու, ԼՂՀ-ի տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար:

Հարկ է նշել, որ նորաստեղծ ռազմաքաղաքական մարմինը՝ ՊՊԿ-ն, անմասն չմնաց եւ իր ուրույն դերն ունեցավ ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման դիվանագիտական գործընթացում: Եվ դա լիովին բնական էր: Առաջին շրջանում ԼՂՀ ԳԽ նախագահությունն ու ՊՊԿ-ն գործում էին համերաշխ, փոխըմբռնման եւ վստահության մթնոլորտում: Նրանց առաջին համատեղ դիվանագիտական քայլը հանդիսացավ սեպտեմբերի 2-ի հայտարարությունը՝ կապված ԼՂՀ Մարտակերտի շրջանի մի շարք բնակավայրեր ԱՀ Թարթառի (նախկին Միրբաշիրի) եւ Քելբաջարի շրջանների կազմի մեջ մտցնելու մասին Ադրբեջանի ԳԽ-ի ընդունած որոշման հետ: «Ադրբեջանի խորհրդարանը, - մասնավորապես ասվում էր հայտարարության մեջ,- միանգամայն բացահայտ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առջեւ ընդունել է որոշում ԼՂՀ Մարտակերտի շրջանի մի շարք բնակավայրեր Ադրբեջանի Միրբաշիրի շրջանին վերաենթարկելու մասին, ինչպես որ ավելի վաղ «լուծարել է» Շահումյանի շրջանը, ապա՝ ամբողջ ԼՂԻՄ-ը:

[1] ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. նոյեմբերի 10-ի որոշում N 323:

Քաղաքական այդ քայլերն, անշուշտ, մի ավելորդ անգամ ապացուցում են, որ ԱՀ ղեկավարության իսկական մտադրությունը ԼՂՀ բնակչության ֆիզիկական ոչնչացումն է եւ նրա տարածքի բռնազավթումը՝ քողարկված իր խաղաղ մտադրությունների եւ ԵԱՀԽ շրջանակներում խաղաղ գործընթացի մասին ճամարտակումների ետեւ, որի մասին մենք բազմիցս նախազգուշացրել ենք բոլոր՝ ներառյալ եւ սահմանակից ու, հատկապես, ԵԱՀԽ մասնակից երկրներին:

ԼՂՀ տարածքի ժամանակավորապես օկուպացված մասն Ադրբեջանինը դարձնելու «օրինականացման» փորձերը բացասական լուրջ ազդեցություն կունենան ԵԱՀԽ շրջանակներում խաղաղ գործընթացի ողջ ընթացքի վրա:

ԼՂՀ ղեկավարությունը, վճռական բողոք հայտնելով, համաշխարհային հասարակության ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ այդ գործողությունների հետեւանքների համար պատասխանատվությունը լիովին ու ամբողջապես կընկնի Ադրբեջանի ղեկավարության ու նրա հովանավորների վրա»[1]:

Ինչպես արդեն նշել ենք, ՊՊԿ-ի ողջ գործունեությունը, իր կոչմանը համապատասխան, ուղղված էր, ԻՊՈՒ-ի կառուցվածքային բարեփոխությունների իրականացմանը զուգահեռ, Ադրբեջանի ռազմական ագրեսիային ճակատային գծի ամբողջ երկայնքով հակահարվածների նախապատրաստմանն ու անցկացմանը: Դրա համար անհրաժեշտ եղավ էական փոփոխություններ կատարել նաեւ ՊՇ-ների իշխանական համակարգում, քանզի գործող տեղական ինքնակառավարման մարմիններն ու ՊՇ հրամանատարությունը բավական չէին ՊՊԿ-ի կողմից ռազմաճակատի օպերատիվ ղեկավարումն ապահովելու համար, մանավանդ որ այդ մարմինները միաժամանակ զբաղվում էին տնտեսական, շինարարական-

[1] «Արցախ», 02.09.1992թ.:

վերականգնողական ու բնակչության առօրյայի տարաբնույթ խնդիրների լուծմամբ: Ելնելով դրանից՝ ԼՂՀ ՊՊԿ-ն որոշում ընդունեց հանրապետության շրջաններում (ՊՇ-ներում) ՊՊԿ լիազոր ներկայացուցիչներ նշանակելու մասին եւ 1993 թ. ապրիլի 29-ի որոշմամբ հաստատեց ՊՊԿ լիազոր ներկայացուցիչների մասին կանոնադրությունը[1]: Այդ կանոնադրության համաձայն, Ստեփանակերտ քաղաքում եւ հանրապետության շրջաններում ՊՊԿ լիազոր ներկայացուցիչները դարձան բարձրագույն պաշտոնատար անձինք եւ օժտվեցին իրենց տարածքներում լիակատար գործադիր ու կարգադիր իշխանությամբ՝ այն իրականացնելով ՊՇ հրամանատարների հետ համատեղ: Նրանք պատասխանատվություն էին կրում իրենց ղեկավարած տարածքներում տիրող իրավիճակի համար: ԼՂՀ ՊՊԿ լիազոր ներկայացուցչի կարգադրությունները ԼՂՀ օրենքներին, ԳԽ-ի որոշումներին եւ ՊՊԿ-ի կարգադրություններին չհամապատասխանելու դեպքում կարող էին բեկանվել կամ կասեցվել ԼՂՀ ՊՊԿ նախագահի կողմից: Հանրապետության մայրաքաղաքի եւ շրջանների օպերատիվ կառավարման, ԼՂՀ ՊՊԿ-ի, ինչպես նաեւ սեփական որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողություն ապահովելու համար ՊՊԿ լիազոր ներկայացուցչին էր տրվում համապատասխան տեղական խորհրդի գործկոմի աշխատակազմը:

Գյուղական համայնքներում, ինչպես հայտնի է, շարունակում էին պահպանվել նախկին խորհրդային իշխանության տեղական մարմիններն ու նրանց ղեկավարները՝ գյուղական խորհուրդներն իրենց աշխատակազմով, որոնք, սակայն, օժտված չլինելով լիարժեք իշխանությամբ, գործում էին ՊՊԿ լիազոր ներկայացուցչի եւ ՊՇ հրամանատարի ցուցումներին համապատասխան, ակ-

[1] ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. ապրիլի 29-ի որոշում N 197:

տիվորեն մասնակցելով ինչպես պաշտպանական, այնպես էլ համայնքի առօրյա սոցիալ-տնտեսական խնդիրների կատարմանը:

Միաժամանակ լուրջ աշխատանք տարվեց ազատագրված տարածքներում ԼՂՀ պետական կառավարման համակարգ ստեղծելու ուղղությամբ, որը սկզբնավորվեց ԼՂՀ ԳԽ նախագահության՝ «ԼՂՀ կազմում Քաշաթաղի շրջան ստեղծելու մասին» 1993 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ[1]: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի կենտրոն հաստատվեց Քաշաթաղ (նախկին Լաչին, այժմ՝ Բերձոր) քաղաքը: Նախատեսվեց կարճ ժամկետում ճշտել եւ հաստատել նորաստեղծ շրջանի սահմանները, ձեւավորել շրջանային գործադիր իշխանությունները, միջոցներ ձեռնարկել բնակավայրերը վերականգնելու եւ վերաբնակեցնելու համար: Ինչպես հայտնի է, ՊՊԿ-ն Քաշաթաղի շրջանի բնակավայրերը վերաբնակեցնելու խնդիրը լուծեց Ադրբեջանից հայ փախստականներին եւ ԼՂՀ-ի բռնազավթված շրջաններից տեղահանված անօթեւան բնակչությանը տեղավորելու հաշվին:

ԼՂՀ-ի պետականության կայացման ուղղությամբ ՊՊԿ-ի ձեռնարկած կարեւոր քայլերից մեկը հանդիսացավ հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության՝ արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) ստեղծումը: Այդ մասին ՊՊԿ-ի 1993 թ. հուլիսի 23-ի որոշմամբ ԼՂՀ արտգործնախարար նշանակվեց Ա. Ղուկասյանը[2]:

Այսպիսով՝ ՊՊԿ-ն հնարավորություն ստացավ ոչ միայն իր համար կառավարելի դարձնել ԻՊՈՒ ստորաբաժանումները եւ անմիջականորեն վերահսկել նրանց գործողությունները, այլեւ ուշադրության կենտրոնում պահել պետական ինստիտուտների եւ

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 12, կ. 1, թ. 24-25:
[2] ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993 թ. հուլիսի 23-ի որոշում N 256:

ենթակառուցվածքի ստեղծման, սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրների լուծման հարցերը: Վերջիններիս թվում ամենակարեւորներն էին հակառակորդի հրթիռա-հրետակոծությունների եւ մարտական գործողությունների հետեւանքով ավերված բնակավայրերի, ձեռնարկությունների եւ մյուս օբյեկտների վերականգնումը, Ադրբեջանի հայաբնակ շրջաններից ԼՂՀ ներհոսած փախստականների տեղավորումն ու սոցիալ-կենցաղային պայմանների ապահովումը: Այս հիմնախնդիրների լուծման գործում նույնպես վճռորոշ դեր խաղաց ՀՀ-ի ցույց տված աջակցությունը: Հանուն արդարության պետք է ընդգծել, որ ինչպես ՊՊԿ-ն, այնպես էլ ամբողջ Արցախը մեծապես ապավինում էին նաեւ սփյուռքի հարաճուն օգնությանը, ինչը դարձավ ԼՂՀ պետականության գոյատեւման ու կայացման կարեւորագույն գործոններից մեկը:

2. ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջպետական հարաբերությունները եւ դրանց ազդեցությունը Արցախում պետական շինարարության գործընթացի վրա:

Թվում էր՝ մարտական գործողությունների սաստկացման այդ շրջանում ՊՊԿ-ի ստեղծումով կհարթվեն ԼՂՀ օրենսդիր մարմնի եւ ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992 թ. օգոստոսի 27-ի Ալմա-Աթայի եւ Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայնագրերը) առաջ եկած տարաձայնությունները վատթարացրին երկկողմ հարաբերությունները: Իսկ այդ տարաձայնությունների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԼՂ-ի շուրջ բանակցային գործընթացը տարվում էր առանց ԼՂՀ-ի մասնակցության:

Օգոստոսի 27-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում տեղի ունեցած հանդիպմանը ԱՀ-ն եւ ՀՀ-ն կոմյունիկե ստորագրեցին հակամարտության շրջանում կրակի դադարեցման մասին: Սակայն ԱՀ ՊՆ մամլո կենտրոնի ղեկավար Լ. Յունուսովան դրանից անմիջապես հետո հայտարարեց, թե Ադրբեջանի ԱԳՆ-ի ստորագրած այդ համաձայնագիրը օրենք չէ ԱՀ ՊՆ-ի համար[1]:

Հրադադար հաստատելու մասին համաձայնություն ձեռք բերվեց նաեւ սեպտեմբերի 19-ին Սոչիում ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանի, Ռ. Կազիեւի, Թ. Կիտովանիի եւ ՌԴ ԱԱ նախարար Վ. Բարաննիկովի հանդիպման ընթացքում: Այդ համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտներ սեպտեմբերի 26-ի 00 ժամից, մինչդեռ մարտական գործողություններն ավելի սաստկացան, եւ

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 165:

նույն օրը Մարտակերտի շրջանում թշնամուն հաջողվեց զավթել Չլդրան գյուղը[1]:

Հրադադարի մասին իրար հաջորդող համաձայնությունների ձեռք բերումն ու դրանց անարդյունք մնալու այս փաստերը գալիս էին հաստատելու ԼՂՀ ԳԽ նախագահության՝ բանակցային գործընթացի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հիմնավորվածությունը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, դեռեւս սեպտեմբերի 6-ին, Ալմա-Աթայի հանդիպման արդյունքների անհետեւանք մնալու եւ ԼՂ-ի բանակցային կարգավիճակի հստակ կանոնակարգման բացակայության առիթով դիմում էր հղել ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի խորհրդաժողովի մասնակից երկրների կառավարություններին՝ իր անհանգստությունը հայտնելով այն կապակցությամբ, որ Մինսկի խորհրդաժողովի նախապատրաստության շրջանակներում ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների որոնումը բացարձակապես տարվում է՝ ելնելով գործընթացի մասնակիցների քաղաքական շահերից, լիովին արհամարհելով ԼՂ-ի վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված իրավական ակտերը: Հայտարարության մեջ ընդգծվում էր, որ նման մոտեցումը միայն ու միայն սրում է իրավիճակը տարածաշրջանում[2]:

Այդ հայտարարության առթիվ եղան մի քանի միջազգային արձագանքներ ԼՂՀ-ում տիրող իրավիճակի վերաբերյալ: Այսպես, ԼՂ հարցով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելին 1992 թվականի սեպտեմբերի 23-ին ԵԱՀԽ խորհրդի գործող նախագահ Յ. Մորավչեկին ուղղված նամակում խոստովանեց.

[1] Հարությունյան Մ., էջ 89:
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 5, կ. 1, թ. 4-5:

«...Ավագ պաշտոնատար անձանց կոմիտեի վերջին հանդիպումից հետո, որն ապացուցեց ղարաբաղյան հակամարտության կողմերին համաձայնության բերելու անհնարինությունը..., անհրաժեշտ եմ համարում նկարագրել այն հիմնական արգելքները, որոնց բախվել է իտալական նախագահությունը...

... ԼՂ-ի ապագա կարգավիճակի վերաբերյալ բանակցությունները ԵԱՀԽ-ն հանձնարարել է 11 երկրների: Այդ տարածքը, որի վրա այդ 11 երկրներից մեկը դե-յուրե պաշտպանում է ինքնիշխանությունը, հանդիսանում է բանակցությունների առարկա: Իմ կարծիքով, այդ երկրի ցանկացած գործունեություն, որը նպատակ ունի վերականգնել իր վերահսկողությունը այդ տարածքի նկատմամբ՝ օգտագործելով ռազմական միջոցներ, անհամատեղելի է նրա մասնակցությանը հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններին: Ահա թե ինչ է կատարվում իրականում: Բանակցային գործընթացի սկզբից տվյալ տարածքի 15-20 տոկոսը փոփոխել է իր սահմանները: Ինչպե՞ս կարող է Մինսկի խումբը անտարբեր շարունակել բանակցություններն այն ժամանակ, երբ բանակցությունների առարկան աստիճանաբար անհետանում է: Եվ եթե ԼՂ-ն ռազմական հարձակողական գործողությունների արդյունքում նորից անցնի այդ երկրներից մեկի վերահսկողության տակ, ի՞նչ կմնա բանակցությունների առարկայից...»[1] :

Բանակցային գործընթացի նկատմամբ ՀՀ իշխանությունների եւ ԼՂՀ ԳԽ նախագահության ոչ միանշանակ դիրքորոշումները ցույց տվեցին, որ ՀՀ նախագահը դարձյալ չէր վստահում ԼՂՀ օրենսդիր մարմնին: Ուստի՝ վերջինս սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել եւ բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ նպատակով 1992 թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝

[1] ԼՂՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի տրամադրության տակ եղած նյութերից:

նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի գլխավորությամբ, այցելեց Երեւան եւ հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ: Անհրաժեշտ էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն ունեցել ԼՂՀ-ի հանդեպ ՀՀ-ի վարած քաղաքականության մեջ, մանավանդ, երբ ԼՂՀ-ի վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության[1]: Սակայն բանակցություններն անցել են անարդյունք: Ըստ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի՝ իրեն «չի բավարարել» ՀՀ ղեկավարության այն բացատրությունը, որ Ալմա-Աթայի եւ Սոչիի բանակցությունները սկսելու ժամանակ ԼՂՀ ղեկավարության հետ չեն խորհրդակցել «ժամանակի բացակայության պատճառով»: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատարը «անլուրջ» է բնութագրել նաեւ ՀՀ նախկին պաշտպանության նախարար Վ.Սարգսյանի հայտարարությունն այն մասին, թե նա իբր «չի նկատել» Սոչիի պայմանագրի որոշ լուրջ անհեթեթությունները[2]:

Պատերազմական թոհուբոհի, նրա ծանր սոցիալ-տնտեսական հետեւանքների այս շրջանում նոյեմբերի 17-ը ԼՂՀ-ի կյանքում նշանավորվեց կարեւոր իրադարձությամբ. ԼՂՀ ԳԽ նախագահությունը հաստատեց պետական զինանշանը եւ օրհներգը: Նույն թվականի նոյեմբերի վերջին ԼՂՀ ԳԽ շենքին բարձրաց եց արցախյան եռագույն դրոշը[3]: Այս իրադարձությունն, իհարկե, տրամադրության վերելք ստեղծեց ինչպես իշխանական, այնպես էլ բնակչության լայն շրջաններում: Սակայն երեւանյան անհաջող բանակցություններից հետո նորից լարվեց ԼՂՀ ներքաղաքական դաշտը: Այդ առնչությամբ նոյեմբերի 24-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ՀՀ նա-

[1] «Երկիր», 30.10.1992թ.:
[2] «Ազատ մամուլ» լրատվական գործակալության Ստեփանակերտի գրասենյակ, առօրյա լուրերի ամփոփաթերթիկ, 10.11.1992թ.:
[3] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 193:

խագահ Լ. Տեր-Պետրոսյանին հղեց հետեւյալ նամակը. «Մեծարգո նախագահ. ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջեւ ժամանակի ընթացքում Երեւանում սկսված բնական երկխոսությունների օգտակարությունը հուշում է գործընթացի շարունակման անհրաժեշտությունը: Վիճակի օրավուր սրման պայմաններում, պատիվ ունենք, մեծարգո նախագահ, հրավիրելու Ձեզ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ՝ արժեքավորելու եւ կոնկրետացնելու շահավետ երկխոսությունը: Համաձայնություն տալու դեպքում, խնդրում ենք մեզ տեղյակ պահել Արցախ գալու Ձեզ համար նպատակահարմար ժամանակի մասին:

Ընդունեք, պարոն նախագահ, Ձեր նկատմամբ տածած հարգանքների հավաստիացումը»[1]:

Պետք է նշել, որ այդպես էլ ՀՀ նախագահը չցանկացավ հանդիպել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ: Նման պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը գաղտնի նամակ հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին:

Նամակի բովանդակության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, ուսումնասիրելով դրանք, կարելի է եզրակացնել, որ նամակում ԼՂՀ ԳԽ նախագահությունը բանակցային գործընթացի վերաբերյալ արտահայտել է իր տեսակետներն ու առաջարկությունները:

Այսպիսով, հակառակ սպասվածի, թե արցախյան գոյապայքարի այս ծանր ժամանակահատվածում ՊՊԿ-ի ստեղծումով կհանդարտվի ներքաղաքական լարվածությունը, կհարթվեն պաշտոնական Երեւանի ու Ստեփանակերտի կողմից խնդրի տարբերությունները, բանակցային գործընթացում ԼՂՀ օրենսդիր մարմնի եւ ՀՀ նախագահի միջեւ առաջացած տարաձայնությունները նոր խթան հանդիսացան լարվածության ուժեղացման համար: Այնուա-

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 6, կ.1, թ. 22:

մենայնիվ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը շարունակում էր ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունները բարելավելու համար ուղիներ որոնել, սակայն այդ որոնումներն ապարդյուն անցան:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքաղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից ԳԽ նախագահության անդամների, ԳԽ պատգամավորների եւ ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշումների գործադրման: Դրանց հետեւանքով 1992-ի դեկտեմբերը ԼՂՀ-ում նշանավորվեց մի շարք ներքին ապակայունացնող իրադարձություններով, որոնց կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը դեկտեմբերի 23-ին դիմում հղեց ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանին: «Հիմնականում հավանություն տալով պատերազմական իրավիճակով թելադրված ԼՂՀ ԻՊՈՒ-ի ստեղծմանը միտված Ձեր գործունեությանը, - նշվում էր դիմումի մեջ, - հարկ ենք համարում հայտնել որոշ նկատառումներ:

Իրավական պետության ստեղծման ուղղությամբ մեր նպատակասլաց կեցվածքը միշտ չէ, որ հարիր է հանրապետության ներսում տեղի ունեցող անցանկալի երեւույթներին: Համապատասխան մշակված հրահանգավորման բացակայության, օրինական բանակ ստեղծելու ուղղությամբ որոշ «շահագրգիռ» ուժերի պատճառով հաճախակի են դառնում մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումները, բռնությունների գործադրումը, որոնք կարող են նպաստել ԼՂՀ-ում առանց այն էլ լարված իրավիճակի շիկացմանը: Գրանցվել են անգամ ժողովրդական պատգամավորների իրավունքների ոտնահարման դեպքեր: Այսպես, ս.թ. դեկտեմբերի 22-ին «կարգ սահմանողները» կրկնակի փորձով բռնությամբ մեկուսարան են տարել ԼՂՀ ժողովրդական պատգամավոր, ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի անդամ

Գ. Բ. Պետրոսյանին: Չնայած վերջինս ունի պատգամավորի կարգավիճակ, ինչը նրան անձեռնմխելի է դարձնում իրեն քաղաքակիրթ համարող ցանկացած պետությունում, «օրինապահների» կողմից Գ.Բ.Պետրոսյանը ենթարկվել է մարդկային արժանապատվության ոտնահարման, բռնության եւ ծեծի: Մինչեւ այժմ չեն վերադարձվել նրա պատգամավորական վկայականը, անձնագիրը, դիվանագիտական անձնագիրը եւ այլ փաստաթղթեր: Գ. Բ. Պետրոսյանի նկատմամբ ցուցաբերված նման արտառոց արարքը, որը, ցավոք, ունի նախադեպեր, հղի է վերածվելու առօրեական վտանգավոր եւ անշրջելի գործելակերպի: Դրանից խուսափելու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը առաջարկում է հանձնարարել համապատասխան մարմիններին՝ Գ. Բ. Պետրոսյանի նկատմամբ ցուցաբերված անօրինությունների կապակցությամբ կատարել հետաքննություն, մեղսագործներին ենթարկել արժանի պատասխանատվության: Կատարած միջոցառումների մասին սեղմ ժամկետում տեղեկացնել ԼՂՀ ԳԽ նախագահությանը»[1]: Նույնի առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ նաեւ հայտարարությամբ, որտեղ, շարադրելով ՊՊԿ նախագահին հղված նամակում բերված փաստերը, ասվում է. «ԼՂՀ ԳԽ նախագահությունը գտնում է, որ վերոհիշյալ դեպքերը մասնավոր երեւույթ չեն: Ուստի՝ կարեւոր է համարում ուշադրություն հրավիրել դրա վտանգավոր ապակայունացնող բնույթի վրա: ԼՂՀ ԳԽ նախագահությունն անթույլատրելի է համարում զինյալ կազմավորումների օգտագործումը քաղաքական նպատակով եւ այս առնչությամբ դիմել է ԼՂՀ ՊՊԿ-ին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել հանրապետությունում կարգուկանոն ապահովելու համար եւ սկզբունքային գնահատական տալ կատարվածին: Միեւնույն ժամանակ, ԼՂՀ ԳԽ նախա-

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 6, կ. 1, թ. 71-72:

գահությունը պահանջում է, որ գործը քննվի ԼՂՀ ռազմական դատախազությունում»[1]:

ՊՊԿ-ի եւ ԳԽ նախագահության միջեւ տարաձայնություններ ծագեցին նաեւ ԼՂՀ օգնության հիմնադրամի ստեղծման հարցում: Հիմնադրամ ստեղծելու մասին ԳԽ նախագահությունը որոշում էր կայացրել դեռեւս նոյեմբերի 30-ին, որը նպատակ ուներ կենտրոնացնել հանրապետություն մուտք գործող օգնությունը, իսկ ՊՊԿ նախագահը դեմ էր այդ որոշմանը[2], հավանաբար, այն պատճառով, որ հիմնադրամը ստեղծվում էր ԳԽ նախագահության վերահսկողության ներքո, իսկ դա արդեն ենթադրում էր ՊՊԿ-ի որոշակի ֆինանսատնտեսական կախվածություն ԳԽ նախագահությունից:

Այս եւ նման հարցերում Արցախի իշխանությունների միջեւ գոյություն ունեցող հակասությունները փետրվարին հանգեցրին ներքաղաքական լուրջ բախումների:

Այսպես, փետրվարի 10-ին Ադրբեջանի կողմից ուղղակի ագրեսիայի շարունակման եւ ԼՂՀ տարածքի բռնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով՝ մինչեւ 1993 թ. մայիսի 12-ը, երկարաձգել 1992 թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության ժամկետը[3]: Նույն որոշմամբ, ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահություն ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաեւ առաջիկա 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Այդ առնչությամբ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը հրապարակեց ԼՂՀ ԳԽ նախագահությանն ուղղված մի նամակ, որում, մասնավորապես, նշված է. «Անհրաժեշտ եմ համարում իմ վերաբերմունքը արտահայտել ԼՂՀ ԳԽ նախագահությանը՝ ռազմական դրության եռամսյա ժամկետը ոչ մի կերպ չի կարող նպաստել ռազմական դրության կանոնակարգի, ոչ մի լուրջ ու երկարաժամկետ միջոցառման իրականացմանը, պաղեցնում է ինքնապաշտպանության շարքերում ծառայելու մոբիլիզացվածներին: Ռազմական դրության ժամկետի այդպիսի կարճատեւ երկարաձգումը դավագրգռում է զորակոչման ենթակա անձանց եւ նրանց տանում բոլոր ձեւերով դրանից խուսափելուն ու սպասողական դիրք գրավելուն: Հատկապես պետք է ընդգծել այն պարագան, որ նման որոշումը թյուրիմացության մեջ է գցում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ՄԱԿ-ի ԱԽ-ին, միջազգային մյուս կազմակերպություններին եւ հանրապետության բնակչությանը: Ստեղծվում է ԱՀ-ի կողմից իբր ռազմական գործողությունները դադարեցվելու ենթադրյալ տպավորություն: Իսկ Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարների բազմիցս արած հայտարարությունները, մոբիլիզացումը շարունակելը եւ ռազմաճակատի բոլոր տեղամասերում մարտական գործողությունների ակտիվացումը հաստատում են պատերազմը շարունակելու հստակ գիծը, որի նպատակը ԼՂՀ ամբողջ տարածքի լրիվ բռնազավթումն է»:

Նամակում Ռ. Քոչարյանը, անդրադառնալով ՊՊԿ-ի գործունեության ժամկետի հարցին, նշում է, որ այդպիսի ժամկետ չի հաստատվել, եւ ռազմական դրության կարգավիճակի ժամկետը, որն իրականացնելու է կոչված ԼՂՀ ՊՊԿ-ն, երկարաձգվում է, այդ

[1] Նույն տեղում, թ. 73-74:
[2] «Արցախ», 19.12.1992թ.:
[3] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 7, կ. 1, թ. 52-53:

մասին հարցը կարող է քննարկվել միայն այդ ժամկետը լրանալուց հետո: Ռ. Քոչարյանը անհասկանալի է համարում նաեւ ԼՂՀ ՊՊԿ-ի գործունեության ժամանակահատվածում ընդունված բոլոր կարգադրություններն ու որոշումները ԼՂՀ ԳԽ նախագահությանը ներկայացնելու հարցադրումը: «Հաշվի առնելով, որ ՊՊԿ-ն միաժամանակ իրականացնում է ԼՂՀ ՆԽ-ի դերը, - նշված էր նամակում, անցած ժամանակամիջոցում ընդունվել են նորմատիվային եւ օպերատիվ բնույթի մեծ թվով փաստաթղթեր, որոնց մի մասը անհրաժեշտության դեպքում ուղարկվել է ԼՂՀ ԳԽ նախագահություն:

Այսպիսով, 6 ամսվա ընթացքում փաստորեն ոչ մի հետաքրքրություն չցուցաբերելով ռազմական դրության կանոնակարգի իրականացման հարցերի նկատմամբ, չփորձելով ՊՊԿ-ին որեւէ աջակցություն ցույց տալ՝ նրա առջեւ կանգնած խնդիրները լուծելու գործում, ԳԽ նախագահությունը ընտրել է նրա վրա, այսպես ասած, «ներգործելու» անընդունելի ձեւը: Եվ, վերջապես, տարակուսանք է հարուցում ռազմական դրության հարցը առանց ՊՊԿ-ի եւ ինքնապաշտպանության ուժերի կարծիքը հաշվի առնելու, իսկ առավել եւս՝ առանց դրանց ներկայացուցիչներին հրավիրելու քննարկման դնելը:

Եթե ԼՂՀ ԳԽ նախագահությունը, այնուամենայնիվ, հնարավոր է համարում առանց ՊՊԿ-ի եւ ԻՊՈՒ-ի ուղղակիորեն լուծել պաշտպանական բնույթի հարցերը, ապա առաջարկում եմ, որ նախագահությունն իր վրա վերցնի ռազմական դրության կանոնակարգի իրականացման գործունեությունը եւ՝ այստեղից բխող ողջ պատասխանատվությունը»[1]:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության եւ ազգությունների հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ պատգամավորների

[1] «Արցախ»,18.02.1993թ.:

խորհրդակցություն: Հանդիպման ժամանակ, որին մասնակցել է նաեւ ԼՂՀ ՊՊԿ-ի եւ ԻՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունների ժամկետը լրանալու եւ ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչեւ պատերազմի ավարտը երկարաձգելու եւ ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրին[1]:

Միաժամանակ, հանրապետության ՋԼՄ-ները անզուսպ արշավ սկսեցին՝ ԼՂՀ ԳԽ-ին հեղինակազրկելու նպատակով:

Այդ կապակցությամբ փետրվարի 17-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ հայտարարությամբ, որի մեջ դա որակվում էր որպես ԼՂՀ օրենսդիր եւ գործադիր իշխանություններին իրար հակադրելու փորձ, եւ որը, ինչպես պատմության մեջ բազմիցս է պատահել, կարող է ունենալ աղետալի հետեւանքներ: ԳԽ նախագահությունը ողջախոհության է կոչում ներքաղաքական իրավիճակի նորմալացմամբ շահագրգիռ բոլոր անձանց եւ մարմիններին, քանզի պատմությունը եզակի հնարավորություն է ընձեռել՝ անմնացորդ ավանդ մուծել հայ ժողովրդի ազատագրման եւ միավորման գործին, եւ ոչ ոք իրենց չի ների այդ հնարավորությունը ձեռքից բաց թողնելու համար[2]:

Այս փաստաթղթի հետ միաժամանակ հրապարակվեց Արցախի ժողովրդական ճակատի վարչության հայտարարությունը: Ընդգծելով ՊՊԿ-ի դրական աշխատանքը՝ ժողովրդական ճակատի վարչությունը օրենսդիր մարմնին մեղադրել է անգործության մեջ: ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու մասին ԳԽ նախագահության որոշումը այդ հայտարարության մեջ բնութագրվել է իբրեւ «քաղա-

[1] «Երկիր», 17.02.1993թ.:
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 7, կ. 1, թ. 66-67:

քական պատվախնդրության» դրսեւորում: Փաստաթղթում ԳԽ նախագահությունից պահանջվել է «անհապաղ որոշում ընդունել ընդհուպ մինչեւ պատերազմի ավարտը ռազմական դրության ռեժիմ մտցնելու մասին», ինչպես նաեւ ՊՊԿ-ն վերակազմել Պետական խորհրդի՝ տրամադրելով լրացուցիչ լիազորություններ, հրավիրել Սահմանադիր ժողով՝ վերջինիս հանձնելով օրենսդիր իշխանությունը: Այդ առնչությամբ առաջարկվել է գումարել ԼՂՀ ԳԽ նստաշրջան:

Ինչպես տեսնում ենք, ներքաղաքական իրադրության սրումը հետեւանք է այն հանգամանքի, որ օրենսդիր եւ գործադիր մարմինները, որոնք առաջին հայացքից, թվում է, յուրովի իրավացի են գործում, չունեին համատեղ եւ ներդաշնակ գործունեության մշակված ծրագիր, ինչի պատճառով նրանց կողմից մեկը մյուսին ներկայացվող մեղադրանքները, փաստորեն, վերաբերում էին երկուսին էլ: Պարզ է, որ ժողովրդի կողմից օրինական կերպով ընտրված օրենսդիր մարմնի եւ պատերազմական շրջանի թելադրանքով ստեղծված գործադիր մարմնի միջեւ համերաշխության առկայության, երկուստեք քաղաքական պատվախնդրությունների բացակայության դեպքում նրանց երկուսի ջանքերը լիովին կնպատակամղվեին ընդհանուր շահին՝ ադրբեջանական ագրեսիայի դեմ հաղթանակի հասնելու գործին, այլ ոչ թե ներքին հակասությունների հաղթահարմանը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայության հասնելուն: Չի կարելի ժխտել, որ ՊՊԿ-ն, որպես պատերազմական շրջանի ռազմաքաղաքական մարմին, պարտավոր էր հանրապետության գերագույն ղեկավար մարմնի առաջ իր պատասխանատվության եւ իրավունքների շրջանակներում լուծել ոչ միայն ռազմական խնդիրները, այլեւ դրանցից բխող, դրանցով պայմանավորված եւ դրանց հետ առնչվող ներքին կյանքի հարցերը: Հենց այդ շրջանակներից դուրս գալը, ԼՂՀ ԳԽ-ի ու նրա նախագահության

գործունեությունը սահմանափակելու ձգտումը, ինչը պարզորոշ կերպով նկատելի է ստեղծված իրադրության ֆոնի վրա, հանդիսացել է ներքաղաքական կյանքի լարվածության գլխավոր պատճառը:

Այդ իրադրությունից դրդված՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը նամակ հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Նամակը, որը ներկայացվում եւ գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, ունի հետեւյալ բնագիրը. «Մեծարգո նախագահ. մեկ տարուց ավելի է, ինչ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնության կամքով Դուք ընտրվեցիք ՀՀ առաջին նախագահ: Իր պետականությունը կերտող արցախահայությունը, մեծ հույսեր տածելով Ձեր նախագահական գործունեության նկատմամբ, սպասում է, որ Հայաստանը կթոթափի տնտեսական ճգնաժամը, ժողովուրդը կձերբազատվի ընկերային քաոսից եւ սպառողական հոգեբանությունից, ազգը կրկին զարթոնք կապրի եւ կշարունակի Արցախի եւ Հայաստանի ազատագրման համար հինգ տարի առաջ սկսած, հիրավի, համաժողովրդական պայքարը:

Ցավոք, Հայաստանում նախագահական կառավարական ձեւ մտցնելուց հետո նկատելիորեն փոխվել է Հայաստան-Արցախ փոխհարաբերությունը: Ժողովրդի կողմից ընտրված ԼՂՀ իշխանությունը վստահության չի արժանանում Ձեր կողմից, որի մասին դեռեւս 1992թ. հոկտեմբերին մենք ուղղակիորեն ասել ենք Երեւանում ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հետ Ձեր ունեցած հանդիպման ժամանակ: Դուք, պարոն նախագահ, օգտագործելով տնտեսական եւ ռազմական գործոնները, Արցախում իրականացնում եք մի քաղաքականություն, որի հետեւանքով քայքայվում են ԼՂՀ իշխանության կառույցները, ինչը կհանգեցնի Արցախի կորստյանը: Դիմելով Ձեզ, լիահույս ենք, որ Դուք կձեռնարկեք համապատասխան քայլեր նման գործելակերպը դադարեցնելու ուղղությամբ: Ներքա-

ղաքական հակադրության շարունակումը կարող է լուրջ կերպով վատթարացնել առաջին հերթին ռազմական իրավիճակը, եւ դրա համար ամբողջ պատասխանատվությունը կընկնի նրանց վրա, ովքեր նպաստել են հակադրությանը ու միջոցներ չեն ձեռնարկել նման քայլերը կասեցնելու ուղղությամբ:

Պարոն նախագահ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք հանգամանքների բերումով ՀՀ ժողովուրդը հայտնվել է կարիքի եւ թշվառության մեջ, դարձել հեշտ կառավարելի: Նրան դժվար չէ հրամցնել այն անհեթեթությունը, իբր բոլոր չարիքի աղբյուրը Արցախի հիմնահարցն է, եւ բավական է թոթափել այդ «բեռը», եւ հայությունը կհայտնվի դրախտի մեջ: Հարցը ո՞րն է: Կարելի է զոհաբերել Ղարաբաղը, եւ հազարամյա պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ Արցախը հանուն մեծ նպատակի դիմել է ինքնազոհաբերման: Սակայն կոնկրետ պարագայում դա կլինի միայն համազգային մեծ պարտությունների սկիզբը: Չպետք է մոռանալ, որ ներկայումս, ուզում ենք դա, թե ոչ, Ղարաբաղը ստանձնել է հայության բարգավաճման կամ կործանման դերը: Մեր ժողովուրդը, իրեն չկտրելով ազգից, ընտրել է ազատության եւ անկախության ուղին ու պատրաստ է հավատարիմ մնալ դրան: Ուստի, մեր խորին համոզմամբ, Հայաստանն ու Արցախը պետք է ունենան եւ կենսագործեն համաձայնեցված տնտեսական, ռազմական եւ քաղաքական ռազմավարություն, որի անհրաժեշտության մասին մենք բազմիցս խոսել ենք Ձեզ հետ:

Ինչ խոսք, դյուրին չէ խուլ շրջափակման մեջ հայտնված Հայաստանի եւ Արցախի դրությունը: Գտնվելով անհարմար տարածաշրջանում՝ մեզ ստիպում են համաձայնվել ստեղծված իրավիճակին, կրավորական կեցվածք ընդունել՝ հաց, եռանդուժ, գազ ձեռք բերելու համար: Այդ ամենը հրամայական են դարձնում փութացնել համազգային ոգու ստեղծագործման գործընթացը, կանոնավոր ազգային բանակի անհետաձգելի շինարարությունը: Զգալով դրա բացակայությունը՝ Ադրբեջանն ամեն կերպ փորձում է Հայաստանին պաշտոնապես ներքաշել լայնածավալ պատերազմի մեջ եւ զենքի ուժով լուծել Ղարաբաղի հիմնահարցը, իսկ վաղը՝ հավանաբար, նաեւ Զանգեզուրի, Սեւանի չհիմնավորված պահանջները:

Հարգելի նախագահ. ժամանակին ՀՀ ԳԽ-ի որոշմամբ պարտավորեցվեց գործադիր իշխանություններին ԼՂՀ-ի անունից եւ վերջինիս փոխարեն չստորագրել որեւէ պետական պաշտոնական փաստաթուղթ: Այդ որոշմամբ Հայաստանի իշխանությունները Արցախին ինչ-որ չափով քաղաքական երաշխիք են տվել, ինչը չի կարելի ասել ռազմականի մասին: Սոչիի «զուտ» ռազմա-տեխնիկական պայմանագիրը, Ալմա-Աթայի հուշագիրը, ինչպես նաեւ առանց Արցախի մասնակցության ձեռք բերված մյուս պայմանավորվածությունները հակասում են ոչ միայն Արցախի, այլեւ ողջ հայ ժողովրդի շահերին: Փաստորեն, այդ որոշումների իրականացումը կլիներ Արցախի միակողմանի զինաթափում եւ հանձնում: Հասկանում ենք, որ իր լավ օրից չէ, որ ՀՀ-ն ստորագրել է այդպիսի փաստաթղթեր: Սակայն իրերին նայենք օբյեկտիվորեն եւ ասենք, որ Հայաստանը չի օգտագործում իր բոլոր հնարավորությունները Ղարաբաղի հիմնահարցի լուծման գործում: Մեր խորին համոզմամբ, Հայաստանի հետ հաշիվ կնստեն, եթե նրանում տեսնեն ուժ: Իսկ Հայաստանը դրան կարող է հասնել միայն Ղարաբաղի միջոցով եւ Ղարաբաղում: Պետք է ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի Ղարաբաղում մինչեւ 1993թ. ամառը Ադրբեջանին հասցվի լուրջ պարտություն, որպեսզի Ղարաբաղի, իսկ վերջին հաշվով Հայաստանի ազատության համար պայքարի ոչ միայն ղարաբաղցին: Այո, նա ունի հաստատակամություն, մարտական ոգի, պապենական հողերը ազատագրելու անկոտրում կամք, սակայն մի՞թե

Ադրբեջանը, որը մեր դեմ է կռվում այլազգիների միջոցով, պետք է հուշի համազգային բռունցք ստեղծելու գաղափարը:

Ադրբեջանի լրատվությունը համայն աշխարհին ազդարարել է Հայաստանի «էքսպեդիցիոն կորպուսի» Արցախում գտնվելու մասին: Դա Ադրբեջանի քարոզչության հաղթանակներից է, որ, ցավոք, շատ հեռու է իրականությունից: Սակայն, կարծում ենք, որ Դուք պետք է օգտվեք «ընձեռված» հնարավորությունից՝ Արցախ ուղարկեք մի քանի հազար ազատամարտիկներ, որոնք կհամալրեն Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շարքերը: Հակառակ դեպքում, եթե շարունակվի միայն Ղարաբաղ-Ադրբեջան առճակատումը, ապա հեռու չէ այն ժամանակը, երբ կսպառվեն մեր վերջին ուժերը եւ կկատարվի անխուսափելին: Դրա համար արդեն պատասխան կտան շատերը եւ առաջին հերթին՝ մենք Ձեզ հետ, պարոն նախագահ:

Այսօր հաջողությունը մեզ բոլորիս է անհրաժեշտ, նախ եւ առաջ ծանր դրության մեջ հայտնված ԼՂՀ-ին, եւ որ քիչ կարեւոր չէ՝ Հայաստանի բնակչության բարոյական ոգու բարձրացման համար: Ձեռք բերած հաջողությունները, անտարակույս, եւ միջազգային ասպարեզում կնպաստեն խաղաղություն հաստատելու ուղղությամբ մեզ համար ձեռնտու պայմաններով անցկացվելիք բանակցությունների գործընթացին: Ավելորդ չենք համարում նշել, որ դա կունենա լուրջ հետեւանքներ Ադրբեջանի ներքաղաքական դրության վրա՝ հօգուտ Ղարաբաղի եւ Հայաստանի:

Հապաղելով կտանք շատ զոհեր եւ մեզ համար կստեղծենք առավել բարդ հիմնահարցեր»[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊՊԿ-ի միջեւ քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստին, որտեղ պետք է լսվեր ՊՊԿ-ի 6-ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակցող՝ ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին՝ պահանջելով, առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու, վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է պահպանվի մինչեւ պատերազմի վերջը:

Նիստում նաեւ առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն՝ նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ նախագահությունը մերժեց ընդունել որոշումներ, որոնք կարող են հանգեցնել «բռնատիրության» հաստատման: Ի վերջո, երկար քննարկումներից եւ բանավեճերից հետո գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնել ողջամիտ միակ տարբերակի հետ՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի եւ ԳԽ նախագահության զեկուցումները եւ որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում:

Այս իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԽ մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայտարարություն, որով իրենց մտահոգությունն արտահայտեցին ցավալի միջադեպի առթիվ՝ կատարվածը համարելով ՀՀ ղեկավարության կոպիտ միջամտության արդյունք եւ պահանջելով վերջ տալ ժողովրդավարական ճանապարհով ստեղծված մարմնի հեղինակության հետ տարվող խաղին, միասնական ու համերաշխ գործունեություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո[1]:

[1] ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանի անձնական արխիվ:

[1] «Երկիր», 19.02.1993թ.:

ԳԽ նախագահության եւ ՊՊԿ-ի փոխհարաբերությունների վիճակից ելնելով՝ չպետք է կասկածել, որ մեծապես վերոհիշյալ հայտարարությունը ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանին դրդեց փետրվարի 22-ին ստորագրել մի կարգադրություն, որով քաղաքական գրաքննություն մտցվեց հանրապետության զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ: Կարգադրության մեջ մասնավորապես մատնանշվում էր, որ այսուհետեւ հանրապետության ՁԼՄ–ների ստացած փաստաթղթերը, հաղորդումները եւ մյուս նյութերը կարող են հրապարակվել միայն ԼՂՀ տեղեկատվության եւ մամուլի գերատեսչությունում քննության առնվելուց հետո՝ խուսափելու համար այնպիսի նյութերից, որոնք կարող են վնաս հասցնել հանրապետության պաշտպանունակությանը, վարկաբեկել նրա բանակը, ապակայունացնել իրավիճակը, եւ որ այդ կարգադրությունն ընդունվել է՝ ելնելով ռազմական դրության պահանջներից, հանրապետության զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը կանոնակարգելու նպատակով:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը պարզաբանումների համար դիմել է ՊՊԿ-ին՝ պահանջելով ճշտել կարգադրության տարածման ոլորտը[1]:

Մինչդեռ հայտնի է, որ դեռեւս 1992 թ. օգոստոսի 13-ին գործադիր իշխանությունների կողմից կարգադրվել էր բոլոր ՁԼՄ-ների նկատմամբ հաստատել ռազմական գրաքննություն եւ արգելել ռազմական ցանկացած տեղեկատվության հրապարակումը՝ բացառությամբ ՊԿ-ի մամլո ծառայության հաղորդումների: Այնուհետեւ սահմանվել էր նաեւ ռազմական դրության ժամանակաշրջանում հրապարակման համար արգելված տեղեկությունների ցանկը...

[1] «Երկիր», 26.02.1993թ.:

Մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը՝ 41 պատգամավորի մասնակցությամբ: Օրակարգում էին հետեւյալ հարցերը. ԼՂՀ ՊՊԿ-ի հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ ժամանակավոր կանոնակարգում եւ ԼՂՀ ԳԽ-ի մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ նախագահի եւ նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրերի եւ օրենսդրական ակտերի վերաբերյալ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը[1], իսկ ԼՂՀ ԳԽ նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը[2]: Նա անդրադարձավ մասնավորապես պետականության ձեւավորման խնդիրներին, ինչպես նաեւ նշեց օրենսդիր եւ գործադիր մարմինների միջեւ առկա տարաձայնությունների առարկայական եւ ենթաառարկայական պատճառները[3]:

Նստաշրջանի մարտի 22-ի նիստը սկսվեց ԳԽ նախագահի թեկնածությունների առաջադրումով: Առաջադրվեց 4 թեկնածու. Բ. Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ փոխնախագահ, Ա. Մանուչարով՝ ԼՂՀ ԳԽ պատգամավոր, Լ. Մելիք-Շահնազարյան՝ ԼՂՀ ԳԽ մշտական հանձնաժողովի նախագահ եւ Գ. Հայրապետյան՝ Հադրութի շրջխորհրդի նախագահ:

Ա. Մանուչարովը եւ Լ. Մելիք-Շահնազարյանը հանեցին իրենց թեկնածությունները, որից հետո մյուս թեկնածուները ներկայացրին իրենց ծրագրերը: Դրան հետեւեց քվեարկությունը: Արդյունքում Բ. Առուշանյանը հավաքեց 17, իսկ Գ. Հայրապետյանը՝ 20

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց .4, պ. մ. 2, կ. 1, թ. 41-50:
[2] Նույն տեղում, թ. 59-65:
[3] «Երկիր», 23.03.1993թ.:

ձայն: Վերջինս էլ անցավ հաջորդ փուլ, ուր, սակայն, նրա օգտին նորից գրանցվեց 20 ձայն, մինչդեռ ընտրվելու համար անհրաժեշտ էր 27-ը:

Դրանից հետո հնչեցին տարբեր առաջարկություններ՝ նախագահության կազմի ընդլայնումից մինչեւ ԳԽ-ն ընդհանրապես ցրելն ու նոր ընտրություններ անցկացնելը: Որոշվեց անցկացնել քաղաքական տարբեր ուժերի խորհրդատվական հանդիպում՝ փոխզիջման գնալու տարբերակով: Հանդիպումից հետո հայտարարվեց, որ համաձայնություն է ձեռք բերվել՝ առաջադրել Լ. Մելիք-Շահնազարյանի թեկնածությունը, սակայն քիչ անց պարզվեց, որ այդ պայմանավորվածությունն էլ ամուր հիմքեր չուներ եւ չգործեց: Իր ելույթում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը անհանդուրժելի համարեց ստեղծված կացությունը եւ նշելով տարածաշրջանում ու ՌԴ-ում քաղաքական գործընթացների սրընթաց զարգացումը՝ ընդգծեց նախագահի ընտրության անհրաժեշտությունը: Նա հայտնեց, որ հակառակ դեպքում ինքը հրաժարական կտա:

Որոշում կայացվեց նաեւ մինչեւ տարեվերջ ԼՂՀ տարածքում ռազմական դրությունը երկարաձգելու մասին: Համապատասխանաբար երկարաձգվեց ՊՊԿ-ի գործունեության ժամկետը[1]:

Հաջորդ օրը նստաշրջանում քվեարկության դրվեցին ԳԽ նախագահի պաշտոնի համար առաջադրված 2 թեկնածությունները՝ Լ. Մելիք-Շահնազարյան եւ Վ. Ալեքսանյան: Քվեարկության առաջին փուլում Լ. Մելիք-Շահնազարյանը ստացավ 18, իսկ Վ. Ալեքսանյանը՝ 20 քվե: Վերջինիս թեկնածությունը դրվեց կրկնակի քվեարկության: Նրա օգտին քվեարկեց 22 պատգամավոր: Այսպիսով՝ ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ նստաշրջանը որոշեց Գ. Պետրոսյանին մինչեւ ապրիլի վերջը թողնել ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար, այնուհետեւ կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով նիստը չկայացավ, որոշվեց այն անցկացնել ԳԽ պատգամավորների կազմը կրկնական ընտրություններով համալրելուց հետո: Իսկ այդ ընտրությունները նախատեսված էր անցկացնել 1993 թ. մայիսին[1]:

Այսպիսով, իրադրությանը անհարիր՝ ՀՀ-ԼՂՀ միջպետական փոխհարաբերություններն իրենց հետքը թողեցին ԼՂՀ ներքաղաքական դաշտում՝ ստեղծելով ծայրաստիճան լարված իրադրություն, որը կարող էր սպառնալիք ստեղծել արցախյան հանրապետության անվտանգության համար: Սակայն ԼՂՀ օրենսդիր մարմինն ու նրա ղեկավարությունը դրսեւորեցին քաղաքական կամք, ինչի շնորհիվ էլ հաջողվեց դուրս գալ ստեղծված կացությունից:

[1] Հարությունյան Վ., Իրադարձություններ Լեռնային Ղարաբաղում, Ժամանակագրություն, V մաս, Երեւան, 1997, էջ 47:

[1] «Արցախ», 29.04.1993թ.:

3. Խաղաղարար միջնորդական առաքելությունները եւ արմատական փոփոխությունները ԼՂՀ իշխանական համակարգում:

Մինչ նորաստեղծ հանրապետության ներքին կյանքին վերաբերող հարցերում իրար էին հաջորդում իշխանության օրենսդիր եւ գործադիր մարմինների միջեւ հակասությունների ծագման առիթները, որոնք ավելի ու ավելի ցայտուն էին դարձնում այդ հարցերի նկատմամբ նրանց մոտեցումների եւ, ընդհանրապես, որդեգրած գործելակերպի տարբերությունները, միջազգային ասպարեզում շարունակում էին տեղում դոփել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված դիվանագիտական քայլերը: 1993 թ. հունվարի սկզբին Մոսկվայում՝ փակ դռների ետեւում, ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ բանակցություններ կայացան Հայաստանի, Ադրբեջանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի ներկայացուցիչների միջեւ: Նմանատիպ հանդիպում էր տեղի ունեցել նաեւ 1992 թ. դեկտեմբերին՝ Ժնեւում: Երկու դեպքում էլ ԼՂՀ-ի ներկայացուցիչները բանակցություններին չեն հրավիրվել: Դիտորդների կարծիքով, հենց այդ պատճառով է, որ բանակցությունները անհաջողության են մատնվել[1]:

Հունվարի 3-ին ՌԴ եւ ԱՄՆ նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ մտահոգություն հայտնեցին ԼՂ-ի իրադարձությունների վերաբերյալ[2]:

Այդ առնչությամբ հունվարի 8-ին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը ԳԽ նախագահության անունից հանդես եկավ հայտարարությամբ. «ԼՂՀ ղեկավարությունն ըմբռնումով ընկալեց ԼՂ-ի վերաբերյալ ՌԴ նախագահ Բ. Ելցինի եւ ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի համատեղ հայտարարությունը, - մասնավորապես ասված էր փաստաթղթում: - Բնական է, որ աշխարհը եւ, մասնավորապես, մեծ տերությունները մտահոգված են տարածաշրջանում ստեղծված իրավիճակով, որտեղ արդեն 6 տարի շարունակվող հակամարտությունը վերջին տարում վերածեց ԼՂՀ-ի դեմ ուղղակի ագրեսիայի»: Այնուհետեւ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատարը նշել է, որ «Միջնորդների՝ թե՛ առանձին երկրների եւ թե՛ միջազգային կազմակերպությունների փորձերը հաջողություն չեն բերում, քանի որ Ադրբեջանը լիովին ակնհայտ ապակառուցողական դիրքորոշում ունի եւ ձգտում է բանակցությունների բոլոր փորձերը օգտագործել ռազմական հաջողությունների հասնելու համար»: Նախագահի պաշտոնակատարը հույս է հայտնում, որ մեծ տերություններն իրենց հեղինակությունն ու ազդեցությունը կօգտագործեն կշռադատված եւ չեզոք դիրքերից հեռացող երկրների վրա ներգործելու համար[1]:

Հարկ չկա կասկածելու, որ հիշատակված հայտարարությունը որոշակի դեր է խաղացել ԼՂ-ի հարցով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի հետագա քայլերի մշակման գործում, քանզի արդեն հունվարի 24-ին Երեւան ժամանեց խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելին: Ընդունելով նրան՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդես եկավ առանց որեւէ նախնական պայմանների հրադադարի օգտին՝ ասելով, սակայն, որ եթե Ադրբեջանը ինչ-որ նախնական պայմաններ առաջ քաշի, Հայաստանն ու Ղարաբաղը իրենց պայմանները կներկայացնեն: Նույն օրը Ռաֆայելին Երեւանից մեկնեց Բաքու[2], մինչդեռ՝ սպասվում էր նրա այցը նաեւ ԼՂՀ մայրաքաղաք, սակայն այն չկայացավ: Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահության հրապարակած հայտարարության մեջ ասվում էր, որ արդեն օրինաչափություն է դարձել, երբ ԵԱՀԽ եւ միջազգային

[1] «Երկիր», 08.01.1993թ.:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 08.01.1993թ.:

[1] «Երկիր», 09.01.1993թ.:
[2] «Երկիր», 26.01.1993թ.:

այլ պետությունների պաշտոնական ներկայացուցիչների՝ տարածաշրջան կատարելիք այցերի նախօրյակին ԼՂՀ տարածքը եւ նրա մայրաքաղաքը դաժանորեն ռմբակոծվում են, եւ հիմա էլ, հերթական անգամ, Ադրբեջանն իր գործողություններով փաստորեն հանդես եկավ ընդդեմ խաղաղ գործընթացի շուտափույթ սկսմանը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը հույս է հայտնում, որ միջազգային ընկերակցությունը եւ առանձնապես մինսկյան խմբի երկրները կձեռնարկեն այնպիսի անհրաժեշտ գործողություններ, որոնք ընդունակ կլինեն ներազդել ամեն մի խաղաղասիրական գործունեության անտեսմանը եւ ծախողմանը միտված Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության վրա[1]:

1993 թ. փետրվարի 26-ից մինչեւ մարտի 1-ը Հռոմում կայացավ ԼՂ հակամարտության կարգավորման ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդակցությունը, որին մասնակցեցին ՀՀ եւ ԼՂՀ պատվիրակությունները: ԼՂՀ պատվիրակությունը ներկայացնում էին Բ. Առուշանյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Ղուկասյանը: Խորհրդակցությունում ընդունվեց «Լիազորությունների պայմաններ» կոչվող մի փաստաթուղթ, որը սահմանում էր ԼՂՀ ժամանելիք դիտորդների առաջադրանքները[2]: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մարտի 15-ի նիստում քննադատեց ԼՂՀ պատվիրակության գործունեությունը Հռոմում՝ մասնավորապես նրան մեղադրելով այնպիսի փաստաթղթերի ընդունմանը մասնակցության համար, որոնցում ԼՂՀ-ն դարձյալ չի ընդունվել որպես հակամարտող կողմ, այլ նրա պատվիրակության մեջ ճանաչվել են 2 համայնքներ՝ հավասար իրավունքներով[3]: Իսկ հակամարտող կողմեր են դարձյալ համարվել Հայաստանը եւ Ադրբեջանը: ԼՂՀ ԳԽ նախագահության դիրքորոշման իրավացիությունը հաստատելու է գալիս Ադրբեջանի ԱԳ նախարար Թ. Գասումովի՝ 1993թ. մարտի 6-ին մամլո ասուլիսում կատարած այն հայտարարությունը, թե Հռոմի հանդիպման գլխավոր ձեռքբերումն է հանդիսացել ռազմական հակամարտության գոտում դիտորդների տեղակայմանը կողմերի տված համաձայնությունը: «Եթե տվյալ փուլը իրացվի, - ասել է նա, - ապա Մինսկի խորհրդաժողովում կարելի է քննարկել ԼՂ-ի կարգավիճակի մասին հարցը: Այդ հարցում Ադրբեջանի դիրքորոշման մեջ փոփոխություն տեղի չի ունեցել: Մենք պատրաստ ենք Ղարաբաղի հայերին առաջարկել մշակութային ինքնավարություն»:[1]

Չնայած Հռոմի հանդիպմանը ընդունված կոչին՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները հակամարտության գոտում, Ադրբեջանը մարտի 20-ից ուժեղացրեց ռազմական ճնշումը: Հակառակորդի ուժերը առանձնապես ակտիվ էին գործում Մարտակերտի եւ Լաչինի շրջաններում: Այդ գործողությունների եւ Հռոմում համաձայնեցված ԵԱՀԽ փաստաթղթերի ոգու միջեւ լիակատար հակասության մասին հստակորեն ասված էր ԼՂՀ ՊՊԿ-ի 1993թ. մարտի 25-ի հայտարարության մեջ[2]: Ակնհայտ էր, որ հանրապետության անվտանգությունն ապահովելու համար Լաչինի եւ Քելբաջարի (Քարվաճառ) տարածքներում գտնվող կրակակետերի ոչնչացումը դարձել է կենսական անհրաժեշտություն: Դրանից ելնելով՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները մարտի 27-ին ձեռնարկեցին ռազմական գործողություններ եւ մինչեւ ապրիլի 5-ը հակառակորդին հարկադրեցին թողնել այդ շրջանների տարածքները[3]:

Քելբաջարի իրադարձությունների կապակցությամբ՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ապրիլի 9-ի հայտարարությամբ ընդգծում

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ.7, կ.1, թ. 38:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 06.03.1993 թ.:
[3] «Արցախ»,16.03.1993 թ.:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 33:
[2] " Голос Армении", 27.03.1993г.:
[3] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 402:

էր Քելբաջարի ռազմագործողության անհրաժեշտությունը, որն ապահովեց Մարտակերտի շրջանի բնակչության անվտանգությունը: «Մենք, - ասված է հայտարարության մեջ, - ՄԱԿ-ի անդամ պետությունների ուշադրությունը հրավիրում ենք այն բանի վրա, որ ԵԱՀԽ շրջանակներում խաղաղարար ջանքերը իրականացվում են՝ առանց հաշվի առնելու ԱՀ-ի ագրեսիայի միջազգային-իրավական հիմքերը:

ԼՂՀ տարածքում ԱՀ-ն երբեք միջազգային-իրավական հիմք չի ունեցել, եւ ԼՂՀ ղեկավարությունը բոլոր անհրաժեշտ հնարավորություններն ունի՝ մերժելու Ադրբեջանի նկրտումները:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը խնդրում է ՄԱԿ-ին եւ նրա ԱԽ-ին դատապարտել ԼՂՀ պետականության դեմ ռազմական ագրեսիան»[1]:

Պետք է նշել, որ ռազմական գործողությունները հակամարտության գոտում նոր թափ էին ստացել միջնորդների անգործության պատճառով, եւ Քելբաջարի ազատագրումը հայկական ուժերի կողմից բավականին մեծ խառնաշփոթ առաջացրեց միջազգային ատյաններում: Այս պայմաններում նորից աշխուժացան միջնորդական նախաձեռնությունները հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ:

Իրադարձությունների նման զարգացումը եզակի հնարավորություն ստեղծեց ՌԴ-ի համար, որի դիվանագիտությունը նորից փորձեց իր ձեռքը վերցնել միջնորդական նախաձեռնությունը:

Ապրիլի 19-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը փակ նիստում քննարկեց ՌԴ-ի միջնորդությամբ Մոսկվայում Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների անցկացրած բանակցությունների արդյունքները: Այդ բանակցություններին մասնակցել է ԼՂՀ ՊՊԿ նախագահի խորհրդական Արկադի Ղուկասյանը: Հայկական ՋԼՄ-

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ. 8, կ.1, թ. 61:

ների հաղորդման համաձայն, այնտեղ պայմանավորվածություն է ձեռք բերվել կրակը դադարեցնելու եւ հակամարտության շրջան խաղարար զորքեր մտցնելու մասին: Ենթադրվում է, որ նախատեսվում էին լուրջ զիջումներ հայկական կողմից[1]: Սակայն բանակցությունները մտան փակուղի: Հետագայում այդ բանակցությունների ընթացքի մասին հստակ եւ մանրամասն տեղեկություններ է հաղորդել ՀՀ-ում ՌԴ-ի առաջին դեսպան, պատմագիտության դոկտոր Վլադիմիր Ստուպիշինը[2]:

Նույն օրը ԼՂՀ ԳԽ-ն հանդես եկավ մի նոր հայտարարությամբ՝ փաստելով, որ ԼՂՀ իշխանությունները հակամարտության խաղաղ կարգավորմանը կողմնակից լինելու իրենց խոսքը միշտ էլ հավաստել են գործով՝ ըստ ամենայնի աջակցելով խաղաղարար առաքելություններին: ԼՂՀ-ն կատարել է հրադադարի վերաբերյալ բոլոր պայմանավորվածությունները, իսկ բոլորովին վերջերս էլ միակողմանի հրադադար է հայտարարել՝ ի պատասխան ՌԴ-ի նախաձեռնության եւ ԵԱՀԽ դիտորդների առաջապահ խմբի աշխատանքի ապահովման նպատակով: Սակայն ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է դրանք՝ ի չիք դարձնելով բոլոր խաղաղարար առաքելությունները: Հատկանշական է, որ այս անգամ եւս Ադրբեջանի իշխանությունները գործնականում ոչինչ չարեցին հրադադարի հաստատման համար, ավելին, ԼՂՀ Հադրութի եւ Մարտունու շրջաններին հարակից ադրբեջանաբնակ շրջաններում խոշոր ուժեր կենտրոնացնելով, նախաձեռնել են լայնածավալ հարձակողական գործողություններ՝ կրկին սպառնալով ԼՂՀ-ի գոյությանը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը ընդգծել է, որ առանց ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների մասնակցության՝ բոլոր

[1] «Երկիր», 20.04.1993թ.:
[2] Ступишин В., Моя миссия в Армении, Москва, 2001, с. 200-205, (այսուհետեւ՝ Ստուպիշին Վ.):

կարգի բանակցությունները դատապարտված են փակուղու մեջ հայտնվելու[1]:

Մինչդեռ, ապրիլի 8-ին նմանատիպ բանակցություններ են կայացել Սոչիում՝ ՌԴ նախագահ Բ. Ելցինի նախաձեռնությամբ: Ռեակողմ հանդիպմանը մասնակցել են ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովը, ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանը, Ադրբեջանի պետքարտուղար Փ. Հուսեյնովը: Քննարկման նյութը տարածաշրջանում ստեղծված իրավիճակն էր եւ հայ-ադրբեջանական հակամարտության նոր սաստկացումը: Սակայն հանդիպման ընթացքում որեւէ պաշտոնական փաստաթուղթ չի ստորագրվել:

Իսկ ՌԴ նախագահ Բ. Ելցինը ապրիլի 8-ին ուղերձով դիմեց ՀՀ եւ ԱՀ նախագահներին: Մտահոգություն արտահայտելով վերջին շրջանում հակամարտության սրման առթիվ՝ Բ. Ելցինը պատրաստակամություն հայտնեց երկու հանրապետությունների ղեկավարների համաձայնության դեպքում իրականացնելու իր առաքելությունը[2]:

Այնինչ, Հռոմում ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն, ապրիլի 20-ին ԼՂՀ ժամանեց ԵԱՀԽ դիտորդների՝ 6 հոգուց բաղկացած առաջապահ խումբը, որը գլխավորում էր Ֆինլանդացի գնդապետ Հ. Հապոնենը: Առաջապահների նպատակն էր՝ լուծել դիտորդների առաջիկա ժամանման հետ կապված տեխնիկական հարցերը: Խումբը ԼՂՀ էր մտել ցամաքային ճանապարհով՝ ԱՀ Աղդամի շրջանի տարածքից: Նրանք հանդիպումներ ունեցան ԼՂՀ իշխանությունների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին հանրապետությունում եւ տարածաշրջանում տիրող իրավիճակը, դիտորդների ժամանման հետ առնչվող մի շարք հարցեր:

[1] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 8, կ. 1, թ. 69-70:
[2] «Երկիր», 10.04.1993թ.:

Իսկ ապրիլի 26-ից 28-ը Պրահայում կայացած ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների խորհրդի նստաշրջանի օրակարգում նախատեսված էր ԼՂ հիմնահարցի քննարկումը, ընդ որում՝ հստակ նշված էին ենթահարցերը. Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիի զեկուցումը, դիտորդների առաջապահ խմբի ղեկավար Հապոնենի հաշվետվությունը տարածաշրջան կատարած այցի եւ դիտորդների խմբի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ու նյութական ապահովման մասին, որը նպատակ ուներ ամրագրել մարտի 1-ին Հռոմում Մինսկի խմբի բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունը եւ հաստատել հակամարտության շրջան ուղարկվելիք դիտորդների մանդատը: Սակայն ոչ մի պաշտոնական փաստաթուղթ չընդունվեց: Հանդիպման ընթացքում մասնակից երկրները չկարողացան գալ ընդհանուր համաձայնության, քանի որ Ադրբեջանը այս հանդիպումը եւս փորձեց օգտագործել քարոզչական նպատակով եւ վերստին պահանջեց, որպես նախապայման՝ բանակցությունները սկսելուց առաջ հայկական ուժերը դուրս բերել Քելբաջարի շրջանից: Բանակցային գործընթացը Ադրբեջանի կողմից վիժեցվելու փաստի կապակցությամբ հրապարակվեց Ավագ պաշտոնյաների խորհրդի նախագահի հայտարարությունը, որով մտահոգություն էր արտահայտվում պատերազմական գործողությունների ակտիվացման կապակցությամբ եւ պահանջվում հայկական զինված ուժերի հետքաշումը Քելբաջարի տարածքից: Հայտարարությունում նշված էր նաեւ, որ «բանակցությունների դադարեցման պատասխանատուն է Ադրբեջանի կառավարությունը»[1]:

Այդ առնչությամբ ԼՂՀ ՊՊԿ-ն հանդես եկավ հայտարարությամբ եւ դատապարտեց Ավագ պաշտոնյաների խորհրդի նախագահի միակողմանի դիրքորոշումը հիմնախնդրի խաղաղ կար-

[1] «Երկիր», 30.04.1993թ.:

գավորման գործում՝ անտեսելով Ադրբեջանի կողմից ԼՂՀ տարածքների բռնազավթման փաստը:

Հատկանշական է նաեւ, որ Քելբաջարի գործողության համար բավականին կտրուկ բողոք հայտնվեց Իրանում ՀՀ դեսպանին, որին իրանական իշխանությունները հասկացրին, թե հայկական ուժերի հետագա հարձակողական գործողությունների դեպքում Իրանը վճռական քայլերի կդիմի[1]:

Տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխություններին արձագանքեց նաեւ ՄԱԿ-ը: Ապրիլի 30-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն արտահերթ նիստում ընդունեց ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ 822-րդ բանաձեւը՝ պահանջելով անմիջապես դադարեցնել բոլոր տեսակի թշնամական գործողությունները, տեւական զինադադար հաստատել, ինչպես նաեւ դուրս բերել բոլոր տեսակի զավթիչ ուժերը Քելբաջարից եւ Ադրբեջանի գրավված այլ շրջաններից: Բանաձեւը կոչ էր անում բոլոր կողմերին՝ վերսկսել ԵԱՀԽ Մինսկի խմբի խաղաղ գործընթացի շրջանակներում հակամարտության կարգավորման բանակցությունները եւ ձեռնպահ մնալ խնդրի խաղաղ լուծումը խոչընդոտող ամեն մի քայլից: Բանաձեւը կողմերից պահանջում էր հարգել միջազգային մարդասիրական օրենքներն ու կանոնները, ինչպես նաեւ թույլատրել մարդասիրական օժանդակության անարգել առաքումը հատկապես տուժած շրջաններ՝ թեթեւացնելու համար քաղաքացիական բնակչության տառապանքը: ՄԱԿ-ի ԱԽ-ն դիմում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ խորհրդակցելով ԵԱՀԽ նախագահի եւ Մինսկի խմբի ղեկավարի հետ, գնահատել ստեղծված կացությունը, հատկապես՝ Քելբաջարի շրջանում, եւ զեկույց ներկայացնել ԱԽ[2]:

[1] Բալայան Տ., նշվ.աշխ., էջ 73:
[2] «Երկիր», 01.05.1993թ.:

Հակամարտող կողմերին հաշտեցնելու՝ միջազգային հանրության հաջորդ փորձը ձեռնարկվեց Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի կողմից: Մայիսի 3-ին հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական նախաձեռնությամբ՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Թուրքիան ծրագիր ներկայացրին Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին, ըստ որի՝ մայիսի 9-14-ը հայկական ուժերը պետք է դուրս բերվեին Քելբաջարից, մայիսի 12-ից հրադադար հաստատվեր, մայիսի 17-22-ը ժնեւում պետք է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններ անցկացվեին Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հովանավորությամբ, մայիսի 24-25-ին Հռոմում ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում բանակցություններ վերսկսվեին, եւ մինչեւ հունիսի 1-ը մշակվեր հակամարտության կարգավորման ընդհանուր ծրագիր: Ծրագրի հիմքում դրված էր «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքը, որը բացառում էր հիմնակետերի մեկնաբանման որեւէ հնարավորություն[1]:

Ադրբեջանի իշխանություններն անվերապահորեն ընդունեցին ներկայացված առաջարկությունները, իսկ ՀՀ պաշտոնական շրջանակները դրական գնահատեցին ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձեւը: Մայիսի 10-ին ՀՀ նախագահի մամլո քարտուղար Ա. Աբրահամյանը լրագրողներին տեղեկացրեց, որ այնտեղ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը դիտվում է իբրեւ մեկ «ամբողջական համակարգ եւ Քելբաջարից զորքերի դուրս բերումը դիտվում է հենց այդ համակարգում: Նման մոտեցումը թույլ է տալիս շարունակել ԵԱՀԽ-ի շրջանակներում խորհրդակցություններն ու բանակցությունները»: Անդրադառնալով հակամարտության լուծման եռակողմ (Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա) առաջարկությանը եւ ընդգծելով, որ նման առաջարկությունները, «որոնք նպատակ ունեն ինչ-որ ձեւով նպաստել խաղաղ գործընթացին», ողջունելի են, Ա. Աբրահամյանը

[1] «Երկիր», 13.05.1993թ.:

հերքեց այն մեկնաբանությունները, թե Հայաստանը մերժում է այդ առաջարկությունները: «Մեր վերաբերմունքը ընդհանուր առմամբ դրական է այն կետերում, որոնք առնչվում են Հայաստանին», - ընդգծեց նա՝ միեւնույն ժամանակ նկատելով, որ պահանջվում են բազմաթիվ լրացումներ ու պարզաբանումներ, եւ հույս հայտնեց, թե առաջիկայում ԱՄՆ-ը, Թուրքիան ու Ռուսաստանը նորից կհանդիպեն եւ ավելի կճշգրտեն իրենց սկզբունքները, կընդհանրացնեն կատարյալ ու հավասարակշռված փաստաթղթեր[1]:

Իսկ Արցախում, բնականաբար, հարկադրված էին ավելի իրատես լինել: ԼՂՀ ԳԽ նախագահ Գ. Պետրոսյանի՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալիին հղած ուղերձում նշվեց, որ Ադրբեջանի եւ ԼՂ հանրապետությունների միջեւ վերջին տարիներին տեւող հակամարտությունը, որը հանգեցրել է բազում ողբերգությունների, այդ թվում՝ մարդկային զոհերի եւ ավերածությունների, հասել է մի սահմանի, երբ ցանկացած չմտածված քայլ կամ հայտարարություն կարող են սպառնալիքի տակ դնել մարդկանց անվտանգությունը հսկա մի տարածաշրջանում: ԼՂՀ ղեկավարությունը խաղաղության վերահաստատմամբ շահագրգիռ բոլոր միջազգային կազմակերպություններին եւ պետությունների ղեկավարներին բազմիցս կոչել եւ կոչ է անում ծայրահեղ զգույշ վերաբերվել իրավիճակի զարգացման վրա ազդելու ունակ որոշումների ընդունմանը:

Միաժամանակ հայտնվում էր, որ ԼՂՀ-ում խորապես մտահոգված են մեր այն քաղաքացիների ճակատագրով, ում 1991-1992 թթ. բռնի կերպով արտաքսել են մեր հանրապետության Շահումյանի, Մարտակերտի եւ Հադրութի շրջանների իրենց հարազատ գյուղերից եւ քաղաքներից, բնակավայրեր, որ առ այսօր լրիվ կամ մասնակիորեն բռնազավթված են մնում Ադրբեջանի բանակի կողմից: Բացի այդ, հանրապետության ղեկավարության մտահոգությունն էր հայտնվում ԱԽ-ի 1993թ. ապրիլի 30-ի որոշման առթիվ, «որում, - մասնավորապես ասված էր ուղերձում, - մեր կարծիքով, հաշվի չեն առնվել քաղաքական իրույթները, կոնկրետ՝ անկախ ԼՂՀ-ի գոյությունը եւ մեր հանրապետության հետ կապված մեր շահերը:

Մենք կուզենայինք բոլոր շահագրգիռ երկրներին հավաստիացնել այն բանում, որ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ցանկացած տեղաշարժ ունի ԼՂՀ տարածքում Ադրբեջանի զինված առաջխաղացումը կանխելու կամ չեզոքացնելու նպատակ միայն»[1]:

ՀՀ-ում ԼՂՀ լիազոր ներկայացուցիչ Մ. Սարգսյանը մայիսի 6-ին ՌԴ-ի եւ ԱՄՆ-ի դեսպանություններին հանձնեց պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումը եռակողմ նախաձեռնության վերաբերյալ: Մասնավորապես, կարծիք է հայտնվել, որ Քելբաջարից ԼՂՀ ԻՊՈՒ-ի դուրս բերման մասին խոսք կարող է լինել միայն ԵԱՀԽ խաղաղարար ուժերը տարածաշրջան ուղարկելուց հետո: ԼՂՀ ղեկավարությունը ողջունել է եռակողմ նախաձեռնությունը եւ կրկին փաստել իր պատրաստակամությունը՝ հակամարտությունը կարգավորելու խաղաղ բանակցությունների ճանապարհով[2]:

Մինչդեռ, չնայած միջազգային խաղաղարարական ջանքերին, ռազմաճակատում ադրբեջանական բանակային կազմավորումները շարունակում էին մարտական գործողությունները: Թեեւ լայնածավալ հարձակողական ռազմագործողություններ չէին վարվում, սակայն տեղի ունեցող մարտերը ապացուցում էին, որ դեռ վաղ է խոսել հարցը խաղաղ բանակցային ճանապարհով լուծելու մասին, առավել եւս՝ զիջումային ճանապարհով: Փաստորեն, մի-

[1] Նույն տեղում:

[1] «Արցախ», 08.05.1993թ.:
[2] «Երկիր», 07.05.1993թ.:

ջազգային հանրությունը, ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի վրա ճնշումներ գործադրելով, փորձ էր անում հայկական կողմին միակողմանի զիջումներ պարտադրել. այն է՝ թողնել ԼՂՀ-ի անվտանգության համար վիթխարի նշանակություն ունեցող Քելբաջարը եւ էապես վտանգել մեր ազգային շահերը տարածաշրջանում: Փոխարենը մեզ ոչինչ չէր առաջարկվում, նվազագույնի էին հասցվում ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունները:

Մայիսի 18-ին ՀՀ եւ ԼՂՀ իշխանություններին հանձնվեց ԼՂ հակամարտությանը վերաբերող վերջին նախաձեռնության վերամշակված տարբերակը, որն ընդունվել էր մայիսի 14-15-ին Մոսկվայում ՌԴ նախագահի անձնական ներկայացուցչի, Թուրքիայի, ԱՄՆ-ի հատուկ ներկայացուցիչների հանդիպման ժամանակ: Եռակողմ հանդիպմանը մասնակցեց նաեւ ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի նախագահի ներկայացուցիչը[1]:

Նախաբանում նշվում էր, որ փաստաթուղթը հիմնված է ՌԴ նախագահ Բ. Ելցինի միջնորդական նախաձեռնության եւ Անկարայում իրենց առաջին հանդիպման ժամանակ ԱՀ նախագահ Ա. Էլչիբեյի եւ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի բարի կամքի վրա: Երեք պետությունները ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի նախագահի ներկայացուցչի հետ միասին կոչ են անում հակամարտող բոլոր կողմերին՝ իրենց վերաբերող բոլոր մասերով անհապաղ կատարել ՄԱԿ-ի ԱԽ-ի ապրիլի 30-ի 822/93 որոշումը, որը պարտադիր է բոլորի համար: ՄԱԿ-ի ԱԽ-ի այդ որոշումը կենսագործելու համար որոշվեց առաջարկել ճշտված «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»:

Այդ ժամանակացույցով նախատեսվում էր. «Մայիսի 26-ին կողմերը՝ յուրաքանչյուրը առանձին, ստորագրում են սույն ժամանակացույցը եւ տեղական ժամանակով մինչեւ կեսօր վերադարձնում են այն նրանց, ովքեր ներկայացրել են տվյալ առաջարկությունը: Մայիսի 27-ին՝ հայտարարություն «Մայիսի 28-ից սկսած՝ Քելբաջարից լիովին հեռանալու մտադրության» մասին: Մայիսի 28-ին՝ հայտարարություն այն մասին, որ «զսպվածություն կցուցաբերվի անվտանգությունն ապահովող անձնակազմը Քելբաջարի շրջան վերադառնալիս»: Մայիսի 29-ին տեղական ժամանակով 00.01-ին սկսվում է Քելբաջարից հեռացումը: Տեղական ժամանակով ժամը 00.01-ին իրականացվում է նաեւ հակամարտության բոլոր գոտիներում ապասաստկացում (հրաժարում հարձակողական գործողություններից, ծանր զինատեսակների՝ ռազմական օդուժը ներառյալ, գործածությունից): Հունիսի 1-ին՝ տեղական ժամանակով 00.01-ից 60 օրով դադարեցվում են մարտական գործողությունները հակամարտության բոլոր գոտիներում: Հունիսի 3-ին, մինչեւ տեղական ժամանակով 23.59-ը, ավարտվում է Քելբաջարից հեռացումը, ինչը հաստատում են հեղինակավոր միջազգային ներկայացուցիչները: Հունիսի 6-ին ժնեւում վերսկսվում են ոչ պաշտոնական խորհրդակցությունները («5+1») կրակի վերջնական դադարեցման օրացույցի աշխատանքներն ավարտելու, դիտորդների տեղակայման, կապի ու տրանսպորտային հաղորդակցության նորմալ գործունեության արգելքների վերացման, այդ միջոցառումներն իրականացնելու նպատակով Մինսկի խորհրդաժողովը ոչ ուշ, քան 1993թ. հուլիսի 21-ին բացելու համար: Հունիսի 10-ին՝ ոչ պաշտոնական խորհրդակցության ավարտ: Հունիսի 14-15-ը՝ Մինսկի խմբի հանդիպումը Հռոմում՝ ոչ պաշտոնական խորհրդակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունները հաստատելու համար»[1]:

Վերջնագրային կերպով հայկական կողմից միակողմանի զիջումներ պահանջող «3+1» նախաձեռնությունը ՀՀ իշխանութ-

[1] «Երկիր», 19.05.1993թ.:

[1] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 677-678:

յունների կողմից մայիսի 26-ին ընդունվեց: ՀՀ նախագահի մայիսի 26-ի հայտարարության մեջ ասվում էր. «ՀՀ-ն, տալով իր համաձայնությունը «3+1» նախաձեռնության մայիսի 18-ի տարբերակին եւ պարտավորվելով լիովին իրագործել իրեն վերաբերվող կետերը, ելնում է այն համոզմունքից, որ նշված նախաձեռնությունը ընձեռում է տարածաշրջանում խաղաղության պայմաններ ստեղծելու առաջին լուրջ հնարավորությունը, որն իր հերթին հնարավոր է դարձնում բանակցությունների միջոցով ԼՂ-ի հարցի խաղաղ կարգավորումը:

Հայաստանի այս դիրքորոշումը նկատի է առնում ՄԱԿ-ի ԱԽ-ի 822-րդ բանաձեւը, որի անհապաղ ամբողջական կիրառումը պարտադիր է բոլոր պետությունների ու կողմերի համար, ինչպես նաեւ պատերազմի ծավալումից ու խորացումից խուսափելու անհրաժեշտությունը տարածաշրջանի երկրների անվտանգության տեսակետից...»[1]:

Մայիսի 26-ին ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Մ. Սարգսյանը ՀՀ-ում ՌԴ-ի եւ ԱՄՆ-ի դեսպաններին հանձնեց, ինչպես նաեւ ԵԱՀԽ գործող նախագահ տիկին Մ. Ուգլասին ուղարկեց ԼՂՀ իշխանությունների պաշտոնական պատասխանը, որը ստորագրել էին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը եւ ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը: Ուղերձում մասնավորապես ասված էր. «Մեր ժողովրդի մտահոգությանը բացատրություն տվող հիմնական եւ վճռորոշ գործոնը փաստաթղթում մեր հանրապետության բնակչության անվտանգության պատշաճ երաշխիքների, ինչպես նաեւ կողմերի պարտականությունների կատարման եւ դրանց չկատարման համար պատասխանատվություն կրելու երաշխիքների բացակայությունն է: Այդ առնչությամբ կարեւոր է նշել հակամարտության կողմերի միջեւ միջազգային դիտորդների ընդունման եւ ԵԱՀԽ-ի համապատասխան հավանության վերաբերյալ նախնական համաձայնության բացակայությունը...

...Մենք հաստատակամորեն հայտարարում ենք ՄԱԿ-ի ԱԽ-ի թիվ 822 բանաձեւը լիովին եւ անհապաղ կատարելու մեր պատրաստակամությունը: Դրա ամբողջական իրականացմանը ձեռնամուխ լինելու հնարավորությունը կարող է երեւան գալ իսկույն եւեթ, հենց որ հակամարտող կողմը որոշակի գործողություններով հաստատի տվյալ բանաձեւը կատարելու պատրաստակամությունը: Բնականաբար, խոսք չի կարող լինել բանաձեւի միայն այն տարրերի ընտրովի կատարման մասին, որով շահագրգռված է Ադրբեջանը՝ անտեսելով կամ հետաձգելով դրա մյուս կետերի կատարումը: Վստահ ենք, որ միջազգային այդ մարմնի բանաձեւը բոլորի համար պարտադիր բնույթ է կրում...»:

Շարունակելով երկու փաստաթղթերի միջեւ տարբերությունների դիտարկումը՝ ԼՂՀ ԳԽ եւ ՊՊԿ նախագահները ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ ԱԽ-ն պահանջում է կայուն հրադադար հաստատելու նպատակով դադարեցնել ռազմական բոլոր գործողություններն ու թշնամական ակտերը, այն դեպքում, երբ նախաձեռնության մեջ խոսքը միայն 60 օր ժամկետով ռազմական գործողությունները դադարեցնելու մասին է: Ընդսմին, դա չի շոշափում այն գործողությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են ԼՂՀ-ի, Հայաստանի եւ Նախիջեւանի տրանսպորտային եւ էներգետիկական շրջափակմանը:

Այն ժամանակ, երբ ԱԽ-ն հակամարտող կողմերին կոչ է անում անհապաղ վերսկսել բանակցային գործընթացը ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում, նախաձեռնությունն առաջարկում է վերսկսել ոչ պաշտոնական խորհրդակցությունները ժնեւում «5+1» ձեւաչափով, այսինքն՝ Թուրքիայի չհակակշռված մասնակցությամբ, որը, փաստորեն, Ադրբեջանի դաշնակիցն է: Համոզ-

[1] «Երկիր», 27.05.1993թ.:

մունք հայտնելով, որ առանց ԼՂ իշխանությունների լիիրավ մասնակցության՝ նմանօրինակ խորհրդակցությունները չեն կարող նպաստել ԼՂՀ բնակչության կյանքի եւ անվտանգության հարցի լուծմանը եւ, հանդես գալով հօգուտ հակամարտող բոլոր երկրների կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ի թիվ 822 բանաձեւի անհապաղ կատարման, ԼՂՀ ղեկավարները ընդգծում են, որ ռազմական գործողությունների եւ թշնամական ակտերի դադարեցումը պետք է ձեւակերպվի լիակատար ու իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթով: Ըստ այդ պայմանագրի՝ իրենց պարտավորությունների կատարման համար կողմերի պատասխանատվությունը պետք է ակներեւ լինի[1]:

Հունիսի 3-ին, առանց ՀՀ-ի, ԼՂՀ-ի եւ ԱՀ-ի մասնակցության, Հռոմում կայացած ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդակցության ժամանակ առաջ քաշվեց մի նոր, այսպես կոչված՝ «9+1» նախաձեռնությունը: Հայաստանին, ԼՂՀ-ին, Ադրբեջանին ներկայացվեց երկու փաստաթուղթ՝ մեկը Մինսկի խմբին պատկանող երկրների հանձնարարությամբ ԼՂ հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիի «Նամակն» էր, մյուսը՝ այդ «նամակին կից» գրությունը, որն այլ կերպ կոչվում է «ԱԽ-ի 822-րդ բանաձեւի իրագործման անհապաղ միջոցառումների ժամանակացույց»: Ըստ նախաձեռնության հեղինակների՝ երկու փաստաթուղթն էլ «ունեն միեւնույն արժեքը»: Մ. Ռաֆայելին խնդրում էր հաստատել այս առաջարկության ընդունումը՝ ստորագրելով վերոհիշյալ նամակն ու ժամանակացույցը, եւ դրանք իրեն վերադարձնել մինչեւ 1993 թ. հունիսի 11-ի ժամը 12.00-ը: Այն հիմնականում վերաբերում էր ռազմական գործողությունների դադարեցմանը, որը պետք է սկսվեր հունիսի 18-ից, ինչպես նաեւ Քելբաջարից եւ Ադրբեջանի

[1] «Արցախ», 01.06.1993թ.:

վերջերս «բռնազավթված» այլ շրջաններից հայկական ուժերի դուրս բերման ընթացքին ու հսկողության սահմանմանը[1]:

Այժմ՝ տարիների հեռվից, դժվար չէ օբյեկտիվ գնահատական տալ այդ փաստաթղթին, քանի որ չենք գտնվում այն ժամանակվա իրադրության պայմաններում եւ, մանավանդ որ, գիտենք նրա ունեցած հետեւանքները: Թերեւս ԼՂՀ օրենսդիր մարմնի ղեկավարությունը, գիտակցելով, թե դա ինչ է նշանակում, հրաժարվեց այդ փաստաթուղթը ստորագրելուց: Եվ հանրապետության օրենսդիր մարմնի ու նրա ղեկավարության վրա գործադրվեցին ե՛ւ «ներքին», ե՛ւ «արտաքին» ճնշումներ՝ ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 9-ի կեսգիշերին կարճատեւ աշխատանքային այցով Երեւան ժամանեց ՌԴ մի շարք կարեւոր գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնական անձանցից բաղկացած պատվիրակությունը: ՌԴ ԱԳ նախարար Ա. Կոզիրեւի եւ ՌԴ անվտանգության նախարար Վ. Բարաննիկովի գլխավորած այդ պատվիրակության կազմում ընդգրկված էին ՌԴ պաշտպանության առաջին փոխնախարար Բ. Գրոմովը, ԱԳ փոխնախարար Բ. Պաստուխովը, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գծով ՌԴ նախագահի անձնական ներկայացուցիչ Վ. Կազիմիրովը եւ ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատար Վ. Շլյախտինը:

Կառավարության ընդունելությունների տանը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի, ԱԳ փոխնախարար Ժ. Լիպարիտյանի եւ արտակարգ հանձնարարությունների գծով դեսպան Դ. Շահնազարյանի 15 րոպեանոց հանդիպումը Ա. Կոզիրեւի, Վ. Բարաննիկովի եւ Վ. Կազիմիրովի հետ: Դրան անմիջապես հաջորդել է ՌԴ նախարարների եւ ԼՂ-ի վերաբերյալ բանակցություններում ՌԴ ներկայացուցչի՝ շուրջ

[1] «Հայաստանի Հանրապետություն», 09.06.1993թ.:

1 ժամ 40 րոպե տեւած հանդիպումը ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի ու ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանի հետ[1]: Հանդիպման նպատակն էր ԼՂՀ իշխանություններին համոզել դրական պատասխան տալ Մ. Ռաֆայելիին[2]:

Հանդիպման փաստը հետաքրքիր է նաեւ նրանով, որ Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցիչներն այդպիսի տեւական զրույցի էին նստել մի պետության ներկայացուցիչների հետ, որն իրենց իսկ կողմից ճանաչված չէր: Ի՞նչն էր դրդում ՌԴ-ին՝ գնալ այս քայլին: Գո՞ւցե Ադրբեջանի ներքին կացությունն ու այստեղ կատարվող իշխանափոխությո՞ւնը, որը ձեռնտու չէր Ռուսաստանին: Եվ ռուսաստանյան դիվանագիտությունը, գտնվելով անորոշության մեջ, ճիգեր էր գործադրում փրկել Ա.Էլչիբեյի հեղինակությունը:

Եթե փորձենք Արցախի «դրական» պատասխանից հետո մոդելավորել իրադրությունը, ապա այն կարող էր զարգանալ հետեւյալ կերպ. Քելբաջարի դատարկումով Ադրբեջանի կառավարությունը լուծում էր երկու հարց. խուսափում էր ռազմական ու բարոյական պարտությունից ու լրացուցիչ կռվան էր ստանում հեղինակությունը բարձրացնելու եւ իշխանությունը պահելու համար:

Իսկ վերջին բանակցային գործընթացների դրական հատկանիշներից մեկն այն էր, որ Ստեփանակերտն իրականում ընդունվում էր որպես հակամարտող կողմ, նրա մերժումներն ու ձգձգումները չէին անտեսվում, եւ միջազգային հասարակությունն արդեն վարժվել էր Արցախից պատասխան ակնկալելուն:

Իրերի տրամաբանությունից ելնելով՝ Արցախի իշխանություններին մնում էր ձգձգել բանակցությունների գործընթացը, որպեսզի Ադրբեջանում սկսված ներքաղաքական ճգնաժամն ավելի

[1] «Երկիր», 11.06.1993թ.:
[2] Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 218:

խորանար եւ Քելբաջարի հարցը, գոնե առժամանակ, շղարշվեր նոր իրադարձություններով ու կորցներ իր սրությունը: Այս տարբերակի համար բավարար հիմքեր կային՝ ելնելով նրանից, որ որպես պատճառ կարելի էր առաջ քաշել նաեւ Ադրբեջանի ներքին իրադրության անկայունությունը, որը կարող էր հանգեցնել քաղաքացիական պատերազմի ու կասկածի տակ էր դնում Ադրբեջանի բանակի կառավարելիությունն ու ադրբեջանական կառավարության տված երաշխիքների հուսալիությունը, հատկապես, որ խռովությունն ընդգրկած շրջանների մեծ մասը սահմանակից էր Քելբաջարի շրջանին[1]:

Հունիսի 11-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնակար Գ. Պետրոսյանը նամակ հղեց Մ. Ռաֆայելիին: Նամակում հայտնվում էր. «Ձեր նամակին կից «ՄԱԿ-ի ԱԽ-ի 822/93 բանաձեւի իրականացման ժամանակացույցի» քննարկումը ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստում լուրջ տարաձայնություններ առաջացրեց ԼՂՀ ղեկավարության եւ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջեւ, ինչը, փաստորեն, վերաճեց ներքաղաքական ճգնաժամի: Իրավիճակը կարող է դառնալ անվերահսկելի:

Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ՝ առճակատումը կանխելու եւ բացատրելու քննարկման ներկայացված փաստաթղթերի դրական կողմերը: Առարկությունները հիմնված են ԼՂՀ ժողովրդի հերթական անգամ խաբված լինելու մտավախության վրա:

Անհրաժեշտ են ժամանակ եւ ջանքեր՝ համոզելու մարդկանց, որոնց հոգեբանությունը ձեւավորվել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում, որ նպատակահարմար եւ խելամիտ են

[1] Հակոբյան Տ., Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խաղաղարար միջնորդական առաքելությունների ծախողումները եւ պետաշինարարական գործընթացները ԼՂՀ-ում (1993թ. ապրիլ-հունիս ամիսներին), ԱրՊՀ, «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2006, թիվ 2(13), էջ 118:

կրակի դադարեցմանն ուղղված առաջարկները: Քանի որ վերջնական որոշում ընդունված չէ, Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ քննարկելու անհրաժեշտություն է ծագել :

Մենք ապավինում ենք Ձեր եւ ինքնակի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ներքաղաքական իրավիճակի ողջ բարդության ընկալմանը եւ դրա կայունության մեջ Ձեր շահագրգռվածությանը:

Գտնում եմ, որ մոտ օրերս հնարավոր է ԼՂՀ վերջնական դիրքորոշման որոշակիացում»[1]:

Կարելի է ենթադրել, որ Ստեփանակերտը, օգտվելով «ժամանակացույցի» ստորագրման ժամկետի ընձեռած ժամանակային խուսանավումների հնարավորությունից, սպասում էր Բաքվի պատասխանին: Ադրբեջանի մերժողական պատասխանի դեպքում հնարավոր էր նախաձեռնությանը դրական պատասխան տալ՝ հաշվի չառնելով դրա վտանգավորությունը:

Սակայն Երեւանում այս պատասխանը բացահայտ դժգոհություն առաջացրեց, բայց ՀՀ ԱԳ նախարարի առաջին տեղակալ Ժ. Լիպարիտյանը Մինսկի խմբի իտալացի համանախագահ Մարիո դե Սիկայի, իսկ հետո՝ Մ. Ռաֆայելիի հետ պայմանավորվածություն ձեռք բերեց ղարաբաղյան պատասխանի հետաձգման վերաբերյալ[2]:

Ակնհայտ է, որ ՀՀ իշխանությունները արտաքին ճնշումների ազդեցության տակ ամեն գնով փորձում էին ստանալ ԼՂՀ-ի դրական պատասխանը, եւ ահա Երեւանը հանդես եկավ անսպասելի պահանջով, ըստ որի՝ ԼՂՀ ղեկավարները ԳԽ նախագահության բոլոր անդամների հետ պետք է ժամանեին Գորիս՝ հանդիպելու ՀՀ ղեկավարության հետ: 1993 թ. հունիսի 12-ին Գորիս ժամանեցին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով անձնական ներկայացուցիչ Դ. Շահնազարյանը, ԼՂՀ ԳԽ եւ ՊՊԿ անդամները[1]: Հանդիպման հիմնական նպատակն էր՝ ամեն գնով համոզել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներին, որ նրանք ստորագրեն նշված փաստաթուղթը:

Սակայն ՀՀ նախագահի հույսերն ապարդյուն անցան. Գորիսում նա ԼՂՀ ղեկավարներից դրական պատասխան չստացավ: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատարը բանավոր համաձայնեց ստորագրել փաստաթուղթը, բայց վերջում կտրուկ հրաժարվեց եւ մեկնեց Ստեփանակերտ:

Իսկ Ժ. Լիպարիտյանը հունիսի 12-ի երեկոյան տեղեկացնում է ՌԴ դեսպան Վ. Ստուպիշինին, որ ղարաբաղյան երկու ղեկավարներն էլ համաձայնել են ստորագրել Մ. Ռաֆայելիի ժամանակացույցը, բայց որոշել են այդ անել Ստեփանակերտում[2]:

Մինչդեռ Ադրբեջանում իրադարձությունները սրընթաց էին զարգանում: Հունիսի 4-ին Գանձակում սկիզբ էին առել հակակառավարական ելույթներ՝ գնդապետ Ս. Հուսեյնովի գլխավորությամբ: Ապստամբական շարժման արդյունքում Ադրբեջանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, հունիսի 15-ին խորհրդարանի նախագահ ընտրվեց Հ. Ալիեւը, իսկ հունիսի 30-ին վարչապետությունն ստանձնեց 34-ամյա խռովարար գնդապետ Ս. Հուսեյնովը[3]:

Օգտվելով Ադրբեջանում ստեղծված կացությունից՝ ԼՂՀԻՊՈՒ ստորաբաժանումները հունիսի 12-ին մարտական գործողություններ սկսեցին միաժամանակ Ասկերանի եւ Մարտունու շրջանների ուղղություններում: Մարտունու ՊՇ մարտիկները վե-

[1] «Երկիր», 12.06.1993թ.:
[2] Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:

[1] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 202:
[2] Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:
[3] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 102:

բահսկողության տակ առան Աղդամի շրջանի Մարզիլլի, Գիյամադդինլի, Յուսուֆջանլու գյուղերը: Մարտերը շարունակվեցին Նովրուզլու գյուղի մատույցներում, որոնց ընթացքում զոհվեց Մարտունու ՊՇ հրամանատար Մ. Մելքոնյանը (Ավո): Հայ մարտիկները, կորցնելով իրենց հրամանատարին, նահանջեցին ելման դիրքերը, իսկ Ասկերանի ՊՇ մարտիկները երեկոյան դիրքեր զբաղեցրին Աղդամի շրջանի Ջինլի գյուղի մոտակայքում: Մի քանի օր անց ԻՊՈՒ մարտիկները ճնշեցին Մեծ Ջինլի, Ալիմադաթլի, Մոլլալար եւ Քյուրդլար գյուղերի թշնամական կրակակետերը[1]: Հունիսի երկրորդ կեսին համառ մարտերից հետո հայկական զորամասերը դուրս եկան Աղդամ-Մարտակերտ ճանապարհի բնագիծը: Մարտական գործողություններ ծավալվեցին նաեւ Մարտունու, Կուբաթլուի եւ Ջաբրայիլի շրջաններում: Այստեղ ծգվեց հակառակորդի ուժերի զգալի մասը, եւ դրանով բարենպաստ պայմաններ ստեղծվեցին գլխավոր խնդիրն ավարտելու՝ Մարտակերտը վերահսկող հակառակորդի ջախջախման, քաղաքին տիրելու եւ գլխավոր ուժերը Խրամորթ-Բոյահմեդլի-Փափռավենդ-Մարտակերտ-Մատաղիս բնագիծը դուրս բերելու համար[2]:

Գորիսում ունեցած անհաջող հանդիպումից հետո՝ հունիսի 14-ին, ՀՀ նախագահը հանդես եկավ ԼՂՀ իշխանություններին քննադատող հետեւյալ հայտարարությամբ. «ՀՀ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում ԼՂ իշխանությունների դրսեւորած անկարողության, ինչպես նաեւ զինադադար հաստատելու բացառիկ պատեհությունը չիրագործելու համար:

ՀՀ-ն վստահ է սակայն, որ ԼՂ իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ

[1] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 111:
[2] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 402-403:

չառնչվող նկատառումներից՝ դրսեւորելով իրենց իբրեւ իսկական ղեկավարներ եւ, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ ԼՂ ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջեւ իրենց պատասխանատվությունը»[1]:

Հունիսի 14-ին՝ կեսօրից հետո, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ուղղաթիռով հանկարծակի ժամանեց Ստեփանակերտ: Դա նրա առաջին այցն էր ԼՂՀ: Նախագահը պահանջեց շտապ հրավիրել ԳԽ նախագահության նիստ[2]՝ նպատակ ունենալով լուծել «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույցի» ստորագրման հարցը:

Նա իր հետ բերել էր նաեւ իր համար մի կարեւոր գաղտնի քաղաքական փաստաթղթի նախագիծ, որը կոչվում էր «Պայմանագիր ՀՀ եւ ԼՂՀ միջեւ»: Նշենք, որ այն գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Այդ պայմանագրի նախագիծը կազմվել էր ՀՀ նախագահի կողմից՝ ուղղաթիռում Ստեփանակետ ուղեւորվելու ճանապարհին: Այն պետք է ստորագրեին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը եւ ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը, որը կողմնակից էր փաստաթղթի ստորագրմանը: Ինչ վերաբերում է բանակի հրամանատարությանը, ապա վերջինս հայտարարել էր, որ կընդունի իշխանության ցանկացած որոշում[3]:

Նշենք, որ ՀՀ նախագահը «ԼՂՀ»-ի փոխարեն պայմանագրի նախագծում նշել էր «ԼՂ», սակայն ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ. Հակոբյանի միջամտությամբ այն վերափոխվեց «ԼՂՀ»-ի, ինչպես նաեւ փոփոխվեցին պայմանագրի որոշ դրույթներ:

[1] «Հայաստանի Հանրապետություն», 15.06.1993թ.:
[2] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 203:
[3] «Երկիր», 15.06.1993թ.:

Պայմանագրում մասնավորապես նշված էր որ, ԼՂՀ-ն, վստահելով միջազգային հանրության, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ մասնավորապես ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի երաշխիքներին, համաձայնում է ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի խաղաղարար նախաձեռնությանը: Պարտավորվում է ճշգրտորեն կատարել խաղաղարար ծրագրի՝ իրեն վերաբերող բոլոր պահանջները եւ իր կողմից թույլ չտալ որեւէ խախտում, պարտավորվում է պատժել ԼՂ իշխանությունների կողմից ծրագրի կատարմանն ուղղված որոշումներն ու հրամանները խախտողներին:

ՀՀ-ն պարտավորվում է. ստանձնել խաղաղարար ծրագրի կատարման եւ ԼՂ բնակչության անվտանգության երաշխավորի դեր, ԼՂ բնակչության ֆիզիկական գոյության բռնի տեղահանության վտանգի դեպքում գործի դնել իր բոլոր, այդ թվում՝ անմիջական ռազմական միջամտության հնարավորությունները, հետագա բանակցություններում բացառել Լաչինը Ադրբեջանին զիջելու հնարավորությունը, ինչպես նաեւ բացառել ԼՂ զինված ուժերի ապառազմականացման եւ զինաթափման հնարավորությունը, բանակցություններում հետեւողականորեն եւ վճռականությամբ պայքարել՝ ԼՂ մասնակցության ընդունելի իրավական կարգավիճակ ձեռք բերելու համար[1]:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊՊԿ-ի համատեղ նիստը: Նախկին ԼՂՀ ԳԽ մամլո քարտուղար Գ. Բաղդասարյանի եւ ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ անդամների վկայությունների համաձայն, ՀՀ նախագահը փորձել է համոզել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներին, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրս բերումը Ռուսաստանի դիվանագիտական ճնշման հետեւանք է, եւ այն չիրականացնելու դեպքում Հայաստանը կկորցնի Ռուսաստանին՝ որպես դաշնակից, ինչը կարող է ճակատագրական լինել ե՛ւ Ղարաբաղի, ե՛ւ Հայաստանի համար: ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են նաեւ այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության եւ բանավեճերի ընդունված սահմաններից[1]: Տարօրինակ էր ՀՀ-ի ՀՀՇ-ական իշխանությունների պահվածքը, որոնք փաստորեն փորձում էին Քելբաջարի հանձնման պատասխանատվությունը ամբողջովին գցել Ղարաբաղի իշխանությունների վրա: Ինչպես վկայում է ԼՂՀ նախկին ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, ՀՀ իշխանությունները որոշել էին հետ քաշվել Քելբաջարից եւ ազատագրված տարածքն հանձնելու պատասխանատվությունը դնել ԼՂՀ ղեկավարության վրա[2]:

Նիստի ժամանակ արձանագրվեցին հարցի վերջնական քննարկման հետեւյալ արդյունքները. ԼՂՀ ԳԽ նախագահության 5 անդամներ, որոնցից 4-ը ՀՅԴ անդամներ էին, դեմ քվեարկեցին նշված փաստաթղթի ընդունմանը, իսկ նախագահության կազմի մյուս մասը, հավատալով ՀՀ նախագահի խոստումներին, կողմ քվեարկեցին: Այդ տհաճ ներկայացումն ունեցավ հետեւյալ վախճանը. չդիմանալով Լ. Տեր-Պետրոսյանի ճնշումներին՝ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը հրաժարվում է ստորագրել փաստաթուղթը եւ հրաժարական տալիս: Նախագահությունն ընդունում է նրա հրաժարականը, եւ ըստ «ԼՂՀ ԳԽ-ի մասին» օրենքի՝ ԳԽ նախագահի պարտականությունները մինչեւ ԳԽ նստաշրջանը դրվում են նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար Կ. Բաբուրյանի վրա[3]:

---

[1] ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ.Հակոբյանի անձնական արխիվ:

[1] «Երկիր», 15.06.1993թ.:
[2] ԼՂՀ նախկին առաջին գումարման ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հետ հեղինակի զրույցի գրառում, 17.06.2006:
[3] «Արցախ», 17.06.1993թ.:

ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատարը ստորագրեց «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույցը»: Այնուհետեւ այդ փաստաթղթին կից նամակով դիմեց ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելիին, որում ասվում էր. «Նախ եւ առաջ կցանկանայի մեկ անգամ եւս հավաստել ԼՂՀ ղեկավարության խաղաղության ձգտումը եւ հավատարմությունը միջազգային ընկերակցության խաղաղարար նախաձեռնությանը: Հաշվի առնելով 9 երկրների նախաձեռնության առնչությամբ ԼՂՀ-ում սրված իրավիճակը, ինչպես նաեւ դրանով թելադրված իշխանության փոփոխումը հանրապետությունում, որի հետեւանքով մի քանի ստորաբաժանումներ դուրս են եկել վերահսկողությունից, առաջարկում ենք միջոցառումների ներկայացված ժամանակացույցի ժամկետը երկարաձգել մեկ ամսով: Այդ երկարաձգումը մեզ հնարավորություն կտա կայունացնել իրավիճակը եւ ապահովել ստանձնած պարտավորությունների կատարումը: Դրա հետ մեկտեղ, մտահոգության տեղիք է տալիս խիստ պայթյունավտանգ իրադրությունը, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների: Նկատի առնելով, որ ԼՂՀ-ի հարակից՝ Ադրբեջանի շրջանները վերահսկվում են զինված ընդդիմության կողմից, որը մարտական գործողություններ է վարում կառավարական զորքերի դեմ, խնդրում եմ ԵԱՀԽ-ի հավաստումը, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստ է եւ ի զորու է ապահովել Մինսկի 9 երկրների նախաձեռնության իրականացման ուղղությամբ իր ստանձնած պարտավորությունների կատարումը: Հուսով եմ, որ համատեղ ջանքերով մենք կհասնենք երկար սպասված խաղաղությանը»[1]:

Այսպիսով՝ երկարատեւ պայքարից հետո, օգտագործելով հարմար պահը եւ լծակները, ՀՀ նախագահը կարողացավ ԼՂՀ-ում վերջնականապես կատարել իշխանափոխություն: ՀՀ նախագահը

[1] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 694:

քաջ գիտակցում էր, որ ստիպողական եւ այլ ձեւերով չէր կարող համոզել ԼՂՀ իշխանություններին՝ ստորագրել նշված փաստաթուղթը: Նա գիտեր նաեւ, որ փաստաթղթին դեմ էր ՀՅԴ-ն, որը ներքին կարգով կոչ էր արել նախագահության անդամներին՝ ամեն գնով բացասական վերաբերմունք ցույց տալ այդ փաստաթղթին: Այդուհանդերձ, ժամանելով Արցախ, ՀՀ նախագահը կարողացավ հասնել իր նպատակին:

Հետագայում, ԳԽ նոր ընտրություններից հետո, 1995թ. հունիսի վերջին եւ հուլիսի սկզբին ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ «անհնազանդ» անդամներ Լ.Տեր-Պետրոսյանի ու նոր իշխանականների հրամանով ձերբակալվեցին[1]: Տարբեր մեղադրանքներով ձերբակալվեցին ԼՂՀ ԳԽ նախագահի նախկին պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանը, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը: Սակայն վերջիններս, անցնելով խոշտանգումների ու ծաղրանքի միջով, հանցատարրերի բացակայության պատճառով ազատ արձակվեցին: Իսկ մինչ այդ՝ 1994թ. դեկտեմբերին, ձերբակալվել էր ԼՂՀ ԳԽ մամլո քարտուղար Գ. Բաղդասարյանը, որը նույնպես անցնելով իր բախտակիցների գողգոթայով՝ ազատ արձակվեց[2]:

Ստեփանակերտ կատարած ուղեւորության արդյունքներից գոհացած՝ Լ. Տեր-Պետրոսյանը Երեւան վերադառնալուց հետո անմիջապես շնորհավորական հեռագիր ուղարկեց Կ. Բաբուրյանին, որում ասված էր. «...ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնում Ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը, ինչպես եւ Արցախի ժողովրդի ճակատագրական

[1] "Экспресс-хроника", 22.09.95г.
[2] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 12, կ.1, թ. 45-46:

պահին պատասխանատվությունը իր վրա վերցնելու անձնական համարձակությունը... »[1]:

Հարկ է նկատել, որ ՀՀ նախագահը նման հեռագիր երբեք չի հղել ԼՂՀ ԳԽ նախկին նախագահ Ա. Մկրտչյանին կամ նրանից հետո այդ պաշտոնն ստանձնած Գ. Պետրոսյանին:

Այդ հեռագրին հաջորդեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանին պաշտոնական այցով Հայաստան ժամանելու հրավերը[2]: Երկօրյա այցի ընթացքում Կ. Բաբուրյանը հանդիպումներ ունեցավ ՀՀ փոխնախագահի, ԳԽ նախագահի, վարչապետի, արտգործնախարարի եւ տեղակալի, ինչպես նաեւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի հետ, իսկ հունիսի 23-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատարի եւ ՀՀ նախագահի հանդիպումը[3]: Հայաստանում Կ. Բաբուրյանն արժանացավ ջերմ ընդունելության, եւ, այդպիսով, հիմք դրվեց ՀՀ եւ ԼՂՀ իշխանությունների միջեւ որակական նոր հարաբերությունների [4]:

Ադրբեջանում շարունակվող եւ հարաճուն կերպով ահագնացող ներքին անկայունության հետ կապված՝ 1993թ. հունիսի 17-ին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը նամակ հղեց Մ. Ռաֆայելիին: «Ադրբեջանում ավելի ու ավելի խորացող առճակատումը, մարտերով ընդդիմության զինված խմբերի առաջխաղացումը դեպի Բաքու, կառավարական զորքերի կողմից Ադրբեջանի զգալի տարածքի, այդ թվում եւ ԼՂՀ-ին սահմանակից շրջանների նկատմամբ վերահսկողության կորուստը լուրջ մտահոգության տեղիք են տալիս, - ասվում էր ուղերձում: - Վերը շարադրվածի առնչությամբ համառորեն խնդրում եմ ԵԱՀԽ-ի հավաստումը, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստ է եւ ի զորու է կատարել Ձեր փաստաթղթերով առաջարկված միջոցառումների իրականացման ուղղությամբ ստանձնած իր պարտավորությունները:

ԵԱՀԽ-ի՝ հեղինակավոր այդ կազմակերպության հավաստումը մեզ կօգներ կայունացնել իրադրությունը ԼՂՀ-ում եւ հաղթահարել ստեղծված պայմաններում բնական անվստահությունը Ադրբեջանի իշխանությունների՝ իրական գործողություններով չամրապնդված հավաստիացումներին: Առաջվա պես անհրաժեշտ եմ համարում առնվազն մեկ ամսով երկարաձգել նախատեսված միջոցառումների կատարման «ժամանակացույցը»: Առավել սեղմ ժամկետն իրական չէ»[1] :

Այդ նամակին հետեւեց Կ. Բաբուրյանի՝ հունիսի 18-ին տարածաշրջանում իրադրության լարվածության առնչությամբ Մ. Ռաֆայելիին հղած նոր նամակը: Նրանում ընդգծվում էր, որ միայն ադրբեջանական բանակի կողմից ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումը կարող է փրկել խաղաղարար գործը, որի սկիզբը դրվեց մեծագույն դժվարությամբ: Ռազմական դիմակայության շարունակումը կհանգեցնի սոսկ կողմերի միջեւ անվստահության աճին: Իրադարձությունների նման զարգացման դեպքում ԼՂՀ-ն հարկադրված կլինի իրենից հանել խաղաղարար գործի, կոնկրետ՝ ԵԱՀԽ 9 երկրների վերջին նախաձեռնության ձախողման համար պատասխանատվությունը: ԼՂՀ-ն հայտարարում է, որ հետեւանքների ամբողջ պատասխանատվությունը լիովին ընկնում է Ադրբեջանի վրա, անկախ այդ հանրապետության ղեկավարության պաշտոնական արձագանքներից[2]:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 18.06.1993թ.:
[2] Գազանճեան Կ., Հայաստանի Հանրապետութեան առաջին երկու տարիները, Պէյրութ-Լիբանան, 1997, 532 էջ:
[3] «Երկիր», 24.06.1993թ.:
[4] «Երկիր», 26.06.1993թ.:

[1] «Երկիր», 18.06.1993թ.:
[2] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 701:

Իրոք, հուլիսի առաջին տասնօրյակում ադրբեջանական բանակը խոշոր հարձակում էր սկսել ռազմաճակատի՝ միաժամանակ երեք հատվածներում՝ Ասկերանի, Հադրութի եւ Մարտակերտի: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ այդ բոլոր ուղղություններում էլ հակառակորդը մարտադաշտ էր նետել ե՛ւ օդուժը, ե՛ւ մեծաքանակ զրահատեխնիկա, նա հետ շպրտվեց դեպի ելման դիրքեր, եւ ԻՊ ուժերի վերահսկողության տակ անցավ Աղդամի շրջանի Շելլի գյուղի մոտակա ռազմավարական կարեւոր բարձունքը:

Այդ առչությամբ, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը[1] եւ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը[2] հանդես եկան հայտարարություններով՝ Ադրբեջանին մեղադրելով վերջին ռազմագործողությունների ծավալման համար:

Սակայն դրանով պատերազմական գործողությունները չդադարեցին: Շարունակելով զարգացնել հակառակորդից խլված ռազմական նախաձեռնությունը՝ ԻՊ ուժերը հուլիսի 22-23-ը փայլուն ռազմագործողության շնորհիվ լուծեցին Աղդամի խնդիրը: Այդ փաստը դժկամությամբ ընդունեց միջազգային հանրությունը[3]: Կատարվածը շշմեցուցիչ հարված էր Ադրբեջանի ռազմական մեքենային: Աղդամի կորստից հետո Ադրբեջանը հարկադրված էր գնալ ԼՂՀ-ի հետ ուղղակի շփումների:

Հուլիսի 28-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի ճակատային գծում կայացավ ԱՀ եւ ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների հանդիպումը: Հանգամանալի քննարկումներից հետո վերահաստատվեց հրադադարի մասին մի քանի օր առաջ ձեռք բերված պայմանավորվածությունը: Քննարկվեցին նաեւ երկու հանրապետությունների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպման հնարավորության, ռազմագերիներին եւ պատանդներին առնչվող հարցեր: Սակայն հաջորդ օրը Ադրբեջանը դարձյալ հրաժարվեց իր ստանձնած պարտավորություններից[1]:

Պետք է կարծել, որ Ադրբեջանի համար նման մարտավարություն որդեգրելու որոշակի հիմքեր էին տալիս միջազգային հանրության ադրբեջանամետ գործողությունները ղարաբաղյան հակամարտության կարգավորման ասպարեզում: Այդ գործողություններից մեկն էլ ՄԱԿ-ի ԱԽ-ի հուլիսի 29-ին կատարած անդրադարձն էր ԼՂՀ-ում տեղի ունեցած վերջին իրադարձություններին, երբ ընդունվեց N 853 բանաձեւը[2]: Այդ փաստաթուղթը, ինչպես եւ նախորդը, նույնպես ադրբեջանամետ էր:

Այդ կապակցությամբ, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը նամակ հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալիին, որտեղ մասնավորապես ասվում էր. «...ԼՂՀ-ն ստիպված է ափսոսանքով արձանագրել, որ ՄԱԿ-ի ԱԽ N 853 բանաձեւն ընդունվել է ոչ ստույգ եւ կողմնապահ տեղեկությունների հիման վրա: Մենք ցանկանում ենք գոնե հուսալ, որ N 853 բանաձեւը, որի մեջ տեղ են գտել Թուրքիայի Հանրապետության ներկայացուցիչների կողմից առաջարկված մի շարք ձեւակերպումներ, չի ծախողի վերջին ժամանակներս սկսված՝ Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի ղեկավարությունների ներկայացուցիչների միջեւ ուղղակի երկկողմանի կապերի հաստատումը: Այս կապակցությամբ եւս անհրաժեշտ եմ համարում դիմել Ձեզ, պարոն գլխավոր քարտուղար, խնդրանքով՝ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ ուղարկել ԼՂ, որպեսզի նա տեղում ծանոթանա իրադրությանը եւ կարողանա տարածաշրջանի իրադարձությունների մասին անկողմնակալ տեղեկություններ տալ

[1] «Հայաստանի Հանրապետություն», 03.07.1993թ.:
[2] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 127-128:
[3] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 721:

[1] «Երկիր», 30.07.1993թ.:
[2] http://www.un.org/russian/documen/scresol/res1993/res853.htm

Անվտանգության խորհրդին՝ հենվելով սեփական դիտարկումների եւ տրված հավաստի տեղեկությունների վրա: ԼՂ ղեկավարությունը վստահություն է հայտնում, որ միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ի անկախության ճանաչումը կարագացներ մեր տարածաշրջանում ռազմական հակամարտության քաղաքական կարգավորումը...»[1]

Ինչպես տեսնում ենք, միջազգային հանրությունը ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում՝ ճնշում գործադրելով ՀՀ եւ ԼՂՀ իշխանությունների վրա: Եվ դա թեւ էր տալիս Ադրբեջանի ղեկավարությանը՝ օրեցօր ընդլայնելու ռազմական գործողությունները՝ հույս ունենալով, թե հայկական կողմը տեղի կտա ռազմական ու դիվանագիտական ճնշման տակ: Սակայն ԻՊ ուժերը իրենց առջեւ հստակ նպատակ էին դրել ոչ միայն ճնշել ադրբեջանական բանակի կրակակետերը, այլեւ ազատագրել հինավուրց հայկական հողերը: Եվ նրանք օգոստոս ամիսը նշանավորեցին մի շարք հաջող ռազմագործողություններով: Այսպես, երբ թշնամին, օգոստոսի սկզբներին նախահարձակ լինելով, մարտական գործողություններ ծավալեց, հիմնականում՝ Ջաբրայիլի ուղղությամբ, Ի-ՊՈՒ-ն գրագետ հակահարձակողական գործողությունների շնորհիվ ոչնչացրեց հակառակորդի մի շարք ռազմակայաններ, որոնք տեղակայված էին այդ շրջանի տարածքում: Իսկ օգոստոսի 16-ին ադրբեջանական բանակը Մարտունու շրջանի հարավային, Հադրութի շրջանի արեւելյան սահմանների ուղղությամբ հարձակում ձեռնարկեց Ֆիզուլիի շրջանից: Այստեղ էլ ԻՊՈՒ զորամասերին հաջողվեց ոչ միայն պաշտպանել իրենց դիրքերը, այլեւ մարտերի ընթացքում ազատագրել Հադրութի շրջանի հարավային՝ նախկինում բռնազավթված մի շարք գյուղեր[2]:

[1] «Երկիր», 06.08.1993թ.:
[2] http://www.nkr.am/arm/history/voina.htm

Օգոստոսի երկրորդ կեսերին մարտեր ծավալեցին Ֆիզուլի-Ջաբրայիլ-Ղուբաթլու գծի ամբողջ երկայնքով, եւ, չդիմանալով ԻՊՈՒ զորամասերի ճնշմանը, ադրբեջանական զորքերը օգոստոսի 22-ին թողեցին Ֆիզուլի քաղաքն ու համանուն շրջանը: Հաջորդ օրը, զարգացնելով հարձակումը, ղարաբաղյան զորքերը մտան Ջաբրայիլ շրջկենտրոնը, իսկ եւս երկու օր անց՝ իրենց վերահսկողության տակ առան այդ շրջանի ամբողջ տարածքը: Այս հաջողությունների շնորհիվ օգոստոսի 26-ին, վերջապես, լիովին ազատագրվեց ԼՂՀ Հադրութի շրջանը: Սակայն ադրբեջանական կողմը հապճեպ ձեռնարկած հակահարձակողական գործողություններով ձգտում էր ինչ-որ կերպ փոխհատուցող ճեղքումներ կատարել Լաչինի մարդասիրական միջանցքից դեպի հարավ ընկած ղարաբաղյան պաշտպանական գծում եւ այդ փորձը ձեռնարկեց օգոստոսի 29-ին, սակայն, հետ շպրտվելով ԻՊՈՒ ստորաբաժանումների հուժկու հարվածների տակ, ադրբեջանական կազմավորումները լիակատար խուճապի մատնվեցին: Նրանք հարկադրված եղան օգոստոսի 31-ին թողնել նաեւ Ղուբաթլու շրջկենտրոնը[1]:

Ընդամենը մեկ ամսվա ընթացքում կորցնելով երեք շրջան, ադրբեջանական զինուժը կանգնեց լիակատար կրախի եզրին: Ադրբեջանի ղեկավարությունը, հավանաբար, մինչեւ Ղուբաթլուի կորուստն էր սկսել ջանքեր գործադրել դիվանագիտական ճանապարհով կազդեցնելու ԻՊ ուժերի հաղթարշավը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ հենց Ղուբաթլու շրջկենտրոնի անկման օրը ՌԴ ԱԳՆ-ի միջնորդությամբ ԱՀ-ի եւ ԼՂՀ-ի պատվիրակությունների միջեւ համաձայնագիր ստորագրվեց կրակը 10 օրով դադարեցնելու մասին, ինչպես նաեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչեւ սեպտեմբերի 10-ը ԱՀ եւ ԼՂՀ ղեկավարների հանդիպում անցկացնելու վերաբերյալ:

[1] Նույն տեղում:

Համաձայնագիրն ստորագրել են ԼՂՀ-ի կողմից՝ ԱԳ նախարար Ա. Ղուկասյանը եւ ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը, Ադրբեջանի կողմից՝ ԳԽ նախագահի տեղակալ Ա. Ջալիլովը եւ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Ս. Աբիեւը[1]: Առանձնակի ուշադրության է արժանի Ա.Ջալիլովին ԱՀ եւ ԼՂՀ ղեկավարների հանդիպումը կազմակերպելու մասին բանակցություններ վարելու համար լիազորող փաստաթուղթը, որը ստորագրված էր, ինչպես նշված է նրա մեջ՝ «ԱՀ նախագահի լիազորություններն իրականացնող, ԱՀ ԳԽ նախագահ Հեյդար Ալիեւի» ձեռքով: Ահա 1993թ. սեպտեմբերի 3-ի թվագրությամբ 171 համարը կրող այդ փաստաթուղթը. «Ադրբեջանի ղեկավարությունը ԳԽ նախագահի տեղակալ Ա. Ջալիլովին լիազորում է բանակցություններ վարել Ադրբեջանի եւ ԼՂՀ ղեկավարների հանդիպում կազմակերպելու մասին»[2]:

Տարօրինակ է, որ այս փաստաթուղթը, որը Հ. Ալիեւի կողմից ԼՂՀ-ի փաստացի ճանաչման անժխտելի վկայությունն է, երկար ժամանակ դուրս է մնացել ինչպես ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարների ու դիվանագետների, այնպես էլ ղարաբաղյան հիմնահարցով զբաղվող պատմաբանների ուշադրությունից: Մինչդեռ, համոզված ենք, որ եթե ադրբեջանական կողմի շահերին նպաստող նման մի փաստաթուղթ հայտնվեր ադրբեջանցի դիվանագետների ձեռքում, նրանք չէին հապաղի՝ այն օգտագործել որպես իսկական հաղթաթուղթ:

Այսպես, սեպտեմբերի 12-13-ը տեղի ունեցան նախատեսված ադրբեջանա-ղարաբաղյան բանակցությունները, որոնք վարում էին՝ ադրբեջանական կողմից՝ Ա. Ջալիլովը, իսկ ԼՂՀ-ի կողմից՝ Ա. Ղուկասյանը: Ընդունվեց համատեղ կոմյունիկե, ըստ որի՝ հրադադարի համաձայնագիրը երկարաձգվեց 20 օրով (մինչեւ հոկտեմբերի 5-ը)[1]:

Սեպտեմբերի 20-ին Ստեփանակերտ ժամանեց ԱՊՀ երկրների Միջխորհրդարանական միության պատվիրակությունը եւ հանդես եկավ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիների առաջարկությամբ, իսկ սեպտեմբերի 23-ին Աղդամի շրջանի ռազմաճակատի գծում տեղի ունեցավ ԼՂՀ եւ ԱՀ փոխվարչապետների հանդիպումը (Ժ. Պողոսյան եւ Ա. Աբասով)[2]: Արծարծվեցին հիմնականում ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի էներգետիկ ու տրանսպորտային շրջափակումներին վերաբերող հարցեր: Այլ մակարդակներով եւս դիվանագիտական քայլեր ձեռնարկվեցին, սակայն այդ ամենը ձեւական բնույթ կրեց, եւ այդ քայլը երեւի սոսկ ժամանակ ու հնարավորություն էր ընձեռում հակառակորդին՝ վերախմբավորել ուժերը:

Սեպտեմբերի 24-28-ը Փարիզում տեղի ունեցան ԵԱՀԽ Մինսկի խմբի ոչ պաշտոնական խորհրդակցություններ, որոնց մասնակցում էին ՀՀ-ի կողմից՝ Ժ. Լիպարիտյանը, ԼՂՀ-ից՝ Ա. Ղուկասյանը: ԵԱՀԽ Մինսկի խումբը կողմերին առաջարկեց «ՄԱԿ-ի ԱԽ-ի N 822 բանաձեւի կատարման անհետաձգելի միջոցառումների նորացված ժամանակացույցը», որը սկզբունքորեն տարբերվում էր նախորդներից: Այն ընդունելու եւ հոկտեմբերի 7-ին դրական պատասխան տալու առաջարկությամբ ԼՂ գծով ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահ Մ.Ռաֆայելին սեպտեմբերի 29-ին նամակ հղեց ԼՂՀ ղեկավարությանը: Սակայն Փարիզում ընդունված այդ

[1] «Երկիր», 01.09.1993թ.:
[2] ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ:

[1] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 193:
[2] «Երկիր», 24.09.1993:

փաստաթուղթը չստացավ հակամարտության կողմերի աջակցությունը[1]:

Հետագայում ասպարեզ եկավ մի նոր՝ ՄԱԿ-ի ԱԽ 1993 թվականի հոկտեմբերի 14-ի 874 բանաձեւը, ուր հակամարտության կողմերին երաշխավորվում էր ԵԱՀԽ Մինսկի խմբի նախապատրաստած «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»[2]: Սակայն տվյալ բանաձեւը հիմնախնդրի լուծումը ռազմական հունից քաղաքականի փոխադրելու առումով ոչ մի գործնական արդյունք չտվեց: Նախ, որ այդ բանաձեւը նույնպես չէր արտացոլում ղարաբաղյան հակամարտության բուն էությունը, երկրորդ՝ խախտելով հրադադարի մասին ձեռք բերված համաձայնագիրը, որը պահպանվեց ոչ լրիվ մեկուկես ամիս, հոկտեմբերի 10-ի գիշերը Ադրբեջանը մարտական գործողությունները վերսկսեց ռազմաճակատի Հադրութի հատվածում:

Դա արդեն Ադրբեջանի կողմից, մեղմ ասած, իսկական ապտակ էր ոչ միայն ռուսաստանյան, այլեւ միջազգային միջնորդական առաքելություններին: Այդուհանդերձ, Մինսկի խմբի երկրները հոկտեմբերի 21-ին կոչ արեցին ԼՂ հակամարտության շահագրգիռ կողմերին՝ երկարաձգել ժամանակավոր զինադադարի համաձայնագիրը[3]: Հակառակ դրան, ադրբեջանական բանակի զորամասերը նոր հարձակում սկսեցին Հադրութ-Զաբրայիլ ուղղությամբ՝ կրկին սպառնալիքի տակ դնելով Հադրութ ավանի եւ մերձակա գյուղերի բնակչության անվտանգությունը: ԻՊ ստորաբաժանումները, կասեցնելով հակառակորդի հարձակումը, հոկտեմբերի 24-ին հակահարձակման անցան ռազմաճակատի հարավային ուղղությամբ՝ ճնշելով նրա մի շարք խոշոր կրակակետեր, մասնավորապես՝ Հորադիզ բնակավայրի կրակակետերը: Գրավելով այդ ռազմակայանը՝ ղարաբաղյան ուժերը Ադրբեջանից մեկուսացրին Զանգելանի շրջանը, Զաբրայիլի եւ Ղուբաթլուի շրջանների մի մասը, իսկ նոյեմբերի 1-ի առավոտյան իրենց վերահսկողության տակ վերցրին Զանգելան շրջկենտրոնը՝ հարակից բնակավայրերի հետ միասին[1]:

Նոյեմբերի 2-8-ը Վիեննայում կայացավ ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդակցությունը, եւ ընդունվեց մի նոր ադրբեջանամետ բանաձեւ՝ 844-րդը: Այն հանձնարարում էր ՀՀ-ին՝ իրականացնել ՄԱԿ-ի ԱԽ-ի 822-րդ, 853-րդ, 874-րդ բանաձեւերը եւ վերադարձնել հայկական ուժերի կողմից նոր զբաղեցված տարածքները: Կողմերը պատասխանը պետք է ներկայացնեին նոյեմբերի 22-ին: Նոյեմբերի 12-ին Մ. Ռաֆայելին այդ առնչությամբ նամակ հղեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանին[2]:

Սակայն, ի տարբերություն ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի, որոնք տվեցին իրենց համաձայնությունը, Ադրբեջանը մերժեց այդ բանաձեւը[3]:

Նոյեմբերի 30-ին Հռոմում բացված ԵԱՀԽ երկրների արտգործնախարարների համաժողովում քննարկվեց ղարաբաղյան հակամարտության հարցը, սակայն այն նույնպես անարդյունք անցավ Ադրբեջանի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով[4]: Դեռ ավելին, շարունակվեցին ադրբեջանական սադրանքները ղարաբաղյան ռազմաճակատում:

Այսպես, դեկտեմբերի 10-ին ադրբեջանական կողմը հարձակումներ ձեռնարկեց ռազմաճակատի հարավարեւելյան հատվածում, սակայն ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումներին հաջողվեց հետ

[1] http://www.nkr.am/arm/history/voina.htm.
[2] http://www.un.org/russian/documen/scresol/res1993/res874.htm
[3] ՀՀ ԱԳՆ, «ԼՂ-ի աշխատախմբի բյուլետեն», ՄՂ-1 (61), Երեւան, 26.10.1993:

[1] http://www.nkr.am/arm/history/voina.htm.
[2] ԱրՊՀ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ.Հակոբյանի անձնական արխիվ:
[3] «Ազգ», 30.11.1993թ.:
[4] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 739:

մղել հակառակորդի բոլոր գրոհները: Դեկտեմբերի 15-ին Ադրբեջանի Աղջաբեդու շրջանի ռազմակայանից սկսվեց Մարտունու շրջանի բնակավայրերի, այդ թվում՝ Մարտունի քաղաքի զանգվածային հրթիռահրետակոծումը: Դեկտեմբերի 19-ին ադրբեջանական զորքերը՝ տանկերի եւ օդուժի օգնությամբ, կրկին գրոհեցին Մարտունու շրջանի արեւելյան հատվածում գտնվող ղարաբաղյան բանակի դիրքերը: Մինչեւ դեկտեմբերի 26-27-ը հակառակորդը ռազմաճակատի հյուսիսային, արեւելյան եւ հարավարեւելյան հատվածների ամբողջ երկայնքով՝ ավելի քան 30 կմ-ի վրա, անհաջող փորձեր արեց ճեղքելու ղարաբաղյան պաշտպանական գիծը: ԼՂՀ զինված ուժերին հաջողվեց ոչ միայն կասեցնել հակառակորդի գրոհները, այլեւ նրան հետ շպրտել ելման դիրքերը եւ անցնել հակահարձակման, ինչի արդյունքում 1993թ. ավարտին ղարաբաղյան կողմի վերահսկողության տակ անցավ Հորադիզի երկաթուղային հանգույցից մինչեւ ՀՀ պետական սահմանն ընկած ողջ տարածքը: Դա հնարավորություն տվեց ԼՂՀ հարավային սահմանների մոտ ստեղծել անվտանգության գոտի[1]:

Ռազմաճակատում կրելով խոշոր պարտություններ՝ Ադրբեջանի ղեկավարությունը հայտարարեց 18-40 տարեկան տղամարդկանց զորահավաք՝ չնայած այն հանգամանքին, որ ադրբեջանական բանակի կազմում ընդգրկված էին նաեւ վարձկաններ, այդ թվում՝ շուրջ 1,5 հազար աֆղանական մոջահեդներ: Այդ փաստը մեկ անգամ չէ, որ հաստատել են նաեւ միջազգային դիտորդները: Պատերազմին Ադրբեջանի կողմից վարձկանների մասնակցության մասին են վկայում ղարաբաղցի զինվորներին որպես ռազմավար մնացած մոջահեդների անձնական փաստաթղթերը,

[1] http://www.nkr.am/arm/history/voina.htm

ռազմական քարտեզները, նամակներն ու լուսանկարները, բառարանները, ազգային տարադրամը[1]:

1994թ. սկզբներին Ադրբեջանը մեկ անգամ եւս փորձեց բեկում մտցնել պատերազմում՝ ռազմաճակատով մեկ ակտիվացնելով հարձակողական գործողությունները: Ծանր մարտեր ծավալվեցին Օմարի լեռնանցքից մինչեւ Արաքս[2]: Անտեսելով վիթխարի կորուստները՝ հակառակորդը չէր հրաժարվում իր պլաններից: Առաջին օրերին ազերիները որոշակի հաջողություններ ունեցան Քելբաջարի հատվածում՝ հասնելով մինչեւ Թարթառի հովիտը, իսկ հարավում՝ ձեռք գցելով Հորադիզը: Ապահովելով պաշտպանությունը եւ իրականացնելով հակահարձակողական մի շարք հաջող գործողություններ՝ ԼՂՀ զորքերը փետրվարի սկզբներին ձեռնամուխ եղան հակառակորդի քելբաջարյան խմբավորման ոչնչացման ռազմագործողություններին: Փետրվարի 18-ին այդ շրջանի հյուսիսային հատվածը՝ ներառյալ Օմարի լեռնանցքը, լիովին անցավ ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ: Այդպիսով՝ Քելբաջարի շրջանը ամբողջովին ազատագրվեց ԼՂՀ ՊԲ-ի կողմից:

Փետրվարի վերջին եւ մարտի սկզբներին հիմնական մարտերը ծավալվեցին Հորադիզի ուղղությամբ՝ ռազմաճակատի հարավարեւելյան հատվածում, որտեղ հակառակորդի զորքերը զրահատանկային ուժերի, հրետանու եւ օդուժի աջակցությամբ փորձում էին ճակատային հատվածից ճեղքել արցախցիների պաշտպանությունը եւ առաջ շարժվել դեպի Ֆիզուլի, սակայն՝ ապարդյուն:

Հաջողությունը ՊԲ զորամասերին ուղեկցում էր նաեւ ռազմաճակատի հյուսիսարեւելյան հատվածում, որտեղ ապրիլի 10-ին

[1] «Երկիր», 11.01.1994թ.:
[2] http://www.nkr.am/arm/history/voina.htm.

ծավալած հակահարձակողական գործողությունների շնորհիվ նրանք տիրացան Գյուլիստան-Թալիշ հատվածի մի շարք կարեւոր ռազմավարական բարձունքների: Պաշտպանության բանակը ապրիլի կեսերին ազատագրեց Մարտակերտի շրջանի հայկական Լեւոնարխ, Մատաղիս եւ Թալիշ գյուղերը: Իսկ մինչ այդ ռազմաճակատի հարավարեւելյան ուղղությունում նրանք վերահսկողության տակ էին վերցրել Աղդամ-Բարդա մայրուղին:

Այսպիսով՝ ռազմական անընդմեջ պարտությունները Ադրբեջանին հարկադրեցին ընդունել ՌԴ-ի կողմից արված հրադադարի առաջարկը: Մայիսի 5-ին Ռուսաստանի, Կիրգիզիայի եւ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Կիրգիզիայի մայրաքաղաք Բիշքեկում ԱՀ-ն, ԼՂՀ-ն եւ ՀՀ-ն ստորագրեցին հրադադարի մասին մի արձանագրություն[1], որը ղարաբաղյան հակամարտության կարգավորման պատմության մեջ մտավ «Բիշքեկյան» անվամբ:

Հակամարտող կողմերն իրենց պատրաստակամությունը հայտնեցին դադարեցնել ռազմական գործողությունները, ինչը իրականացվեց մասնակիորեն: Այդ օրերին դեռ շարունակվեցին մարտական գործողությունները ղարաբաղա-ադրբեջանական ռազմաճակատի առանձին հատվածներում[2]:

Միջպետական պայմանագրի իրավական բնույթ ունեցող Բիշքեկյան արձանագության իրավաբանական ձեւակերպման նպատակով, մայիսի 16-ին Մոսկվայում, ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի հովանու ներքո եւ մասնակցությամբ, բանակցություններ սկսվեցին մի կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի, ԼՂՀ ՊԲ հրամանատար Ս. Բաբայանի եւ մյուս

[1] Барсегов Ю, Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, том 1, Москва, 2008, с. 744-745.
[2] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 153:

կողմից՝ ԱՀ պաշտպանության նախարար Մ. Մամեդովի միջեւ: Բանակցությունների ընթացքում առաջարկվեց ստորագրել համաձայնագիր 1994թ. մայիսի 17-ի 00 ժամից կրակը դադարեցնելու մասին, նաեւ նախատեսված էր ղարաբաղյան եւ ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջեւ բուֆերային գոտու ստեղծում եւ այնտեղ խաղաղարար ուժերի տեղակայում[1]: Փաստաթուղթը ստորագրեցին ՌԴ եւ ՀՀ պաշտպանության նախարարներ Պ. Գրաչովն ու Ս. Սարգսյանը, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը: Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովը փաստաթուղթը չստորագրեց. նրան շտապ հետ կանչեցին Բաքու: Թեպետ Ադրբեջանը հրաժարվեց ստորագրել Մոսկովյան համաձայնագրի ամփոփիչ արձանագրությունը, որով ղարաբաղյան հակամարտության գոտում սկիզբ առավ տեւական հրադադարը, հետագայում՝ հուլիսի 27-ին, Մ.Մամեդովը ստիպված իր ստորագրությունը դրեց հրադադարի համաձայնագրի տակ[2]:

Այսպիսով՝ ղարաբաղյան հակամարտությունը թեւակոխեց հերթական՝ բանակցային գործընթացի փուլը: 1994թ. մայիսին հրադադարի հաստատումից հետո ԼՂՀ-ում սկսեցին արմատավորվել կառավարման ավելի ժողովրդավարական ձեւեր: ԼՂՀ ԳԽ-ն դադարեցրեց ՊՊԿ-ի լիազորությունները եւ ընդունեց «ԼՂՀ նախագահի մասին» օրենքը՝ հանրապետությունում հաստատելով նախագահական ինստիտուտ:

[1] "Сегодня", 17.05.1994г.
[2] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 404:

Վերջաբան

Աշխատության մեջ գիտական ուսումնասիրության հարթություն է բարձրացվել երկրորդ հայկական հանրապետության՝ ԼՂՀ-ի հռչակման եւ պետական շինարարության գործընթացի պատմությունը: Փորձ է կատարվել լուծել մի շարք կոնկրետ խնդիրներ, մասնավորապես, ներկայացվել է 1991-1994 թթ. ԼՂՀ պետականության կայացման ուղին, որը դրսեւորվել է պետշինարարական եւ կարեւոր քաղաքական գործընթացների օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների վերլուծության եւ սահմանման փուլերի մեջ:

Կատարելով այսպիսի պարբերացում եւ հանրագումարելով նշված ժամանակահատվածում ԼՂՀ-ում ռազմաքաղաքական գործընթացների եւ պետականության կերտման արդյունքները՝ կարելի է բխեցնել հետեւյալ եզրակացություններն ու դատողությունները.

1. 1991թ. օգոստոսից սկսած՝ ԽՍՀՄ-ի լուծարման գործընթացում նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ում ստեղծվեց յուրօրինակ քաղաքական իրադրություն. նույն հանրապետության տարածքում իրենց գոյությունը հռչակեցին երկու պետություն՝ ԱՀ-ն եւ ԼՂՀ-ն: Հիմնախնդրի իրավական փաթեթը թույլ է տալիս ասել, որ ԼՂՀ-ն միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական կայացած պետություն է, իսկ ԱՀ-ի հավակնությունները ԼՂՀ-ի նկատմամբ ապօրինի են:
2. ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձեւավորման գործընթացը: Պետական եւ ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար, չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: Այդ կառույցների

ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, անցավ միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան: Արցախում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության եւ սաստկացող ռազմագործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, կարողացան ինքնուրույնաբար ստեղծել հիմքերը իրավական եւ ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային եւ պահպանել իր անկախությունը:
3. ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին եւ Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջեւ: Դա կարելի է համարել հայոց ազատագրական պայքարում արցախահայության ամենամեծ ռազմական ու քաղաքական նվաճումներից մեկը եւ կարեւոր գրավական՝ ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:
4. ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը ցույց տվեց, որ ԼՂՀ-ում ոչ միայն չէին մարել ներքաղաքական հակասությունները, այլեւ, կարելի է ասել, դրանք զարգանում էին արդեն կայծակնային արագությամբ: Դրանում կարեւոր դեր են խաղացել ՀՀ-ի ՀՀՇ-ական իշխանությունները, որոնք ամեն գնով ձգտում էին իշխանափոխություն իրականացնել ԼՂՀ-ում: 1992 թ. հունիս-օգոստոսյան ռազմական անհաջողությունները, այդ թվում եւ Հյուսիսային Արցախում, հետեւանք էին ոչ միայն

ռազմական, այլեւ ներքին քաղաքական գործոնների: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր եւ ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

5. Ժամանակի եւ ստեղծված ռազմաքաղաքական իրադրության հրամայականով արցախյան ազգային-ազատագրական շարժման պատմության ասպարեզ մտած ՊՊԿ-ն կենտրոնացրեց կառավարման համակարգը իր ձեռքում եւ ՀՀ ղեկավարության գործուն աջակցությամբ կարողացավ լուծել իր առջեւ դրված ռազմական խնդիրները՝ ապահովելով երկրի պաշտպանությունը: Նրա ղեկավարությամբ խլելով ռազմական նախաձեռնությունը թշնամուց՝ ԼՂՀ ԻՊՈՒ-ն (ՊԲ-ն) փայլուն ռազմագործողություններով վնասազերծեց հակառակորդի կրակակետերը եւ ազատագրեց մի շարք պատմական հայկական տարածքներ՝ հանրապետության շուրջ ստեղծելով անվտանգության գոտի:

6. ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երեւանի եւ Ստեփանակերտի միջեւ եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարածայնությունները եւ որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգությանը: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա

եւ կարողացավ իշխանափոխություն կատարել ԼՂՀ-ում՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր: Ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսեւորած քաղաքական կամքը եւ պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու երկրի ժողովրդի ապագայի համար:

7. Բանակցային գործընթացի անհաջողությունը պայմանավորված էր նրանով, որ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերից եւ միջազգային մակարդակով ընդունված փաստաթղթերից ոչ մեկը չէր արտացոլում ղարաբաղյան հակամարտության էությունը: Դրանում ոչ վերջին դերը խաղաց նաեւ այն հանգամանքը, որ տարածաշրջանում ստեղծվել էր միջնորդների մրցակցության մթնոլորտ, եւ նրանք, ջանքերը միավորելու փոխարեն, ամեն կերպ փորձում էին շրջանցել մեկը մյուսին՝ իրենց համար ձեռնտու տարբերակ ընդունել տալու նպատակով: Սակայն ԼՂՀ ԻՊՈՒ-ի (ՊԲ) հաջողությունները եւ Ռուսաստանի միջնորդության ակտիվացումը հանգեցրին հակամարտության գոտում տեւական հրադադարի հաստատմանը: Դրան նպաստեց այն, որ Ադրբեջանի իշխանությունները, վախենալով նոր իշխանափոխության, քաղաքական ճգնաժամի, հետեւաբար՝ ռազմական խորտակիչ պարտության վտանգից, ինչպես նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության տակ ստիպված էին համաձայնել հրադադարի պայմաններին:

Այսպիսով՝ ԼՂ-ում պետական շինարարության գործընթացը, հաղթահարելով իր ճանապարհին ծագած վայրիվերումները, շրջանցելով միջազգային ասպարեզում հարուցված դիվանագիտական խոչընդոտները, ադրբեջանական ագրեսիայի դեմ ձեռք բերված վճռական հաղթանակների շնորհիվ հաստատեց իր շարունակական լինելու իրավունքը եւ ԼՂՀ-ում ժո-

ղովրդավարական պետության կառուցման ու կայացման ուղղությամբ վերցրեց:

ԼՂՀ-ի հռչակման եւ 1991-1994 թթ. պետական շինարարության գործընթացի ամբողջական ուսումնասիրությամբ՝ աշխատությունում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ արժեքավոր փաստաթղթեր, արխիվային նյութեր եւ ականատեսների վկայություններ: Այդ ամենը կծառայի խնդրո առարկա թեմայով հետագա ուսումնասիրություններին եւ մեծապես կօգնի ճիշտ կողմնորոշվել ԼՂՀ պետականության պատմությունը լուսաբանելու մի շարք ելակետային հարցերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

1.1 Արցախի պետական համալսարան, հայագիտական կենտրոն, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ.-Հակոբյանի անձնական արխիվ:

1.2 ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության տրամադրության տակ եղած նյութեր:

1.3 ԼՂՀ Աժ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992 թ. փետրվարի 17-ի նիստի արձանագրություն (N 7), 1992 թ. մարտի 24-ի նիստի արձանագրություն (N 15), 1992 թ. ապրիլի 3-ի նիստի արձանագրություն (N 16), 1992 թ. մայիսի 11-ի նիստի արձանագրություն (N 22), 1992 թ. մայիսի 13-ի նիստի արձանագրություն (N 23), 1992թ. մայիսի 19-ի նիստի արձանագրություն (N 25), 1992 թ. մայիսի 23-ի նիստի արձանագրություն (N 26), 1992 թ. մայիսի 26-ի նիստի արձանագրություն (N 27), 1992 թ. հունիսի 18-ի նիստի արձանագրություն (N 32), 1992 թ. հունիսի 27-ի նիստի արձանագրություն (N 34), 1992թ. հուլիսի 27-ի նիստի սղագրություն (N 44):

1.4 ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի նախկին մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանի անձնական արխիվ:

1.5 ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ԼՂՀ ՆԽ մարտի 26-ի նիստի արձանագրություն (N 3), ՊՊԿ-ի նախագահի 1993 թ. ապրիլի 29-ի որոշում (N 197), ՊՊԿ-ի նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի որոշում (N 323), ՊՊԿ-ի նախագահի 1993 թ. հուլիսի 23-ի որոշում (N 256):

1.6 ԼՂՀ պետական արխիվ, ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 1, կապ 1, թերթ 5-46, պ.մ. 2, կ.1, թ. 4-66, պ.մ. 3, կ.1, թ. 46 -66, պ.մ. 4, կ.1, թ. 9-47, պ.մ. 5, կ.1, թ. 4-5, պ.մ. 6, կ.1, թ. 10-74, պ.մ. 7, կ.1, թ. 38-67, պ.մ. 8, կ.1, թ. 61-71, պ.մ.12, կ.1, թ. 45-46, g.4, պ.մ.1, կ.1, թ. 50-98, g.4, պ.մ. 2, կ.1, թ. 41-65:

2. Մենագրություններ եւ ժողովածուներ

ա) հայերեն

2.1 Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երեւան, «Ամարաս», 2001, 238 էջ:

2.2 Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը. (1917-2000), գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2007, 744 էջ:

2.3 Աբրահամյան Հ:, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար). Փաստաթղթեր, Երեւան, 2011, «Գիտություն», 196 էջ:

2.4 Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս., Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի, ագրեսիայի իրավաքաղաքական հետեւանքները եւ դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Երեւան, 2007, «Նաիրի», 290 էջ:
2.5 Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար. 1985-1992 թթ., Երեւան, «Լինգվա» 2004, 245 էջ:
2.6 Արցախի հետ, Ղարաբաղի համար, Պերյուք, «ՀՅԴ Լիբանանի կենդ.կոմիտէի հրատ», թիւ 3, 1990, 250 էջ:
2.7 Առստամյան Գ., Ստեփանակերտ. փառքի հուշամատյան 1988-2004, Երեւան, «Ամարաս», 2005, 332 էջ:
2.8 Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը եւ միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երեւան, «Գասպրինտ», 2004, 183 էջ:
2.9 Բալայան Զ., Դժոխք եւ դրախտ, Երեւան, 1995, 591 էջ:
2.10 Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Երեւան, «Ամարաս», 2002, 417 էջ:
2.11 Բաղդասարյան Դ., Դիմակայություն, Երեւան, «Մխիթար Գոշ», 1998, 176 էջ:
2.12 Բաղրյան Վ., Ավո. հուշապատում, Ստեփանակերտ, «Մաշտոց», 1993, 48 էջ:
2.13 Բաղրյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, «Սոնա», 1998, 272 էջ:
2.14 Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր.Մարտակերտ 92, Վավերագրություն, Գիրք 1, Երեւան, «Ասողիկ», 2000, 405 էջ:
2.15 Գազանճեան Կ., Հայաստանի Հանրապետութեան առաջին երկու տարիները, Պէյրութ-Լիբանան, «Օֆսեթ Տօնիկեան», 1997, 606 էջ:
2.16 Դանիելյան Ա., Բեկորը ինչպիսին որ կար, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ», 2000, 56 էջ:
2.17 Դանիելյան Կ., Արցախը չսանձած նժույգ, Երեւան, 2001, «Ամարաս», 240 էջ:
2.18 Դավթյան Բ., Բաղդասարյան Ն., Դաս հայրենյաց, Երեւան, «Նաիրի», 1997, 88 էջ:
2.19 Եսայան Է., Բույլ նահատակաց, Երեւան, «Ամարաս», 1996, 104 էջ:
2.20 Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, պատմական, աշխարհագրական, ազգաբաշխական, պատմաճարտարապետական տուեալներ, Անթիլիաս, «Հայ տիպ քոմփիկրաֆ», 1992, 67 էջ:
2.21 Հայաստանի ազատագրված տարածքը եւ Արցախի հիմնախնդիրը. վերլուծական եւ փաստագրական նյութերի ընտրանի,ժողովածու, Երեւան, «Լուսակն», 2006, 372 էջ:
2.22 Հասրաթյան Ս., Գոյամարտ, (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), Ստեփանակերտ, «Ստեփանակերտի պոլիգրաֆձեռնարկության հրատարակչության կենտրոն», 1998, 32 էջ:
2.23 Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երեւան, «Ամարաս», 2001, 254 էջ:

2.24 Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկիզբը եւ Շուշիի ազատագրումը, Երեւան, «Գիտություն», 2000, 176 էջ:
2.25 Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը եւ պաշտպանության բանակի մարտական ուղին.1991-1994 թթ.: Պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Երեւան, 2001, 196 էջ (տես՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):
2.26 Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. հողը կանչում է, գիրք Բ, Երեւան, «ԴԱԼԼ», 2005, 700 էջ:
2.27 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994թթ., (Հանրագիտարան 1 հատորով), (Հ. Մ. Այվազյան գլխ. խմբ. տնօրեն եւ ուրիշներ), Երեւան, «Հայկ. հանրագիտարան», 2004, 864 էջ:
2.28 Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Երեւան, «Գասպրինտ», 2003, 174 էջ :
2.29 Նանագուլյան Ս., Արծիվները բարձունքներ են ստեղծում, Երեւան, «Մանկավարժ», 1992, 146 էջ:
2.30 Պետրոսյան Ա., Արթուր Մկրտչյան, Երեւան, «Զանգակ-97», 2004. 304 էջ:
2.31 Պետրոսյան Ռ, Արցախ. պատերազմ. զինադադար, Երեւան, «Ամարաս», 2001, 274 էջ:
2.32 Սարենց Մ., Բեկոր, Երեւան, «Արցախականչ», 1994, 94 էջ:
2.33 Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997, 822 էջ:
2.34 Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն եւ ընտրությունները (1991-1998), Ստեփանակերտ, «Սոնա», 1998, 62 էջ:

բ) ռուսերեն

2.35 Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, Москва, "Международные отношения", 2004, 165 с.
2.36 Арутюнян В., События в Нагорном Карабахе. Хроника. Часть I: Февраль 1988г. – январь 1989г. Ереван, "АН Арм. ССР", 1990, 168 с., Часть II: Январь-декабрь 1989г. Ереван,"АН РА", 1993, 400 с. Часть III: Январь-декабрь 1990г. Ереван, "НАН РА", 1993, 297 с., Часть IV: Январь 1991 г. – январь 1993г. Ереван, "Гитутюн" НАН РА, 1994, 247 с., Часть V: Январь 1993г. – июль 1995г. Ереван, "Гитутюн" НАН РА, 1997, 511 с., Часть VI: Июль 1995г.- май 1997г., "Наири", 1997, 306 с.
2.37 Бальян Г., Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека. Серия книг N 1. Ереван, "Микаэл Варданян", 1991, 72 с.
2.38 Барсегов Ю, Право на самоопределение – основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ереван, "Айастан", 1989, 102 с.
2.39 Барсегов Ю, Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, том 1, Москва, "Кругъ", 2008, 944 с.

2.40 Ваал де Т., Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, "Текст", 2005, 413 с.
2.41 Золян С., Мирзоян Г., Нагорный Карабах и вокруг него... Глазами независимых наблюдателей (сборник материалов), Ереван, "Луйс", 1991, 567 с.
2.42 Золян С. Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, "Лингва", 2001, 306 с.
2.43 Крылов А., Нагорный Карабах; в геополитическом контексте XXI века, Москва, "Акад. гуманитар. исслед.", 2006, 88 с.
2.44 Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, "Амарас", 1997, 126 с.
2.45 Манасян А., Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Ереван, "Нораванк", 2005, 216 с.
2.46 Манасян А., Карабахский конфликт: на фронтах информационной или последний "Аккорд", 2005 года, Степанакерт, "АрГУ", 2006, 47 с.
2.47 Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения НКР. Факты и комментарии, Ереван, " Наири", 1997, 296 с.
2.48 Нагорный Карабах, историческая справка, Ереван, " АН Арм.ССР", 1988, 94 с.
2.49 Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, Ереван, "АН Армении", 1992, 755 с.
2.50 Нагорно-Карабахская Республика: Путь к вершинам. Степанакерт, "МИД НКР", 2001, 221 с.
2.51 Оганесян Н., Карабахский конфликт: этапы, подходы, варианты решения, Ереван, 1997, 80 с.
2.52 Саркисян М., Нагорный Карабах: война и политика (1990-1993гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе, Ереван, 2010, 219 с.
2.53 Ступишин В., Моя миссия в Армению, Москва, "ACADEMIA", 2001, 295 с.

գ) օտար լեզուներով

2.54 Institute for Civil Society and Regional Development, "The Resolution of Karabakh Conflict: Principles, Aspects and Assessments"(The Analytical Survey), Yerevan, "Amaras", 2002, 88 pages.

3. Պարբերական մամուլ, ամսագրեր, լրատվական գործակալություններ

ա) հայերեն

3.1 «Ազատ մամուլ» լրատվական գործակալության Ստեփանակերտի գրասենյակ, առօրյա լուրերի ամփոփաթերթիկ, 10.11.1992:
3.2 «Ազգ», 30.11. 1993:
3.3 «Այժմ», 22-28.05.1996:
3.4 «Արցախ», 1992 -1993:
3.5 «Երկիր», 1992 -1993:
3.6 «Հայաստանի Հանրապետություն», 1991 - 1993:
3.7 «Սովետական Ղարաբաղ», 1988:

բ) ռուսերեն

3.8 "Бакинский рабочий", 1992.
3.9 "Голос Армении", 1993.
3.10 "Независимая газета", 1992.
3.11 "Правда" 1988.
3.12 "Сегодня" 1994.
3.13 "Экспресс-хроника", 1995.

4. Ինտերնետային կայք էջեր

4.1 www.nkr.am
4.2 www.nkrusa.org
4.3 www.un.org

ՏԱՐՈՆ ՎԼԱԴԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

(1991-1994թթ.)

Տպաքանակ՝ 500:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում